# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

31ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 22 (1522) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 18, 2011
VOLUME 31, NO. 22 (1522) SATURDAY, JUNE 18, 2011

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104




## ՊՈԼՍՈՅ ԿԱԽԱՂԱՆՆԵՐԸ

Իթթիհատ Թէրաքքը կոչուած աւազակ ոճրագործներու խմբակը Յունիս 2/15-ին (1915) կախաղան հանեց մեր քսան անձնուէր ընկերները, «անկախ եւ ինքնավար Հայաստան մը կազմելու եւ կայսերական երկիրներէն մաս մը օսմ. կառավարութենէն անջատելու» ամբաստանութեամբ:

«Օսմ. Սահմանադրութիւն» կոչուած զաւեշտը սկսելէն առաջին, Իթթիհատի թաքնօրէն կազմակերպած հայաջինջ դաւերը – որոնք Ատանայի ջարդերէն վերջ դիմակազերծուելով հանդերձ՝ տակաւին չըմբռնուեցան ազգին ճակատագիրը վարելու յաւակնութիւնը ունեցողներու կողմէ – ահա այսօր իրենց վայրագ մերկութեամբը կու գան սարսելու հայրենասէր հոգիները:

Կողոպտելու, սպաննելու եւ աւերելու դարաւոր ըղձանքները այսօր նորէն շղթայազերծուեցան, տաճիկ կառավարութեան հրամանով: Ամբողջ ազգ մը իր սեփական հայրենիքէն հանելու եւ անոր ջարդուած բեկորները անապատներու մէջ ցրուելու ոճրազար ծրագիրը եռանդուն կերպով կը հետապնդուի:

Հայկական գոյութեան դէմ դաւադրող արիւնռուշտ խմբակը արդէն շատոնց ի վեր ինքզինքը կը զգար հետապնդուած Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան արգոսեան աչքերէն: Արթնութեան զանգակը արդէն վաղուց հնչած է հայրենանուէր կուսակցութեան կողմէ: Ս. Դ. Հնչակեան Կուսակցութիւնը իր կոչերով, իր բեմերով Իթթիհատի դիւային ծրագիրները մերկացուց, հայկական պահանջը – Հայաստանի Ինքնավարութեան պահանջը – բանաձեւեց եւ ամենի ցուցամատովը գծեց փրկութեան միակ ճամբան – յեղափոխութեան ճամբան:

Այդ աչքերը պէտք էր փորել, այդ ցուցամատը պէտք էր կտրել, անղեկավար հայութիւնը անարգել առաջնորդելու համար դէպի բնաջնջում եւ կործանում: Իր նպատակին հասած ըլլալ կը կարծէ այժմ կախաղան հանելով մեր ընկերները Պոլիս, Կեսարիա եւ ուրիշ վայրերու մէջ:

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութիւնը, իր ուսերուն վրայ առած մեր նահատակ ազգին արիւնոտ ճակատագիրը, քսանըեօթը տարիներէ ի վեր անվհատ կը քալէ ընդվզումի եւ ապստամբութեան սրբազան ճամբէն: Գազան Ապտիւլ Համիտի արիւնոտ տիրապետութիւնն ու երկարամեայ հալածանքներն անգամ չկրցան շեղեցնել զինք իր անդրդուելի եւ անտեղիտալի առաջադրութիւններէն:

Այդ ճամբուն վրայ մեր լաւագոյն ուժերէն շատերը ինկան, բայց իրենց գործը կիսատ չմնաց: Այսօր ինչպէս երէկ, Ս. Դ. Հնչակեան Կուսակցութիւնը, ամուր բռնած յեղափոխութեան դրօշակը՝ դարաւոր թշնամիին դէմ, դարձեալ պատնէշին վրայ է, առաւել քան երբէք կենսունակ եւ վճռական, մինչ իր երէկի հալածիչները՝ հալածուած եւ անհետացած են հրապարակէն:

Մեր այսօրուայ արիւնածարաւ ոսոխներն ալ վերջապէս պիտի խորտակուին յեղափոխութեան անվրիպելի հարուածէն, եւ իրենց աւերի վերածած երկրին վրայ պիտի բարձրանայ ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ:

Ազգային այս Մեծ Իտէալը իրենց սրտին մէջ, անվեհեր խոյանքով կախաղան բարձրացող մեր անձնուրաց ընկերներու խեղդամահ դիակներուն առջեւ իր ամենի ուխտը վերանորոգած, ՀՆՉԱԿԸ դարձեալ կը հնչեցնէ, ամբողջ հայութեան ականջին՝ իր զարթօնքի կոչնակը, – ԿԵՆԱՑ ԵՒ ՄԱՀՈՒ ՍՈՒՐԲ ԺԱՄ ՄԵՐՁԵՆԱՑ:

**«ՀՆՉԱԿ»–1915**

## ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ԱՆԿԱՐԵԼԻ Է ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ ԱՆՑՆԻԼ ԱՌԱՆՑ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ

*Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան յայտարարած է որ, անկարելի է բանակցութիւններու երկրորդ փուլ անցնիլը, եթէ Ղարաբաղի կողմէ համաձայնութիւն չտրուի հիմնարար սկզբունքներու վերաբերեալ:*

*Նման յայտարարութիւն Նալբանդեան կատարած է Յունիս 14-ին, Շուէտի արտաքին գործոց նախարար Քարլ Պիլտի հետ տեղի ունեցած միատեղ ասուլիսի ժամանակ:*

*Յունիսի 8-ին Ստեփանակերտի մէջ ընդունելով ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի համանախագահները, Լեռնային Ղարաբաղի Նախագահ Բակօ Սահակեան շեշտած էր թէ, առանց բանակցութիւններու բոլոր փուլերուն Լեռնային Ղարաբաղի մասնակցութեան կարելի չէ ակնկալել որեւէ բեկում՝ հակամարտութեան լուծման գործընթացին մէջ:*

*Երեքշաբթի օրուայ ասուլիսի ընթացքին, պատասխանելով լրագրողներէն մէկու հարցին, Հայաստանի արտաքին գործոց նախարարը, մասնաւորապէս ըսաւ. – «Նախ եւ առաջ ասեմ, որ ես լիովին համամիտ եմ Նախագահ Բակօ Սահակեանի ասածին՝ անհնար կը լինի անցնել երկրորդ փուլին, եթէ Ղարաբաղի կողմից համաձայնութիւն չլինի հիմնարար սկզբունքների վերաբերեալ: Իսկ երկրորդ փուլը նախատեսում է մշակել, պատրաստել կարգաւորման պայմանագիրը. այդ բանակցութիւններին, միանշանակ, Լեռնային Ղարաբաղը պէտք է մասնակից լինի»:*

*Նալբանդեան այնուհետեւ շեշտեց. – «Մեր համար հիմնաքարը խաղաղ կարգաւորման այն է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն է տէրը իր ճակատագրի»:*

*Այն հարցին, թէ քանի որ խօսուեցաւ «երկրորդ փուլի» մասին, արդեօք Յունիսի վերջերուն Կազանի մէջ տեղի ունենալիք Հայաստանի եւ Ատրպէյճանի Նախագահներու հանդիպումին կ՛ակնկալուի՞ առաջին փուլի աւարտը, Նախարարը ըսաւ, թէ առաջին փուլը կարելի է նկատել աւարտուած միայն այն բանէն յետոյ, երբ Ղարաբաղը նոյնպէս համաձայնութիւն տայ հիմնարար սկզբունքներու վերաբերեալ:*

*Ինչ կը վերաբերի այն խօսակցութիւններուն, թէ համաձայնութիւն ձեռք ձգուած է սահմանին վրայ խաղաղապահ ուժերու տեղակայման մասին, Նախարար Նալբանդեան յայտնեց, որ անոնք սխալ մեկնաբանութիւններ են: «Դուք գիտէք այն վեց դրոյթները, որոնք հրապարակուել էին Նախագահներ Օպամայի, Սարքոզիի եւ Մեդվեդեւի կողմից Լաքուիլայում եւ Մուսկովայում, եւ այդ վեց դրոյթների մէջ կայ նաեւ խաղաղապահ օպերացիա Ղարաբաղի շուրջ, բայց այս խնդիրը երբեւէ վերջին այս*

*Շար.ը էջ 5*

## ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ. «ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆԸ ՈՉ ԱՅՆՔԱՆ ԳՈՆԿՐԷՍԻՆ, ՈՐՔԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՆ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ»

*Հայ Ազգային Գոնկրէսի (ՀԱԿ) առաջնորդ, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան «Հայկական ժամանակ» օրաթերթին տրուած հարցազրոյցի մը ընթացքին ներկայացուցած է իր վերաբերմունքը պատուիրակութիւններու մակարդակով՝ Գոնկրէսի եւ իշխանութեան միջեւ երկխօսութեան գաղափարի նկատմամբ, իշխող Հանրապետական կուսակցութեան դրսեւորած մերժողական կեցուածքին:*

*«Որոշումների կայացման գործում գրոյական դերակատարութիւն ունեցող անձանց կարծիքը տուեալ պարագայում որեւէ նշանակութիւն չունի: Հետեւաբար, քանի դեռ իր տեսակէտը չի արտայայտել Սերժ Սարգսեանը, անիմաստ է այդ մասին որեւէ բան ասել», – ըսած է Տէր-Պետրոսեան աւելցնելով. – «Միայն պէտք է նկատի ունենալ, որ երկխօսութիւնը ոչ այնքան Գոնկրէսին, որքան իշխանութեանն է անհրաժեշտ: Երկխօսութեան չկայացման դէպքում Գոնկրէսը ոչինչ չի կորցնի, այլ զուցէ եւ քաղաքական տեսակէտից շահի: Կորցնողը լինելու է առաջին հերթին իշխանութիւնը: Իսկ մեծ հաշուով մենք բոլորս, այսինքն՝ երկիրն ու ժողովուրդը»:*

*«Մենք մեր քայլը կատարել ենք, որի ճշգրտութեանը, հակառակ «անկախ վերլուծականների» գնահատականներին, մազաչափ անգամ չենք կասկածում: Մնացեալը ոչ թէ մեր, այլ իշխանութեան գլխացաւանքն է: Ուզում են՝ թող երկխօսեն, չեն ուզում՝ մեղքը իրենց վիզը», – եզրափակած է Լեւոն Տէր-Պետրոսեանը:*

*Արձագանգելով Հայ Ազգային Գոնկրէսի առաջնորդի այս յայտարարութեան, Սերժ Սարգսեանի ղեկավարած Հանրապետական կու-*

*Շար.ը էջ 4*

# ԿՈՆԳՐԷՍԸ ՊԷՏՔ Է ԲԱՑԱՅԱՅՏԻ

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Կազանում տեղի ունենալիք Հայ-ռուս-ադրբեջանական բարձր մակարդակի հանդիպումից առաջ բաւական հետաքրքիր է Հայ ազգային կոնգրէսի համակարգող Լեւոն Զուրաբեանի այցը Մոսկուա:*

*Արդեօ՞ք այդ այցը, որ արդէն տեղի է ունեցել, կապուած է Կազանում տեղի ունենալիք հանդիպման հետ: Այսինքն, արդեօ՞ք Ռուսաստանը, որ փորձում է Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացի Հիմնական սկզբունքների ստորագրում գլուխ բերել, փորձում է հանդիպումից առաջ յստակեցնել Հայ ազգային կոնգրէսի դիրքորոշումը: Արդեօ՞ք ռուսները փորձում էին պարզել Հիմնական սկզբունքների ստորագրման հարցում կոնգրէսի պատրաստակամութիւնը՝ աջակցել ստորագրող Սերժ Սարգսեանին:*

*Թէ ո՞րն է կոնգրէսի դիրքորոշումը Ղարաբաղի հարցում, թերեւս այդքան էլ պարզ չէ: Պարզ է, թէ ո՛րն է Լեւոն Տէր-Պետրոսեանի դիրքորոշումը: Բայց արդեօ՞ք Տէր-Պետրոսեանի դիրքորոշումը նաեւ կոնգրէսի դիրքորոշումն է: Երեւի թէ այո, եթէ նոյնիսկ կոնգրէսում լինեն ուժեր, որոնք այլ դիրքորոշում ունեն: Բանն այն է, որ կոնգրէսում որեւէ հարցի վերաբերեալ Տէր-Պետրոսեանի դիրքորոշումից այլ դիրքորոշում արտայայտողները շատ արագ յայտնւում են հենց կոնգրէսի իսկ ակտիւի ակտիւ քննադատութեան ներքոյ:*

*Բայց, արդեօ՞ք Տէր-Պետրոսեանի դիրքորոշումը բաւարար է, որպէսզի Սերժ Սարգսեանը Հիմնական սկզբունքները ստորագրելիս Հայաստանում չունենայ որեւէ այլ խնդիր: Հազիւ թէ: Տէր-Պետրոսեանն ու կոնգրէսն անշուշտ ունեն զգալի հասարակական աջակցութիւն, գուցէ ամենամեծ հասարակական յենարան ունեցող գործիչն ու ուժն է Տէր-Պետրոսեանը: Այդ առումով իհարկէ կը լինեն տարբեր կարծիքներ, շատերը կը վիճարկեն այդօրինակ պնդումները: Բայց, տուեալ պարագայում էականը թերեւս դա չէ՝ թէ արդեօք ամենամեծ հեղինակութիւն եւ ազդեցութիւն ունեցողը Տէր-Պետրոսեանն է, թէ ասենք կան նրանից աւելի հեղինակութիւն եւ ազդեցութիւն ու հասարակական պահանջարկ վայելող գործիչներ եւ ուժեր:*

*Էականն այստեղ այն է, որ Տէր-Պետրոսեանն ու կոնգրէսը դեռ ամենեւին էլ ամբողջ հասարակութիւնը, ու նոյնիսկ հասարակութեան կէսն էլ չեն: Ղարաբաղի հարցում Հիմնական սկզբունքների վերաբերեալ փաստաթղթի ստորագրման դէպքում ինչքան որ հաւանական է, որ Տէր-Պետրոսեանը կ՛ուժեղացնի այդ բանն անող Սերժ Սարգսեանին, թերեւս նոյնքան էլ հաւանական է, որ Տէր-Պետրոսեանը պարզապէս կը թուլանայ դա անող Սերժ Սարգսեանի հետ մեկտեղ եւ կը կրի նրա արածի պատասխանատուութիւնը:*

*Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացի վերաբերեալ Հայաստանի հասարակութեան ամբողջական մօտեցման պատկեր գոյութիւն չունի, յստակ չէ: Բայց այդ պատկերը կարող է յստականալ, երբ իրավիճակը դառնայ առարկայօրէն սահմանային եւ դրուի կամ ստորագրութեան կոնկրետ հարց, կամ լինի արդէն ստորագրութեան փաստ: Այդ դէպքում շատ դժուար է ասել, թէ ի՞նչ գործընթացներ կարող են լինել հասարակութեան մէջ: Ընդ որում, խօսքը քանակական գործընթացների մասին չէ, այլ որակական: Միշտ չէ, որ քանակն է բերում որակի: Պատահում է նաեւ, յատկապէս ճակատագրական պահերին, որ որակն է բերում քանակի: Աւելին, որակ բերող քանակը շատ աւելի թոյլ է, քան որակի բերած քանակը:*

*Այդ պնդումներն իհարկէ չեն կարող միարժէք լինել, բայց որեւէ սկզբունք ստորագրողը, կամ ստորագրութեան հասնելու ակնկալիք ունեցող գերտէրութիւնները, երեւի թէ ճիշդ կ՛անեն Հայաստանի, ու նաեւ Ղարաբաղի հասարակական խորապատկերի բաւական մանրակրկիտ ուսումնասիրութիւն անցկացնեն, մինչ որեւէ ներքաղաքական ստատուս-քվոյի վրայ Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման սցենարներ կազմելը:*

*Անկախութեան տարիների ընթացքում Հայաստանի հասարակութիւնն իհարկէ հասցրել է բաւականին դեգրադացուել, յատկապէս սեփական յաղթանակի արժէքի գիտակցման եւ սեփական երկրի ռազմավարական շահի պատկերացման ու ընկալման տեսանկիւնից: Այդ գործում իհարկէ զգալի դեր են ունեցել Հայաստանի անկախութեանն ուղեկցած կառավարող բոլոր էլիտաները, մէկը միւսին գերազանցելով: Բայց հենց միայն այն, որ Հիմնական սկզբունքները ստորագրող կառավարող էլիտաների համար միջնորդները միշտ էլ փորձում են թիկունք ապահովել, յուշում է, որ Հայաստանում հասարակական դիմադրականութեան ռեսուրսը դեռ սպառուած չէ, եւ դեգրադացիան հասել ու անցել է ուղին, բայց դեռ չի հասել ծուծ:*

*Սակայն, դժուար է նաեւ միարժէք պնդել, որ Կոնգրէսի համակարգողը Մոսկուա էր գնացել Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման սեղանին դրուած տարբերակի հանդէպ ընդդիմութեան լոյալութիւնը յայտնելու համար: Ի վերջոյ, Կոնգրէսը կարող էր նաեւ յայտնել իր անհամաձայնութիւնը եւ Մոսկուային ասել, թէկուզ դա շատ շրջանակներում համարուի հիպոթետիկ, շատ տեսական վարկած, որ չի աջակցի Սերժ Սարգսեանի ստորագրութեանը, անգամ եթէ նա ստորագրի ու հեռանայ՝ ասպարէզը զիջելով ասենք Տէր-Պետրոսեանին:*

*Բայց, այդ դէպքում Կոնգրէսին հարկ է թերեւս գերտէրութիւնների հետ քաղաքականութեամբ զբաղուած լինելով, մէկ մէկ էլ հասարակութեան հետ լինել անկեղծ ու արտայայտուել, թէ ինչն է այդ զբաղուածութեան օրակարգի առանցքը: Կամ, կարելի է գուցէ այդ առանցքն ամբողջութեամբ չբացայայտել: Բայց այն, որ դրանում Ղարաբաղի խնդրի առկայութեան բաղադրիչն ու առաջնահերթութիւնն ունի բացայայտման եւ հասարակութեանը յստակ ներկայացուելու կարիք, թերեւս աներկբայ է:*

*Կոնգրէսը պէտք է հանրութեանն ազնուօրէն եւ անկեղծօրէն տեղեկացնի, թէ օրակարգում կա՞յ արդեօք Ղարաբաղի խնդիր, ի՞նչ բովանդակութեամբ է այդ խնդիրը եւ ի՞նչ օրակարգային առաջնահերթութեամբ: Աւելի կոնկրետ, եւ գուցէ մի քիչ կոպիտ ձեւակերպմամբ եթէ ասեմ, ապա, աւելի ու աւելի աճող մտահոգութիւնների, քննադատութեան եւ նոյնիսկ մեղադրանքների ֆոնին, պէտք է յստակ ասի, թէ արդեօ՞ք կը հանդուրժի Ղարաբաղի հարցում ստատուս-քվոյի փոփոխութեան որեւէ ֆիզիկական կամ փաստաթղթային դրսեւորում, առնուազն մինչեւ Հայաստանում Սահմանադրական կարգի, ժողովրդի իշխանութեան լիարժէք հաստատումը:*

*«ԼՐԱԳԻՐ»*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)

Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $80.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY

# ՓՈԽՈՒԵԼ Է ՀԱՍՑԷԱՏԷՐԸ

*ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ*

*1994 թուականի ամռանը ես հարցազրոյց էի վերցրել ԱԺՄ-ական, ԳԽ նախագահութեան անդամ Դաւիթ Վարդանեանից՝ այն ժամանակ ես վարում էի Պետական հեռուստատեսութեան «Դէմ առ դէմ» շարքը: Դա ուղիղ եթեր էր, եւ դժուար թէ ձայնագրութիւն արուած լինէր, առաւել եւս՝ պահպանուէր, բայց յիշողութեամբ կարող եմ վերականգնել այդ հարցազրոյցից մի հատուած:*

> Նման գործելաոճը, իմ կարծիքով, ռացիոնալ չէ. Նրանք, ովքեր գոնէ տեսականօրէն կարող են ձեզ օգնել, ի սկզբանէ յայտարարւում են թշնամիներ եւ, ի վերջոյ, հենց այդպիսիք էլ դառնում են

*Խօսք գնաց իսկական եւ «գրպանային» ընդդիմութեան մասին, եւ ես հետաքրքրուեցի, թէ, ըստ պարոն Վարդանեանի, որ քաղաքական ուժերն են իսկական, իսկ որոնք՝ «գրպանային» ընդդիմադիր: Պարոն Վարդանեանը խուսափեց կուսակցութիւնների թուարկումից, սակայն ներկայացրեց իր ընդհանուր մօտեցումը խնդրին. Նրանք, ովքեր քննադատում են իշխանութիւններին, բայց չեն պահանջում նախագահի անյապաղ հրաժարականը, նրանք գրպանային ընդդիմադիրներ են: Որովհետեւ՝ եթէ Լեւոնը մի քանի ամիս էլ մնայ իշխանութեան, Հայաստանն այլեւս գոյութիւն չի ունենայ: Իսկ երկիրը կործանումից փրկելու համար, ըստ պատգամաւորի, պէտք է գալ Ազատութեան հրապարակ՝ ԱԺՄ-ի հանրահաւաքի, որը տեղի կ՛ունենայ այսինչ օրը, այսինչ ժամին:*

*17 տարի առաջ ասուած խօսքերը ես յիշեցի՝ ընդգծելու համար, որ արմատական ընդդիմութեան մարտավարութիւնը եւ մտածելակերպը չեն փոխուել: Եւ դա բնական է. թէ ԱԺՄ-ի եւ թէ ՀԱԿ-ի «ծագումնաբանութիւնը» նոյնն է՝ 88 թուականի Շարժումը, որը յաջողել է եւ աւարտուել է իշխանափոխութեամբ: Տարբերութիւնը, սակայն, այն է, որ 88-ի Շարժման լիդերների խօսքի հասցէատէրն էր հասարակութեան առաւել զարգացած, կայացած, ակտիւ մասը, իսկ հետագայ Շարժումների շարժիչ ուժը դարձաւ լիւմպենը, նիւթական հոգսերից եւ տարբեր տեսակի անյաջողութիւններից չարացած զանգուածը: 17 տարում չի փոխուել նաեւ սեփական անկեղծութեան ու ազնւութեան եւ բոլոր մնացածների կեղծաւորութեան եւ «գրպանայնութեան» մասին համոզմունքը:*

*Անցած շաբաթ յայտարարուեց «Ազատ դեմոկրատներ» կուսակցութեան ստեղծման մտադրութեան մասին, եւ ՀԱԿ-ը շտապեց այդ՝ դեռեւս, ըստ էութեան, գոյութիւն չունեցող քաղաքական ուժի հասցէին մի քանի քարոզչական համազարկ արձակել՝ վստահութիւն յայտնելով, որ դա գրպանային, կեղծ, ծախուած եւ իշխանութեան կողմից նախագծուած խումբ է: Չեմ բացառում, որ հենց այդպէս էլ կարող է լինել: Բայց նման մեղադրանքներ հնչեցնելուց առաջ արժէր թերեւս թոյլ տալ, որ այդ խումբը անէր իր առաջին քայլերը: Գուցէ նրանք է՞լ են պահանջում նախագահի անյապաղ հրաժարականը եւ նոյնքան անյապաղ արտահերթ նախագահական ընտրութիւններ: Եւ այդ դէպքում անյարմար բան կը ստացուի. մի քանի օրում «Ազատ դեմոկրատները» «գրպանայինից» կը վերափոխուեն «իսկականի»:*

*Նման գործելաոճը, իմ կարծիքով, ռացիոնալ չէ. Նրանք, ովքեր գոնէ տեսականօրէն կարող են ձեզ օգնել, ի սկզբանէ յայտարարւում են թշնամիներ եւ, ի վերջոյ, հենց այդպիսիք էլ դառնում են: Բայց այդ մօտեցումն ունի իր օբիեկտիւ հիմքերը. ՀԱԿ-ի քարոզչութիւնն ինձ չի ուղղուած, այն ուղղուած է Կլարա Խաչիկովնային:*

*«ԱՌԱՒՕՏ»*

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ՍԱՐԳԻՍ ՀԱՑՊԱՆԵԱՆԸ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒԵՑ



Բանտէն դուրս գալէն ետք, Հացպանեան իր դուստրի հետ

«Վարդաշէն» քրէակատարողական հիմնարկից անցեալ շաբաթ ազատ արձակուեց ֆրանսահայ Սարգիս Հացպանեանը: Նրան դիմաւորեցին ընտանիքի անդամները եւ մի քանի ընկերներ: Հացպանեանին դիմաւորում էր նաեւ Երեւանում Ֆրանսիայի հիւպատոս Ֆրեդերիկ Գրապէնը, ինչպէս նաեւ բանտից համաներմամբ ազատ արձակուած Ազգային ժողովի նախկին պատգամաւոր Սասուն Միքայէլեանը:

Ընդդիմադիր հայեացքներով յայտնի Հացպանեանը, որին Հայ ազգային կոնգրէսը համարում էր քաղբանտարկեալ, սուտ մատնութեան համար դատապարտուել էր 3.5 տարի ազատազրկման եւ անազատութեան մէջ էր 2008 թուականի Նոյեմբերից: Նրա դէմ քրէական գործ էր յարուցուել «Հայկական ժամանակ» օրաթերթի 2008 թուականի Նոյեմբերի 4-ի հրապարակման հիման վրայ, որտեղ Հացպանեանը պնդել էր, թէ Սերժ Սարգսեանի դէմ մահափորձ է նախապատրաստւում՝ ակնարկելով, թէ ում կողմից է նախապատրաստւում դաւադրութիւնը: Խօսքը Ռոբերդ Քոչարեանի եւ նրան յարող ուժերի մասին է, թերթին ասել էր Հացպանեանը:

«Այսօրուայ իմ ազատումը նաեւ Սերժ Սարգսեանի ազատումն է, որովհետեւ այդ մարդը պատանդ է Ռոբերդ Քոչարեանի ձեռքում՝ կոնկրետ իմ հարցի առթիւ: Իշխանութեան տարբեր ոլորտների ներկայացուցիչներ բազմիցս ասել են, որ սա Ռոբերդ Քոչարեանի հրահանգով, պատուէրով է, որ նա ակնկալում էր ինձ մինչեւ վերջին րոպէն պահել: Հէնց դրա համար էլ ես բոլորի [ընդդիմադիրների] միջից մինչեւ այսօր [անազատութեան մէջ] մնացած միակն էի: Եթէ ես հիմա ազատ եմ, նշանակում է նաեւ Սերժ Սարգսեանն է ազատ, այլեւս Ռոբերդ Քոչարեանի ձեռքի տակ լինելու հնարաւորութիւնից երեւի կ՚ազատուի», - ասաց Հացպանեանը «Ազատութիւն» ռադիոկայանին քրէակատարողական հիմնարկից դուրս գալուց անմիջապէս յետոյ:

Հացպանեանը նշեց, որ ազատութեան մէջ գտնուելիս իրեն սպառնում է Հայաստանից արտաքսման վտանգը, քանի որ նախկին նախագահ Ռոբերդ Քոչարեանի 2008 թուականի Մարտի 10-ի կարգադրութեամբ Ֆրանսիայի քաղաքացի հանդիսացող Հացպանեանը 5 օրուայ ընթացքում պէտք է արտաքսուի Հայաստանից:

Վերջին շրջանի ներքաղաքական զարգացումներին անդրադառնալով՝ Հացպանեանը ասաց. - «Եթէ համաժողովրդական շարժումը արտաքսման ենթակայ մարդու քաղաքացիութեան հարցը լուծելու համար Սերժ Սարգսեանի առջեւ իբրեւ նախապայման չդրեց, ես չեմ հաւատայ այդ երկխօսութեանը: Դուք տեսնում էք ինձ դիմաւորողների շարքը: Սա ամէն ինչի մասին չի՞ ասում, երկխօսութեան երկու կողմերն էլ չկան այստեղ, որտե՞ղ են: Ուզում եմ հասկանալ, թէ որտե՞ղ են այդ մարդիկ: 3.5 տարի մի մարդ իմ դուռը խփած կա՞յ, իմ երեխաներին իմ բան հարցրած կա՞յ: Այդ ամբողջը ինձ հետաքրքրող հարցեր են եւ ես դրանք տալու եմ նրանց, ովքեր հիմա բացակայում են այստեղից: Մարդիկ չբարեհաճեցին ասել բարի գալուստ: Դա ցոյց է տալիս իրենց կրած բարոյական արժէքը եւ իմ, մենք այդքան տարբեր ենք իրարից», - ասաց Հացպանեանը:

# ԱՐԱՐԱՏ ԶՈՒՐԱԲԵԱՆԸ ՀՀՇ-ԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԴԻՄՈՒՄ Է ԳՐԵԼ

«Հայոց Համազգային Շարժում» (ՀՀՇ) կուսակցութեան նախկին ղեկավար, վարչութեան անդամ Արարատ Զուրաբեանը դիմում է գրել կուսակցութիւնից դուրս գալու մասին:

Այս տեղեկութիւնը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում հաստատեց ՀՀՇ-ի վարչութեան գործադիր քարտուղար Վահագն Հայոցեանը, յաւելելով, որ կուսակցութեան կենտրոնական գրասենեակը արդէն ստացել է դիմումը:

Մէկ օր առաջ «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում Վահագն Հայոցեանը բացառել էր Արարատ Զուրաբեանի՝ ՀՀՇ-ից դուրս գալը, մասնաւորապէս, ասելով. - «Ձեզ կարծում, որ այն մարդը, ով 20 տարի ներդրել է այս երկիրը կառուցելու գործում, յանկարծ մի փուչ պատճառով դուրս գա ՀՀՇ-ից»:

Դեռ անյայտ է, թէ ինչ պատճառաբանութեամբ է Արարատ Զուրաբեանը լքել կուսակցութիւնը: Կուսակցութեան ղեկավար անդամներն ասում են, թէ դեռեւս չեն հասցրել ծանօթանալ Զուրաբեանի դիմումին: ՀՀՇ-ի ղեկավարութիւնն առայժմ նաեւ ձեռնպահ է մնում որեւէ մեկնաբանութիւն անել Արարատ Զուրաբեանի կուսակցութիւնից դուրս կապակցութեամբ:

Արարատ Զուրաբեանը ՀՀՇ-ի վարչութեան նախագահի պաշտօնից հրաժարական էր տուել մէկ տարի առաջ՝ 2010 թուականի Յունիսին, բայց մնացել էր իբրեւ վարչութեան անդամ: Փաստօրէն ուղիղ մէկ տարի անց լքեց նաեւ կուսակցութիւնը, եւ չի բացառւում, որ առաջիկայում անդամակցի նորաստեղծ «Ազատ ժողովրդավարներ» կուսակցութեանը, որի նախագահը ՀՀՇ նախկին փոխնախագահ Խաչատուր Քոքոբելեանն է: Ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում փոխանցել էր «Ազատ ժողովրդավարներ»-ի փոխնախագահ Անուշ Սեդրակեանը, Արարատ Զուրաբեանը առաջիկայում ամենայն հաւանականութեամբ կը յայտարարի նորաստեղծ կուսակցութեանը միանալու մասին:



ՀՀՇ նախկին ղեկավար Արարատ Զուրաբեան

Արարատ Զուրաբեանից բացի վերջին օրերին ՀՀՇ-ից դուրս են եկել մօտ մէկ տասնեակ շարքային անդամներ, ինչպէս նաեւ ՀՀՇ վարչութեան անդամներ, որոնց մի մասը նոյնպէս միացել է «Ազատ ժողովրդավարներ» կուսակցութեանը:

# ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՈՐՈՇ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ՋՈՀ ԿԸ ԴԱՌՆԱՆ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ

Հանրապետական եւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնների որոշ ներկայացուցիչներ հասկանում են, որ իշխանութիւն-ընդդիմութիւն երկխօսութեան արդիւնքում յայտնուելու են զոհի կարգավիճակում, այլ կերպ, ասած՝ եթէ լիքը տարայի մէջ ուզում ես ջուր լցնել, ապա դրանում եղած ջրից, ուզես, թէ ոչ՝ մի փոքր պէտք է դատարկես: Յունիսի 14-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ նման համեմատական անցկացրեց «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Արմէն Մարտիրոսեանը՝ անդրադառնալով երկխօսութեան հնարաւոր հետեւանքներին:

«Ովքե՞ր կը լինեն այդ մարդիկ, դեռեւս դժուար է ասել, ուղղակի ակնյայտ է, որ վերոնշեալ կուսակցութիւնների թոյլ օղակներն այս առումով խորհելու տեղ ունեն»,- նկատեց նա՝ միաժամանակ չբացառելով, որ զոհի կարգավիճակում յայտնուած կուսակցականները կարող են համախմբուել ինչպէս Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերդ Քոչարեանի, այնպէս էլ քաղաքական այլ ուժերի շուրջ: «Գործողութիւնների շատ սցենարներ են հնարաւոր, եւ այդ առումով զարգացումները դեռեւս առջեւում են»,- համոզմունք յայտնեց պատգամաւորը:

«Ինչ վերաբերում է Հայ ազգային կոնգրէսի՝ երկխօսութեան մասին անձամբ Սերժ Սարգսեանից լսելու պահանջին, ապա երկրի նախագահը նրանց կ՚արձագանքի միայն այն ժամանակ, երբ նպատակայարմար կը գտնի, երբ կը զգայ, որ ինչ-ինչ պայմանաւորուածութիւններ են պէտք կամ մեծանում են արտաքին ճնշումները»,- նշեց ընդդիմադիր պատգամաւորը:

Ամփոփելով՝ Արմէն Մարտիրոսեանն ընդգծեց, որ իշխանութիւն-ընդդիմութիւն երկխօսութիւնը պէտք է լինի ինստիտուցիոնալ շրջանակներում: «Մնացած բոլոր տեսակի պայմանաւորուածութիւնները հասարակութեան թիկունքում կատարուած գործարքներ են»,- ասաց պատգամաւորը:

# ԲՀԿ-Ն ԱԿՏԻՒԱՑԵԼ Է ԳԻՒՄՐԻՈՒՄ

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը Շիրակի մարզում աննախադէպ ակտիւութիւն է դրսեւորում. կուսակցութեան մարզային ղեկավարներն սկսել են բարեգործական ակցիաներ կազմակերպել՝ այցելում են ծննդատուն, ծերանոց եւ այլն: Դպրոցի ԲՀԿ-ական տնօրէնները երեխաների համար տարբեր միջոցառումներ են կազմակերպում, անպայման նշելով, որ դրա հեղինակը Գագիկ Ծառուկեանն է:

Օրինակ, Գիւմրիի 24-րդ դպրոցի ԲՀԿ-ական տնօրէն Յակոբ Յակոբեանն իր դպրոցի երեխաներին տանում է Երեւան՝ գազանանոց, ապա ռեստորան՝ բացատրելով, որ այդ հանդիստը իրենց համար կազմակերպել է ԲՀԿ առաջնորդը:

Այս առնչութեամբ, հանրապետական պատգամաւոր Սուքիաս Աւետիսեանը նշել է, որ կուսակցութիւնները բոլորն էլ ակտիւացել են եւ պատրաստւում են ընտրութիւններին: «Զմոռանանք, որ ցանկացած քաղաքական ուժ ունի ձգտում: Ինչի՞ է ձգտում կուսակցութիւնը, քաղաքական ուժը. բնական է իշխանութեան, որ իշխանութեան մէջ լինի, իսկ առջեւում ընտրութիւններ են»,-NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասել է նա:

# ՄՈՒՐԱԴ ԲՈՋՈԼԵԱՆԸ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒԵՑ

Պատժաժամկէտի աւարտման կապակցութեամբ ազատ արձակուեց 2002 թուականից բանտում գտնուող թուրքագէտ, թարգմանիչ Մուրադ Բոջոլեանը:

Հարազատներից բացի նրան դիմաւորելու էին եկել ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի մի քանի ակտիւիստներ՝ առաւելապէս երիտասարդական թեւից:

Բոջոլեանը Թուրքիայի օգտին լրտեսելու մեղադրանքով 2002 թուականին դատապարտուել էր 10 տարի ազատազրկման: Թուրքագէտը իրեն մեղաւոր չի համարում եւ այդ մասին յայտարարեց նաեւ քրէակատարողական հիմնարկից դուրս գալուց յետոյ:

Յիշեցնենք՝ նրա նախկին պաշտպանը դեռեւս 2002 թուականին յայտարարել էր, որ Բոջոլեանը իր մեղքն ընդունել է այնքանով, որ առանց համապատասխան մարմիններին տեղեակ պահելու՝ համագործակցել է թուրքական TV6 հեռուստաալիքի հետ:

# ԼՈՒՐԵՐ

## ՀԱՅՈՑ ԵՒ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԶԱՒԱԽՔ



Գարեգին Երկրորդ եւ Իլիա Երկրորդ կաթողիկոսները Ախալցխա այցելութեան ժամանակ

Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը եւ Վրաց կաթողիկոս Իլիա Երկրորդը Երկուշաբթի, Յունիս 13-ին այցելեցին Ախալցխա: Քաղաքի կենտրոնում 2 տարի առաջ Թամարա Թագուհու անուամբ կառուցուած եկեղեցու բակում հաւաքուել էին հազարաւոր հայեր ու վրացիներ՝ դիմաւորելու հոգեւոր առաջնորդներին:

Գարեգին Երկրորդը եւ Իլիա Երկրորդը այցելեցին եկեղեցի, մոմեր վառեցին, այնուհետեւ իրենց հայրապետական խօսքով դիմեցին հաւաքուածներին:

Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդը դիմելով հայ եւ վրաց ժողովրդին, մասնաւորապէս, ասաց, որ եկել են ուրախանալու երկու ժողովուրդների եղբայրութեամբ. - «Յատկապէս հայորդիները առիթ ունեն ցնծալու, բերկրալու, որովհետեւ հարիւր տարիներից ի վեր առաջին անգամ իրենց մէջ ունենում են իրենց Հայրապետին»:

Ախալցխա քաղաքում այսօր պաշտօնական տուեալներով ապրում է մօտ 20 հազար մարդ: 1990-ական թուականների տուեալներով, բնակչութեան մօտ 65 տոկոսը հայեր էին: Այսօր գրեթէ կիսով չափ նուազել է նրանց թիւը: Շատերը արտագաղթել են հիմնականում Ռուսաստանի Դաշնութիւն: Նրանց քիչ մասը՝ Հայաստան:

Վրացական լրատուամիջոցները տարածել են, թէ հայոց եւ վրաց պատրիարքարանների միջեւ գրաւոր համաձայնութիւն է տեղի ունեցել անցած օրերին բարձրացուած հարցերի շուրջ:

Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանը «Ազատութիւն» ռադիոկայանին պաշտօնապէս ասաց, որ նման փաստաթուղթ դեռեւս գոյութիւն չունի, սակայն կայ նախագիծ, որի վրայ կողմերը դեռեւս աշխատում են: Այն կ՚ ընդունուի եւ կը հրապարակուի մինչեւ այցելութեան աւարտը, այսինքն՝ մինչեւ Յունիսի 15-ը:

Ամենայն Հայոց կաթողիկոսը թէ՛ Վրաստանի նախագահի եւ թէ՛ վրաց պատրիարքի հետ հանդիպումների ժամանակ պահանջել էր իրաւաբանական անձի կարգավիճակ տալ հայկական եկեղեցուն Վրաստանում եւ վիրահայոց թեմին վերադարձնել հայկական չգործող եկեղեցիները, նաեւ միջոցներ ձեռնարկել դրանց պահպանելու համար:

## ՀԱՅ ՓՈՐՁԱԳԷՏՆԵՐԸ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ ԵՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ




Հայաստանեան որոշ փորձագէտներ կարծում են, որ Կիրակի, Յունիս 12-ին Թուրքիայում կայացած խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքում Հայաստանի հանդէպ Թուրքիայի քաղաքականութիւնը չի փոխուի:

Թուրքագէտ Արտակ Շաքարեանի գնահատմամբ՝ Թուրքիան ստացաւ աւելի «բալանսաւորուած» եւ «դէպի Արեւմուտք աւելի շատ նայող» խորհրդարան: Իսկ այդպիսի խորհրդարանի պարագայում, ինչպէս նշեց Շաքարեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում, մեծ հաշուով «ամէն ինչ բարեբախտաբար մնաց նոյնը». - «Բարեբախտաբար՝ որովհետեւ բալանսաւորուած խորհրդարանը այն խորհրդարանն է, որը ամենից շատ մեզ ձեռնտու է»:

Ինչ վերաբերում է հայ-թուրքական մերձեցման կասեցուած գործընթացի վերակենդանացման հնարաւորութեանը, ապա Արտակ Շաքարեանը համարում է, որ այդ ուղղութեամբ ինչ-որ փորձեր կ՚արուեն, սակայն որեւէ յաջողութիւն արձանագրելը հիմա աւելի դժուար է լինելու:

Թուրքագէտ Ռուբէն Մելքոնեանը, մինչդեռ, բացառում է հայ-թուրքական մերձեցման գործընթացի վերակենդանացման հեռանկարը:

«Այս խորհրդարանական ընտրութիւններից յետոյ Թուրքիան մտնում է մէկ այլ փուլ, էլի ընտրական փուլ, որի նպատակն է անցկացնել սահմանադրական փոփոխութիւններ: Եւ եթէ նկատենք, իշխող կուսակցութիւնը, խորհրդարանական ընտրութիւններում չնայած յաղթանակ է տարել զգալի տոկոսով, սակայն չի ապահովել պատգամաւորական քուէների այն քանակը, որը թոյլ կը տար իրեն միանձնեայ կատարել եւ անցկացնել սահմանադրական փոփոխութիւնները», - ասաց նա՝ յաւելելով, թէ Էրդողանը ստիպուած պէտք է լինի սահմանադրական փոփոխութիւնների անցկացման համար բանակցութիւնների նստել այլ ուժերի հետ՝ պահանջուող 367 քուէն ապահովելու համար: - «Իսկ ինքը այս ընտրութիւններից յետոյ ունի 327 պատգամաւոր»:

«Եւ ես կարծում եմ», - շարունակեց Մելքոնեանը, - «Թուրքիան, մտնելով մէկ այլ ընտրական փուլ, որը ի վերջոյ աւարտուելու է նախագահի ընտրութիւններով: Այս ամէնի համատեքստում դժուար է ենթադրել, որ Թուրքիայի կողմից ակտիւ քայլեր կ՚արուեն հայ-թուրքական յարաբերութիւնները կարգաւորելու ուղղութեամբ»:

Ռուբէն Մելքոնեանի կարծիքով եւս խորհրդարանի նման կազմը կարելի է դիտել որպէս «քայլ դէպի Եւրոպա». - «Այսօրուայ Թուրքիան որոշակի փոփոխութիւնների է ենթարկուել. զինուորականութիւնը չունի նախկին ուժը, իսկ հասարակութիւնը բաւական ընկալել է իշխող կուսակցութեան մոդելը՝ չափաւոր իսլամը: Այնպէս որ, կարծում եմ, ժողովրդավարութեան տեսակէտից այս ընտրութիւնները բաւական նորմալ ընտրութիւններ են»:

Այդուհանդերձ, Մելքոնեանի խօսքերով, Թուրքիայի իշխող կուսակցութեան օրակարգում աւելի կարեւոր տեղ է զբաղեցնում իսլամական Արեւելքի հետ մերձեցմանը միտուած քաղաքականութիւնը:

## ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ

Շարունակուած էջ 1-էն

սակցութեան քաղաքական խորհուրդի անդամ, պատգամաւոր Արտակ Զաքարեան «Ազատութիւն» ռատիոկայանին ըսած է, որ Հանրապետականը, ի դէմս իր խօսնակի, այս հարցի շուրջ իր դիրքորոշումը արդէն արտայայտած է:

Ռատիոկայանի հարցին, թէ արդեօ՞ք Հանրապետականի խօսնակ Էդուարդ Շարմազանովի տարածած յայտարարութիւնը կարելի է ընդունիլ իբրեւ Սերժ Սարգսեանի դիրքորոշում, Արտակ Զաքարեան պատասխանած է. - «Բնականաբար կուսակցութեան ղեկավարի հետ համաձայնեցուած է կուսակցութեան դիրքորոշումը»:

Ինչ կը վերաբերի ընդդիմութեան առաջարկին, ապա, Արտակ Զաքարեանի խօսքերով, այդ կառուցողական առաջարկ չէ:

«Երկխօսութեան այն միակ ձեւը, որը առաջարկում է ՀԱԿ-ը, դա նշանակում է ի սկզբանէ չցանկանալ գնալ երկխօսութեան: Որովհետեւ նրանք յատուկ ընտրել են երկխօսութեան մի տարբերակ՝ յստակ իմանալով, որ դա անընդունելի է, եւ ընտրել են մի թեմա՝ [արտահերթ ընտրութիւններ] յստակ հասկանալով, որ դա այսօր իլիւզիա է: Եթէ այսպէս շարունակուի, ապա կարծում եմ, որ դա յատուկ արուած է հենց այդ նպատակով՝ որպէսզի եւս մէկ անգամ փորձեն իշխանութիւններին մեղադրել, թէ ընդդիմութիւնը ուզում էր գնալ երկխօսութեան, իսկ իշխանութիւնը նոյնիսկ երկխօսելու ցանկութիւն չունի», - ըսած է հանրապետական պատգամաւորը:

## ԹՈՒՐՔ ՈՍՏԻԿԱՆԸ ՍՊԱՌՆՈՒՄ Է ՍՊԱՆՆԵԼ «ՆԵՐԵՑԷՔ ՄԵԶ, ՀԱՅԵՐ» ԱԿՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻՆ

Թուրք գործիչ, ազգային փոքրամասնութիւնների եւ կրօնի թեմաներն ուսումնասիրող Բասքըն Օրանը ոստիկանութեան մի աշխատակցից մահուան սպառնալիք է ստացել:

«Ֆիրաթ» գործակալութեան փոխանցմամբ՝ Բասքըն Օրանը դիմել ոստիկանութիւն՝ յայտնելով, որ իրեն մահուան սպառնալիք է ուղարկել «Թուրքական վրիժառուների բրիգադ» կոչուող խումբը: Մեծ է եղել զարմանքը, երբ պարզուել է, որ սպառնալից նամակն ուղարկուել է Ստամբուլի ոստիկանութեան կազմակերպուած յանցագործութիւնների դէմ պայքարի վարչութեան մի ոստիկանի կողմից:

Սպառնալից նամակում նշուել է, թէ Յունիսի 17-ին Բասքըն Օրանին մէջտեղից վերացնելու են՝ ցոյց տալով թուրքական ուժը: Ոստիկանի ուղարկած նամակում եղել է նաեւ ստամբուլահայ Էթյէն Մահչուփեանի, Դիարբեքիրի քաղաքապետ Օսման Բայդեմիրի, քուրդ կին պատգամաւոր Սեբահաթ Թունջելի եւ Աքըն Բիրդալի անունները, որպէս հայրենիքի դաւաճաններ:

Յիշեալ գործով առաջիկայ դատական լսումը նախատեսուած է Յուլիսի 27-ին:

Նշենք, որ Բասքըն Օրանը հանդիսանում է «Ներեցէք մեզ, հայեր» ակցիայի կազմակերպիչներից մէկը:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԴԵՌԵՒՍ ՄԵՌԱԾ ՉԷ, ԲԱՅՑ...

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսեանը յայտարարեց, որ մեր գիտական արդիւնքների կէսից աւելին միջազգային համագործակցութիւնների արդիւնք են, առանց դրանց գիտութեան վիճակը Հայաստանում աւելի վատ կը լինէր: Նրա խօսքով, Հայաստանում գիտութեանը յատկացւում է 23 մլն դոլար, մինչդեռ Ադրբեջանում՝ աւելի քան 114 մլն դոլար: Սակայն UNESCO-ի վիճակագրութեան համաձայն, գիտական արդիւնքներով Հայաստանն ունի 544 միաւոր, իսկ Ադրբեջանը՝ 292 միաւոր:

Ըստ նրա այս ամէնը վկայում է , որ գիտութեան մեռնելու մասին խօսակցութիւններըանտեղեակ մարդկանց խօսակցութիւն են կամ չարախօսութիւն:

# ԳԱՐԵԳԻՆ ՉՈՒՔԱՍԸԶԵԱՆԻ . «ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ»Ը



Իր տեսակին մէջ ինքնատիպ եւ շահեկան ներկայացում մըն էր, որ մեզի հրամցուեցաւ Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբին կողմէ:

Արդարեւ Հինգշաբթի, Յունիս 9ին, 2011, երաժշտասէր ընտրանի հասարակութիւն մը փութացած էր Պոլսահայ Միութեան «Հրանդ Տինք» սրահը, պատկերներով եւ տեսաերիզի ներկայացումով, առաւել մօտէն ծանօթանալու Կոմիտաս վարդապետի կեանքին եւ ստեղծագործութիւններուն:

Երեկոյի բացումը կատարեց Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի ատենապետ՝ Տօքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան: Ան ներկաները ողջունելէ ետք ամփոփ գիծերու մէջ ծանօթացուց օրուան զեկուցաբեր Գարեգին Զուգասըզեանը, որպէս Երեւանի արուեստաբանական Տեղեկատուութեան հիմնարկի գործադիր տնօրէն, ինչպէս նաեւ հայկական եւ միջազգային կարգ մը հանրածանօթ կազմակերպութեանց անդամ: Հանդիսավար Տօքթ. Յ. Գուլակ Աւետիքեան միաժամանակ յայտնեց, որ Գալիֆորնիոյ վեց տարբեր քաղաքներու մէջ տեղի ունեցող սոյն ներկայացումներու հովանաւորն է Շահան Նաթալիի անուան ընտանեկան հիմնարկութիւնը: Անցնելով նիւթին՝ Գարեգին Զուգասըզեան խտասալիկներու միջոցով, հանդիսականներուն ծանօթացուց բացառիկ գործ մը, նուիրուած հայ անուանի կոմպոզիտոր երաժշտագէտ Կոմիտաս վարդապետի կեանքին ու գործերուն:

Արդարեւ երկարատեւ, բծախնդիր եւ մասնագիտական արհեստավարժ ձեւով, պատրաստուած այս խտասալիկին մէջ համապարփակ ձեւով, ծանօթացանք մեծն Կոմիտասի կենսագրութեան հետ աղերս ունեցող ստեղծագործական կեանքի ու մանկավարժական գործունէութեան գրեթէ բոլոր հանգրուաններուն: Առանձին ենթախորագիրներու տակ զետեղուած էին հարիւրաւոր նիւթեր թէ ուսանողական կեանքի, թէ որպէս երաժիշտ, թէ բանահաւաք, երգիչ, խմբավար ու մանկավարժ: Այս բոլորի առընթեր մենք տեսանք հարիւրաւոր լուսանկարներ Կոմիտասի մասին, մինչեւ իսկ տարբեր քաղաքներու մէջ իր ունեցած համերգներու ծանուցագրերն ու կենդանի ձայնագրութիւնները: Հետաքրքրութեամբ լսեցինք ժամանակակիցներու յուշերը Կոմիտասի մասին: Առանձնապէս յիշուեցաւ Եղիշէ Չարենցի «Ռեքվիեմ»ը (հոգեհանգիստ), որ յատկապէս գրուած էր Կոմիտասի աճիւնի Երեւան փոխադրութեան առթիւ: Նմանապէս Կոմիտաս վարդապետի հրատարակած գործերը տեղ գտած են այս խտասալիկին մէջ: Ունկնդրեցինք նաեւ հայ եւ օտար երգիչներու կատարմամբ Կոմիտասի տարբեր ժանրերու (քնարական, գեղջկական, հոգեւոր եւայլն) երգերու կատարումները: Այս բոլորի հետեւութիւնն այն էր որ Կոմիտասի ստեղծագործական մեթոտը՝ լայն



Զեկուցաբեր Գարեգին Զուգասըզեան

հեռանկարներ բացաւ հայ ազգային կոմպոզիտորական արուեստի զարգացման համար, զայն դնելով համաշխարհային երաժշտութեան զարգացման հունին մէջ:

Գարեգին Զուգասըզեանի բնորոշումով «Կոմիտասը՝ ադամանդ մըն է, որպէս մատանի, նստած ժամանակակիցներու մատներուն վրայ»:

Կ՚իմանանք թէ մեծ Եղեռնի 100-ամեակին առիթով, Երեւանի մէջ բացումը պիտի կատարուի Կոմիտաս վարդապետին նուիրուած կոթողային թանգարանի մը՝ որ օժտուած պիտի ըլլայ նորագոյն թեքնիքով:

Կոմիտասի մասին հրապարակուած այս բազմաբովանդակ եւ «հանրագիտարանային» մեծ արժէք ներկայացնող խտասալիկին հեղինակը պատրաստած է նաեւ նոյնքան համարժէք խտասալիկներ, նուիրուած հայոց մեծ Եղեռնին, կոմպոզիտոր Արամ Խաչատուրեանին եւ այլոց:

Ազգային, կրթական, մշակութային, երաժշտական դպրոցներու եւ հաստատութիւններու համար խիստ շահեկան եւ գիտելիքներով հարստացած արտադրութիւններ են նման խտասալիկները եւ օգտաշատ ուղեցոյց բոլորին:

Գովելի եւ շնորհաւորելի նախաձեռնութիւն մը արդարեւ: Նորանոր յաջողութիւններ Գ. Զուգասըզեանին:

Գ. ՄՈԼՈՅԵԱՆ

# ՅՈՎՍԷՓ ԻՆՃԷՃԻՔԵԱՆ ՏՆՕՐԷՆ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ Վարժարանը 2011-2012 դպրոցական տարեշրջանը կը սկսի նոր տնօրէնի՝ Պրն. Յովսէփ Ինճէճիքեանի առաջնորդութեամբ:

Պրն. Ինճէճիքեան երկար տարիներէ ի վեր կը ծառայէ հայ դպրոցին, եկեղեցիին ու հայեցի սերունդներու դաստիարակութեամբ, Պէյրութէն մինչեւ Քալիֆորնիա: Ուսուցչական ասպարէզի իր փորձառութեան կողքին, ան իր հետ կը բերէ վարչական հարուստ փորձառութիւն, որպէս տնօրէն՝ Պէյրութի Հայ Աւետարանական Թորոսեան Վարժարանի (1979-1988), Փասատինայի Ա. եւ Մ. Յովսէփեան Վարժարանի (1990-2004) եւ Շըրմըն Օքսի Շ. եւ Է. Մերտինեան Հայ Աւետարանական Վարժարանի 2044-2011): Իր պաշտօնավարութեան ընթացքին, այս հաստատութիւնները արձանագրած են ուսումնական վերելքներ եւ դպրոցական շէնքերու ընդարձակում:



Պրն. Ինճէճիքեան վկայուած է Պէյրութի Հայկազեան Համալսարանէն (BA degree ini Business Administration, and Minor in Biology), ինչպէս նաեւ Սան Տիեկոյի National university (MS in Educaiont, Instrauctional Leadership in Curriculum and Instructions with Honors): Ան ունի նաեւ Քալիֆորնիոյ նահանգի ուսուցչական վկայագիր (California Teaching Claer Credential in Biology):

Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ Վարժարանը 1890-էն ի վեր կը ծառայէ Քալիֆորնիահայ համայնքին, ջամբելով ոչ միայն ուսումնական բարձր մակարդակի գիտելիքներ, այլ նաեւ հայեցի դաստիարակութիւն եւ քրիստոնէական կրթութիւն:

Աստուածավախ միջավայրի մէջ ջամբուած ազգային ու կրօնական ամուր հիմերու վրայ խարսխուած դաստիարակութիւնը, մեր նորահաս սերունդին մէջ կը կերտէ առողջ նկարագիր ու հզօր ինքնութիւն: Վարժարանը վարկաւորուած է Դպրոցներու եւ Համալսարաններու Արեւմտեան Ընկերակցութեան (WASC) կողմէ, եւ Քրիստոնէական Դպրոցներու Միջազգային Ընկերակցութեան (ACSI) կողմէ:

2011-2012 ուսումնական տարեշրջանի արձանագրութիւնները կը շարունակուին: Արձանագրութեան կամ որեւէ տեղեկութեան համար կարելի է հեռաձայնել վարժարանի գրասենեակը (626) 798-5020 թիւին, եւ կամ անձամբ ներկայանալ վարժարան, 2501 N. Maiden Lane, Altadena:

# «ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ» ՀԱՆԴԷՍԻ ՆՈՐ ԹԻՒԸ

Լոյս է տեսել Սփիւռքի միակ գրական, գեղարուեստական, գունաւոր եւ պատկերազարդ, «Համայնապատկեր» ամսաթերթի 2011-ի 56-րդ թիւը, 70 էջերից բաղկացած:




Հանդէսի առաջին էջի վրայ զետեղուած է տաղանդաւոր երգահան-դաշնակահար Առնօ Բաբաջանեանի մեծադիր նկարը, երաժշտագէտի ծննդեան 90-ամեակի առթիւ: Հանդէսի այս թիւով ներկայացւում է մի քանի տասնեակ հայ գրողներ, նկարիչներ եւ մշակոյթի անուանի գործիչներ, իրենց գունաւոր նկարներով եւ ստեղծագործութեանց ընտրանիով: «Համայնապատկեր»ից տեղեկացանք, որ Յունիս 14-ին լրացել է Նրա կորովի խմբագիր, բանաստեղծ, հրապարակախօս Սարօ Գողակեանի (Ս. Գիւմրեցի) ծննդեան 60-ամեակը: Նորանոր յաջողութիւններ մեր սիրելի գրչակից ընկերոջը եւ յարատեւութիւն բազմաբովանդակ եւ հետաքրքրական «Համայնապատկեր»ին:

Ն. ՏԷՐԵԱՆ

# ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ

Շարունակուած էջ 1-էն

երեք տարիների ընթացքում չի քննարկուել: Եւ տարօրինակ է հիմա մեկնաբանել, թէ ինչ-որ պայմանաւորուածութիւն է ձեռք բերուել, եթէ չի քննարկուել այդ հարցը»,- յայտարարեց Էդուարդ Նալբանդեան:

Միւս կողմէ, Յունիս 11-ին Մոսկուայի մէջ կայացած Ռուսաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարներու հանդիպումէն ետք, Ատրպէյճանի արտաքին գործոց նախարար Էլմար Մամեդեարով յայտարարած է որ, Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հետ կապուած որոշ հարցեր տակաւին բաց կը մնան:

«Շարք մը հարցերու շուրջ տեղաշարժ կայ, սակայն, միաժամանակ, որոշ հարցեր բաց կը մնան», - յայտարարած է Ատրպէյճանցի նախարարը:

Մամեդեարով չէ յստակեցուցած, թէ որ հարցերն է որ բաց կը մնան, ըսելով, որ զանոնք հրապարակելը տակաւին կանուխ է:

# ՔՍԱՆՆԵՐԷՆ ԱՌԱՋ, ԿԱՄ ԱՆՈՆՑՄԷ ԵՏՔ… ԲԱՅՑ ՄԻՇՏ ՄԻԱՍԻՆ

***ՏՈՔԹ. ԵՂԻԿ ՃԷՐԷՃԵԱՆ***

*Ս.Դ.Հ.Կ. Կոստանցայի 7-րդ համագումարի մատնութենէն ետք, Համագումարէն շուրջ տաս ամիս յետոյ, 1914 Յուլիս 16-էն Օսմանեան կայսրութեան ամբողջ տարածքին կը սկսին հնչակեան ղեկավարներու, պատասխանատուներու եւ մտաւորականներու ձերբակալութիւնները:*

*Սկզբնական շրջանին կը ձերբակալուին ու հարցաքննութեան կ'ենթարկուին շուրջ 120 հնչակեաններ: Կը խուզարկուին հնչակեան ակումբները, խմբագրատուներն ու ձերբակալուածներուն բնակարանները: Հարցաքննութենէն ետք, որ կը տեւէ 1-3 օր, ձերբակալուածներուն մեծ մաս ազատ կ'արձակուի: Հիմնականին մէջ ազատ կ'արձակուին անոնք, որոնք մասնակցած չէին Կոստանցայի Համագումարին, չէին բաժներ հոն առնուած որոշումները, Իթթիհատի եռապետութիւնը ահաբեկելու ծրագրին հեղինակներ ու գործադրողներ նկատուող Սապահգիւլլի, Փարամազի, տոքթ. Պէննէի, Ռուբէն Կարապետեանի հետ անձնական յարաբերութեան մէջ չէին գտնուած, խուզարկութիւններու ժամանակ իրենց անուան հետ առնչուող կասկածելի գրութիւններ չէր յայտնաբերուած եւայլն: Այս արդարացուցիչ պատճառներուն համատեղումին հետեւանքով ազատ արձակուածներէն շատեր, որոնց շարքին՝ Մեծն Մուրատ, Յարութիւն Ճանկիւլեան, Ներսէս Զաքարեան, Սարգիս Աղամիրզեան (Սագօ), Յակոբ Աւետիսեան (Արծրունի), Պետրոս Գալֆայեան, Գագիկ Օզանեան եւ ուրիշներ, վրայ հասած արհաւիրքի օրերուն, հայ մտաւորականութեան հետ վերստին կը ձերբակալուին ու կը բռնեն նահատակութեան ճամբան: 1915 Ապրիլ 28-ին կը սկսի «Օսմանեան պետութիւնը դաւադրական եղանակներով տապալելու եւ Անկախ Հայաստան ստեղծելու» յանցանքներով ամբաստանուած 28 հնչակեաններու դատավարութիւնը:*

*Վերոնշեալ 28-էն երկու հոգի, Ստեփան Սապահ Գիւլեան եւ Վարագդատ (Յակոբ Թիւրաբեան) մահուան կը դատապարտուին ի բացակայութեան:*

*Գրիգոր Եղիկեան, յանցանշաններու անբաւարարութեան պատճառով, դարձեալ ի բացակայութեան, անպարտ կ'արձակուի:*

*Հնչակեան պատասխանատուներ Հմայեակ Արամեանց, Յակոբ Արծրունի եւ Գագիկ Օզանեան անպարտ կ'արձակուին վերոյիշեալ յանցանշաններուն չգոյութեան պատճառով:*

*Ձերբակալուածներէն Դարբին Արշակ, ընդհանրապէս կապ չունէր Հնչակեան կուսակցութեան հետ: Անոր տունը խուզարկուած էր թիւրիմացաբար, եւ հոն գտնուած էր Անդրանիկի «Մարտական Հրահանգներ»: Անմեղ դարբին Արշակի անունը մահապարտներու ցանկէն դուրս ձգելու համար, դատարանին առջեւ իրենց ելոյթներուն մէջ մեծ ճիգեր կը գործադրեն Փարամազ եւ Արամ Աչքպաշեան: Դարբին Արշակ կը դատապարտուի երեք տարուան բանտարկութեան (1):*

*Արդարացուցիչ հանգամանքներու առկայութեան պատճառով անպարտ կը հռչակուի նաեւ Կարապետ Փաթուկեան: Կ. Փաթուկեանի անպարտ արձակուիլը խիստ տարօրինակ էր, որովհետեւ ան կը կրէր ամէնէն մեծ յանցանշանը. մասնակցած էր Կոստանցայի 7-րդ համագումարին, որպէս Նիկոմիդիոյ, Պարտիզակի եւ Ատապազարի հնչակեան մասնաճիւղերու պատգամաւոր եւ ստորագրած էր առնուած որոշումներուն տակ: Կ. Փաթուկեանի անպարտ արձակումը կը կատարուի անոր ունեւոր ազգականներուն ի գործ դրած «ամենափրկիչ» կաշառքին եւ միջնորդութիւններուն հետեւանքով:*

*1915 Մայիս 27-ին, Կ. Պոլսոյ պատերազմական ատեանը մահուան կը դատապարտէ ձերբակալուած 20 հնչակեան գործիչները, որոնք կախաղան կը հանուին Յունիս 15-ի արշալոյսին, պատերազմական ատեանին (որուն բանտին մէջ կը գտնուէին անոնք) դիմաց գտնուող սուլթան Պայազիտ հրապարակին վրայ:*

*Իր յանդուգն ծրագրին համար Հնչակեան կուսակցութիւնը շատ սուղ կը վճարէ: Կ'իյնան Քսանները: «Անկախ Հայաստան կերտելու» եւ «պետութեան դէմ դաւադրելու» յանցանքներով ձերբակալուած հնչակեան այլ գործիչներ եւս, Քսաններէն առաջ կամ Քսաններէն ետք, կը բռնեն նահատակութեան ճամբան: Ասոնք, իրենց նահատակման վայրով եւ թուականով չեն նշուիր Քսաններու անուանացանկին մէջ, սակայն ընդհանուր նպատակներու եւ իրենց հանդէպ կատարուած մեղադրանքներուն տեսակէտներէն, անոնք Քսաններուն հետ կը կազմեն նո՛յն փաղանգը:*




*Նախ, կը պարզուի որ Կարապետ Փաթուկեանի ազատ արձակման վճիռը միայն ժամանակաւոր էր (հաւանաբար առաջարկուած կաշառքներէն օգուտ քաղելու համար): Շուտով Կ. Փաթուկեան դարձեալ կը ձերբակալուի եւ Քսան կախաղաններէն եօթ ամիս ետք, միեւնոյն վայրին վրայ, Հրանդ Աղաճանեանի, Խորէն Խորէնեանի եւ Գրիգոր Գայեանի հետ կախաղանի վրայ կը նահատակուի (2):*

*Կ. Պոլսոյ պատերազմական ատեանի բանտին մէջ ձերբակալուած հնչակեաններու շարքին էր նաեւ Վահան Քէհեայեան: Հնչակեան հին յեղափոխական մը (ծն. Ուրֆա, 1847-ին), որ համիտեան օրերուն կ'աքսորուի Աֆրիկեան Թրիփոլի եւ բանտակից կ'ըլլայ Մեծն Մուրատին: Օսմանեան սահմանադրութենէն ետք ազատ կ'արձակուի եւ Կ. Պոլսոյ մէջ կը շարունակէ իր կուսակցական գործունէութիւնը: Որպէս երկաթագործ, ան վարպետ կ'ըլլայ ուժանակներու պատրաստութեան գործին մէջ: Կ'ամբաստանուի ռումբեր պատրաստելու ամբաստանութեամբ: Հարցաքննութենէն ետք կը մնայ բանտարկուած, սակայն դատարանը, ձերբակալուածներու վերջնական վճիռէն առաջ, զինք ազատ կ'արձակէ յանցանշաններու անբաւարարութեան պատճառով: Վ. Քէհեայեան իրեն «շնորհուած» ազատութիւնը չի վայելեր: Դանիէլ Վարուժանի եւ Ռուբէն Սեւակի հետ կ'աքսորուի Չանղըրի, ուր դաժանօրէն կը սպաննուի (3):*

*Քսաններէն Մկրտիչ Երէցեանի ձերբակալման ժամանակ գրաւուած թուղթերէն կը յայտնաբերուի որ հնչակեան գործիչ Պարոյր Արզումանեան զէնքեր ստացած է Մ. Երիցեանէն: Սա պատճառ կ'ըլլայ որ Պ. Արզումանեան բազմիցս հարցաքննութեան կանչուի պատերազմական ատեանին կողմէ, սակայն չի բանտարկուիր: Ան ուղղակիօրէն կը բռնէ աքսորի եւ նահատակութեան ճամբան: Ծայր առած հակահնչակեան հալածանքին շատ սուղ կը վճարէ Վանի հնչակեան կառոյցը: Կը ձերբակալուին ու կը բանտարկուին ՍԴՀԿ Վանի մասնաճիւղի վարչութեան անդամներ՝ - Աբրահամ Բրուտեան: Վանի ՍԴՀԿ մասնաճիւղի ատենապետ: Խստապահանջ կուսակցական, ծանօթ իր հռետորական ձիրքով:*

*- Տիգրան Օտեան (Ասօ): Յեղափոխական շարժման կը միանայ համիտեան օրերուն: Կ'անցնի Պարսկաստան, կը զբաղի ուսուցչութեամբ, միաժամանակ կը մասնակցի Պարսկաստանէն դէպի երկիր զէնք եւ զինեալ խումբեր ղրկելու աշխատանքին: «Պարսկա-Թրքական սահմանագիծէն» ընդհանուր խորագրով կ'աշխատակցի «Հնչակ»ին: Սահմանադրութենէն ետք կը խմբագրէ «Երկիր» թերթը: Ասոյի գրչին կը պատկանին «Կարմիր Օրեր» (Վանի 1896-ի ինքնապաշտպանութեան նուիրուած, փաստական նիւթով հարուստ, արժէքաւոր աշխատութիւն մը), «Դատաստան» (Նուիրուած Փարամազի յեղափոխական գործունէութեան), «Վահէ» (Նուիրուած Վանի Ա. ինքնապաշտպանութեան նահատակ հնչակեան ֆետայի Կարապետ Երկանեանին), «Հաւսէ», «Դիւցազնուհին» եւ այլ գրքոյկներ:*

*- Արտաշէս Սոլախեան: Արուեստագէտի նուրբ զգացումներով եւ ճաշակով օժտուած մտաւորական, ուսուցիչ, գրող, թատերա-*

*Շար.ը էջ 8*



# ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳԷՆ

*Քսան կախաղաններու միջազգային մամուլի օրկաններուն մէջ ունեցած արձագանգներու ծիրէն ներս, ուշագրաւ է Իտալիոյ Սոցիալիստ կուսակցութեան պաշտօնաթերթ «Աւանթի» (Յառաջ) թերթին յօդուածը այդ մասին:*

*«Աւանթի»ի յօդուածը հետաքրքրական է իր շարք մը հարցադրումներով եւ վերլուծումներով:*

*Միւս կողմէ, ըսենք նաեւ թէ Քսաններու միջազգային մամուլի մէջ ունեցած արձագանգին, ամփոփումը, որ խիստ հետաքրքրաշարժ եւ օգտակար կրնայ ըլլայ, տակաւին կը սպասէ պրպտող հայ պատմագրական միտքին նախաձեռնութեան:*

*Ստորեւ, հայերէն լեզուով կը հրատարակենք «Աւանթի»ի 16 Օգոստոս 1915-ի թիւով տրուած յօդուածը, ուր կան նաեւ պատմական անճշդութիւններ եւ սխալ դատողութիւններ:*

*16 Օգոստոսին, Ընկերվարական կուսակցութեան «Աւանդի» («Յառաջ») թերթին (իտալական) կ'իյնայ այս նիւթը դիմագրաւել, ինչ որ կը կատարէ մասնայատուկ կերպով՝ նկատի ունենալով Հայ Ընկերվարական Հնչակեան կուսակցութեան գործօն 20 անդամներու կախաղան բարձրանալու լուրը, (այս լուրը տրուած էր «Լա Կածեթթա Տել Փօփօլօ» («Ժողովուրդի Թերթ»ը) թերթի 20 Յունիսի թիւին մէջ, այդ առթիւ ամբողջական վերատեսութիւն մը կատարելով հայկական հալածանքներու պատմութեան մասին, սակայն լոկ քաղաքական տեսանկիւնէ դիտուած: Շահեկան կը գտնենք նշանակելու այդ յօդուածին սկզբնաւորութիւնը, հոն ուր ի յայտ կու գայ այն պարագան, որ հիմը կը կազմէ այդ շրջանին պատահած հայկական դէպքերուն լրատուութեան տուած կարեւորութեան, որով նոյն լուրը, որ տրուած էր այդ յօդուածին մէջ, անտեսուած էր պատերազմական ողբերգական այլ լուրերու տարափին տակ: Միլանոյի օրաթերը, ի բացառեալ մի քանի տողերէ, 4 օր ետք, միայն յաջորդ տարուայ Մարտ ամսոյն պիտի սկսի գրել հայերու մասին:*

## «20 ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԿԱԽԱՂԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒԻԼԸ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ»

*Ցիւրիխ, 15 - Թուրք կառավարութիւնը պաշտօնական հաղորդագրութեամբ մը, մի քանի օր առաջ աշխարհի մէջ կը տարածէր զգայացունց լուր մը, որ սակայն այնքան մարդկային սպանդներու հեռագիրներու տարափին տակ՝ մեծ արձագանգ մը չունեցաւ:*

*16 Յուլիսի արշալոյսին - կ'ըսէր հաղորդագրութիւնը - յետ պատերազմական ատեանի վճիռին կախաղան բարձրացան 20 անդամներ «Հնչակ» կոչուած Ընկերվարական կուսակցութենէն:*

*Գալով այդ դժբախտներու գործած ոճիրին, պաշտօնական հաղորդագրութիւնը շատ քիչ բացատրութիւն կու տար: Ան միայն կ'ըսէր թէ կախաղանի դատապարտուածները յանցաւոր նկատուած էին որովհետեւ կը տենչային հաստատել անկախ եւ ինքնավար Հայաստան մը եւ այդ նպատակին հասնելու համար անոնք կ'ուզէին (օսմանեան) կայսրութենէն մաս մը անջատել ու այդ պատճառաւ գաղտնի ու յայտնի ժողովներ կը գումարէին թէ՛ երկրին մէջ եւ թէ՛ երկրէն դուրս, բաժնելով թռուցիկներ եւ գրքոյկներ:*

*Ընկերվարութեան եւ ազատութեան այս նահատակներուն մասին վերջերս հետաքրքրական լուրեր կը հաղորդէր «Պերներ Թակվախտ» (զուիցերիական) թերթին մէջ (ռուսական) Տումայի երեսփոխան Արշեւ Սուրաքովը, որ այդ ընկերներուն հետ կապի մէջ էր:*

*Բոլոր այդ կախաղան բարձրացած ընկերները կը պատկանէին Հայկական Ընկերվարական Հնչակեան Կուսակցութեան, որ հիմնուած էր 1885-ին, եւ որ առաջին օրերէն սկսեալ՝ մարքսիստ սկզբունքներուն յարած էր, ինքզինք նկատելով մարքսիստ կուսակցութիւն: 1905-էն ի վեր ան կոչուեցաւ «Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն» եւ 1908-ի յեղափոխութենէն ետք՝ այս անուանումը պաշտօնապէս ընդունուեցաւ Թուրքիոյ կողմէ:*

*Կախաղան բարձրացողներուն մէջ կար գրեթէ ամբողջական խմբագրական կազմը մարքսիստ «Կայծ» թերթին, որուն շուրջ կը հաւաքուէին Թուրքիոյ մարքսիստ լաւագոյն տարրերը, որպէսզի մարքսիզմի լուրջ քարոզչութիւնը կատարէին ժողովուրդին մէջ: Այդ խմբագիրներուն մէջ կը փայլէր Կ. Վանիկեանը, հանճարեղ գաղափարախօս եւ հռետոր, 22 տարեկան երիտասարդ մը, որ աւարտած էր իրաւաբանութիւնը Կ. Պոլսոյ մէջ եւ կը պատրաստուէր մեկնելու Փարիզ՝ զայն կատարելագործելու նպատակաւ, երբ պայթեցաւ պատերազմը:*

*«Տակաւին պատերազմին սկիզբը - կը պատմէ Սուրաքով - երբ Թուրքիոյ մէջ ծանուցուեցաւ առաջին զինուորագրութիւնը, ան (Վանիկեան) ինծի կը գրէր նամակ մը, ուր դժգոհութիւն կը յայտնէր իր տխուր վիճակի մասին. ան կ'ըսէր. «Մտնել բանակի շարքերէն ներս, պատերազմելու համար այսպիսի անդամահատուած եւ անէացման դատապարտուած երկրի մը ի նպաստ, որ է Թուրքիան... աւելի դաւն ինչ կարելի է գտնել»:*

*Իսկ թէ ինչ կը մտածէին իսկապէս այդ հայ ընկերները պատերազմի մասին, կարելի չէ գիտնալ ճշգրտօրէն: Դատելով իրենցմէ ոմանց յայտնած գաղափարներէն, Պալքանեան պատերազմի շրջանին, կը կարծուի թէ անոնք կ'ուզէին ազատագրել Հայաստանը ժողովրդական յեղափոխութեամբ մը: Այն ատեն արդէն իրենց պայքարը երկու ուղղութեամբ կը յառաջանար, մին՝ Թուրք պետութեան քարացած վարչակարգերուն դէմ, իսկ միւսը՝ Ռուսիոյ ընչաքաղց ախորժակներուն դէմ:*

*Սակայն ի՞նչն էր անմիջականօրէն այդ Ընկերվարականներու դատապարտման բուն պատճառը:*

*«Արդէն նախորդ տարուայ Ապրիլին ամբողջ Հայաստանի մէջէն անցաւ յեղափոխութիւններու ալիք մը: Թրքական բռնակալութեան դէմ՝ վառ էր ատելութիւնը, որ միւս կողմէն՝ քաջալերուած էր Ռուսիոյ խոստումներով: Զարի զինուորները կը յառաջանային, ազատագրելու համար Հայաստանը: Թրքական կառավարութիւնը որոշեց ուրեմն խեղդել այդ ամբողջ շարժումը եւ ինչպէս որ սպասելի էր արդէն, անմիջապէս յարձակեցաւ ընկերվարականներուն վրայ: Շիտակը խոստովանելու համար, անոնք որեւէ դաւաճանութիւն չէին գործած, սակայն եւ այնպէս ձերբակալեցին 20 ամենայայտնի անձերը, զանոնք տարի մը ամբողջ բանտը պահեցին, որպէս պատանդներ եւ միայն երբ յեղափոխութիւնը սկսաւ, զանոնք սպաննել տուին: Երիտասարդ Թուրքերու կառավարութիւնը ուզեց այսպէսով ցոյց տալ գաւառական կառավարիչներուն թէ ինչպէս վարուելու է ըմբոստ ժողովուրդի մը հանդէպ:*

*Այն հնչակեանները, որոնք օգնեցին Երիտասարդ Թուրքերուն՝ տապալելու Ապտուլ Համիտը, այժմ կը ճօճուէին կախաղանին վրայ, իսկ իրենց կախաղան բարձրանալը ազդանշանը եղաւ յետագայ ահռելի սպանդներուն, վայրագ աւերումներուն եւ մեծ ջարդերուն հայոց»:*

*Այսպէս, Թուրքիոյ մէջ ունեցանք հաւատարիմ պատկերը այն եղելութեան որ տեղի ունեցաւ Ռուսիոյ մէջ: Զարի համակիրներու խումբ մը, կոչուած «Հարիւր Սեւերը» կը կազմակերպէն ջարդեր (pogrom) հրեաներու դէմ, որոնց հանդէպ, բացի հին ատելութենէն, կայ ամբաստանութիւնը գերմանացիներու բարեկամ ըլլալու: Իսկ Հայաստանի մէջ, Երիտասարդ Թուրքերը, սուլթանին համակիր, կը կազմակերպեն ջարդեր (pogrom) հայերու դէմ, որոնց հանդէպ բացի հին իսլամական ատելութենէն, կը յարուցուի ամբաստանութիւնը ռուսերու բարեկամ ըլլալու:*

*Այս նիւթին շուրջ՝ Արշեւ Սուրաքով հետեւեալ նկատողութիւնը կ'ընէ «Պերներ Թակվախտ» թերթին մէջ.*

*«Գաղտնիք մը չէ թէ արդի Թուրքիան կը յայտնուի որպէս նահանգ մը պատերազմող Գերմանիոյ: Թուրք կառավարութիւնը, ինչպէս նաեւ թրքական բանակը անմիջական հրամանատարութեան տակն են գերմանական բարձրագոյն զինուորական իշխանութեան (Etal Major):*

*Աւելցնենք նաեւ թէ Մարաջախտ (Mareshal) Վոն Տէր Կոլծ փաշա կը գտնուի Սուլթանին դղեակին մէջ. կրնանք զինք նկատել որպէս բոլոր Թուրքիոյ իրական տէրը: Իբր հետեւանք՝ կարելի է եզրակացնել թէ Սուլթանին կողմէ 20 ընկերվարականներու մահապատիժին հաստատումը եւ անոր գործադրութիւնը կարելի չէ որ տեղի ունենար առանց գիտակցութեանը եւ հաւանութեանը գերմանացիներուն, որոնք իսկական ղեկավարներն էին պատերազմին:*

*Այս կերպով, Գերմանիոյ կառավարիչ մարմինները, մէկ ձեռքով՝ հաստատ կը բռնէին դաշինքի սրբազան կապը գերմանացի ընկերվարականներու հետ, իսկ միւս ձեռքով՝ կ'օրհնէին Թուրք դահիճը, որ կախաղան կը բարձրացնէր անոնք որ գերմանացի ընկերվարականներէն սորված էին տեսական ընկերվարութիւնը եւ գործնական գետնի վրայ՝ դասակարգային պայքարը»:*

*Այդ ի՞նչ երեսով գերմանացի ընկերվարականները հիմա կը համարձակին բողոքել: Արդեօ՞ք իրենց կուսակցութենէն կամ գէթ մեծամասնութենէն՝ պաշտօնական բողոքագիր մը ներկայացուեցա՞ւ, երբ ձերբակալուեցաւ Գլարա Զէյթքինը:*



www.massisweekly.com
updated every Friday

# Ի ՅԻՇԱՏԱԿ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒՆ

*Տխուր եւ հոգեցունց առաւօտը լուսցաւ 1915 Յունիս 15ին, երբեմնի ուրախ եւ աղմկալից Պոլսոյ վրայ: Այդ օրը 20 ուխտեալ հնչակեաններ կ՚առաջնորդուէին դէպի կախաղան, այն ամբաստանութեամբ թէ անոնք դաւադրած էին Օսմանեան մարդակեր կառավարութեան դէմ: Ուխտեալները հայ յեղափոխականի խրոխտ քայլերով կ՚ուղղուէին դէպի կառափնատ՝ պատրաստ զոհուելու յանուն շղթայեալ Հայաստանի եւ բազմատառապ հայ ժողովուրդի ազատութեան սրբազան դատին համար:*

*Փշոտ էր Ազատութեան ուղին: Այն օրէն որ գիտակցաբար եւ անխախտ համոզումով զինուորագրուած էին Հնչակեան սրբազան դրօշին, Յունիս 15-ի նահատակները քաջ գիտէին որ իրենց այլ ճակատագիր չէր սպասեր եթէ ոչ մահ՝ կախաղաններու վրայ, կա՛մ գնդակահարութեամբ եւ կամ տանջանքներով՝ տաճկական բանտերու մէջ:*

*Այս բոլորը գիտնալով անոնք բիւրաւոր այլ գաղափարակիցներու նման, երբեք նահանջի ճամբան չբռնեցին եւ միշտ ընթացան տաժանքի ու անձնազոհողութեան ուղիներով: Ուստի անոնց համար անակնկալ չեղաւ Իթթիհատ ռազմադատարանի վճիռը եւ կախաղանը:*

*Բռնութեան արիւնարբու գաղանները ի զուր կը սպասէին իրենց դիմաց տեսնել դալուկ ու տժգոյն դէմքեր, կամ կթոտ քայլերով դէպի կախաղան բարձրացող կենդանի մեռեալներ: Անոնք, զարմացած տեսան դատապարտեալներու յաղթական երթը դէպի կախաղան, եւ սարսափով լսեցին անբասիր քսաններու՝*

*«Կեցցէ Հայաստան,*
*Կեցցէ Ազատութիւն»*

*կոչը, որ ելեկտրականացուց պատժարանի մէջ գտնուող հայ եւ այլազգի հանդիսատեսները, որոնք խռով եւ ցաւագին տուն վերադարձան՝ ցասումի ու վրէժի հուրն իրենց սրտերուն:*

*Հայ ազատագրութեան ճանապարհով կախաղաններու վրայ իրենց մարմնաւոր մահկանացուն կնքած անմահ քսաններու վրէժը որպէս անշէջ մորմոք կը մնայ՝ իր գաղափարական ընկերներու, ինչպէս նաեւ պարկեշտ ու ողջմիտ հայերու սիրտերուն մէջ, մինչեւ որ գալիք սերունդներուն աներեր բազուկներով իյնայ սուլթանի որդիներու գազիր իշխանութիւնը, մինչեւ որ նահատակներու թափած արիւնէն ընձիւղի ծաղկուն Հայաստանը:*

*Յաւերժ յարգանք՝ քսան կախաղաններու նահատակ Անմահներուն:*

***Համադրեց Լենա Մ.***

## ՆԱՀԱՏԱԿ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Յունիս 15էն 16, 1915 (Ն.Տ.) լուսնալու գիշերը՝ պատերազմական ատեանի վճիռով, Պոլիս Պայազիտի հրապարակը կախա-ղան հանուած են մեր հետեւեալ ընկերները.

1. Փարամազ (Մատթէոս Սարգիսեան)
2. Վանիկ (Գեղամ Վանիկեան)
3. Ռուբէն Կարապետեան (Վահան Պօյաճեան)
4. Տօֆք. Պէննէ (Պետրոս Թորոսեան)
5. Արամ Աչքպաշեան
6. Հրանդ Բեղավեան, բժշկական ուսանող
7. Երուանդ Թօփուզեան (Բանւոր), ուսուցիչ
8. Յովհաննէս Բէրդազարեան (Տէր Ղազարեան), ուսուցիչ
9. Թովմաս Վահան Թովմասեան
10. Մուրատ Ղազարեան
11. Մինաս Քէշիշեան (Սարը Խաչիկ)
12. Սմբատ Գլընեան
13. Աբրահամ Մուրատեան
14. Մկրտիչ Երէցեան
15. Յակոբ Պասմաճեան
16. Գարեգին Պօղոսեան
17. Պօղոս Պօղոսեան
18. Երեմիա Մաթոսեան
19. Գառնիկ Պօյաճեան
20. Արմենակ Համբարձումեան



**Տօֆք. Պէննէ**



**Վանիկ**

ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.

## ՔՍԱՆ ԱՆՄԱՀՆԵՐՈՒ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԳԱՄԸ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ԿԱՌԱՓՆԱՏԻ ԱՌՋԵՒ

Մեզ ֆսաններս կը կախէք, բայց 20.000ներ պիտի հետեւին մեզի:

***ՏՕՖՔ. ՊԷՆՆԷ***

***

Տէր հայր, տուր այս չոր թաշկինակն իմ մօրս, ըսէ անոր, որ անիկա երբեք թրջուած չէ արցունքով:

***ԵՐ. ԹՕՓՈՒԶԵԱՆ***

***

Իմ հաստատ կարծիքով, մարդուն միակ եւ լաւագոյն ուղին պայքարի ուղին է:

Պայքարիլ՝ տառապող աշխատաւորութեան յաղթանակին համար:

Գործելյանուն մարդկային երջանկութեան:

Մէկ խօսքով՝ պայքարիլ որ մարդը ապրի ամենազարգացած միջոցներով:

Այս է կեանքի վերջնական նպատակը:

***ՎԱՆԻԿ***

***

. Հայը մեռնում է կաթիլ կաթիլ: Որպէսզի հայը կաթիլ կաթիլ չմեռնի, հայը մի անգամ էլ պիտի մեռնի՝ որ հայը ապրի:

. Մեր Գողգոթաները Նազովրեցիի Գողգոթայէն աւելի վսեմ են: Մեր խաչը Օծեալի խաչէն աւելի ծանրագոյնն է, մեր յաղթանակները՝ գերագոյնը պիտի ըլլան յաղթանակներուն:

. Հոն ուր կախաղանները են ճօճում, Ազատութիւնն է ման գալիս, հոն՝ ուր մեռելները են ննջում՝ Յարութիւնն է մօտալուտ:

. Դուք մեր մարմինը միայն կրնաք կախել, իսկ մեր գաղափարը՝ ոչ:

. Դուք վաղը պիտի տեսնէք Արեւելքի հորիզոնին վրայ Սոցիալիստական Հայաստանը:

***ՓԱՐԱՄԱԶ***

## ՔՍԱՆՆԵՐԷՆ ԱՌԱՋ, ԿԱՄ ԱՆՈՆՑՄԷ ԵՏՔ...

*Շարունակուած էջ 6-էն*

*գիր, բեմադրիչ, դերասան, գծագրիչ: Մեծապէս նպաստած է Վանի թատերական կեանքին: Ա. Սոլախեանի գրչին կը պատկանի գեղարուեստական բարձր ճաշակով գրուած «Բանտային Յուշեր» յուշագրութիւնը, գրուած Վանի բանտին մէջ (1914 Նոյեմբեր 14-1915 Փետրուար 14): Խմբագրած է «Աստղ» եւ «Կոչնակ» պարբերականները:*

*- Կարապետ Տանթէեան ուսուցիչ:*

*- Հայկակ Երէմիշեան - Մարտական եւ մարզական ունակութիւններով ծանօթ:*

*Ձերբակալուած հնչակեան պատասխանատուները, շուրջ վեց ամիս կը մնան Վանի բանտին մէջ ու առանց դատական վճիռի, 1915 Ապրիլին, Վանի ինքնապաշտպանութեան նախօրէին, Քսաններու մահուան վճիռէն առաջ իսկ, դաժանօրէն կը խողխողուին Վանի բանտին մէջ:*

*Հակահնչակեան խորշակը կ'անցնի նաեւ Պէյրութի վրայէն:*

*ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան կողմէ Պէյրութի մասնաճիւղին յղուած շրջաբերականը, կուսակցութեան 7-րդ համագումարին կապակցութեամբ, կ'անցնի Օսմանեան իշխանութիւններուն ձեռքը: Կը ձերբակալուին ու Տիգրանակերտի պատերազմական ատեան կը ղրկուին Պէյրութի հնչակեան վեց պատասխանատուներ, որոնք դատարանի դրան իսկ չհասած, կը սպաննուին ճամբու ընթացքին: Դժբախտաբար, նահատակուած հնչակեան պատասխանատուներէն հինգին անունը ցարդ անյայտ է: Ծանօթ է միայն մէկը, հետեւեալ պայմաններու բերումով .- Թուրք ոստիկանները կու գան Միսաք վեհունիի (Միսաք Ճիկճէրճեան) գործատեղին, զինք եւս ձերբակալելու համար: Այդ պահուն, հոն ներկայ կ'ըլլայ Միսաքի կրտսեր եղբայրը՝ Միհրանը, որ ինքզինք կը ներկայացնէ իր եղբօր տեղ, գաղտնօրէն պատուիրելով իրենց պաշտօնեային որ եղբայրը ի զուր տեղ այս գաղտնիքը չբացայայտէ: Միհրան կը նահատակուի իր եղբօր՝ Միսաքին փոխարէն:*

*1914 Դեկտեմբեր - 1915 Յունուարին, լրտեսները կ'աշխուժանան նաեւ Հաճընի մէջ: Կը ձերբակալուին 35 հնչակեաններ ու նախնական հարցաքննութենէ ետք, անոնցմէ 11-ը կը ղրկուին Ատանայի պատերազմական ատեանը: Հակապետական գործունէութիւն ծաւալելու եւ թռուցիկներ ցրուելու մեղադրանքով մահուան կը դատապարտուին Կարապետ Կիզիրեան, Արամ Պոյաճեան (կախաղան կը հանուին Ճիհանի մէջ), Նազարէթ Շխրտըմեան եւ Տրդատ Մելքոնեան (կախաղան կը հանուին Ատանայի մէջ): Վեց հոգիներ կը դատապարտուին ցկեանս բերդարգելութեան (6):*

*...Ու ամէն անգամ երբ կը նշենք 20-ներուն տարեդարձը ու կը խոնարհինք անոնց յիշատակին առջեւ, ինքնաբերաբար մեր յարգանքի տուրքը կ'երթայ նաեւ անոնց, որոնք նահատակուեցան Քսաններէն անջատաբար, Քսաններէն առաջ կամ անոնցմէ ետք, բայց որոնք անբաժանելիօրէն միասին էին հայրենիքի փրկութեան փշոտ ճամբուն վրայ:*

**ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ**

1. Փարամազ, իր ելոյթներէն մէկուն մէջ հռետորական ոճով կ'ըսէ թէ՝ «Պիտի չզիջաներ այդ տէմիրճիի լակոտին հետ փիլաւ ուտել, ո՛ւր մնաց թէ անոր հետ դատուիլ քաղաքական ամենաբարդ խնդիրներու շուրջ»: («Դէպի Կախաղան», Հմայեակ Արամեանց, Կ. Պոլիս, 1918, էջ 46 եւ «Անկախ Հայաստան», Հ. Արամեանց, Կ. Պոլիս, 1919, էջ 45):
2. «Յուշարձան Ապրիլ (11) Քսանչորսի», Թէոդիկ, Կ. Պոլիս, 1919, էջ 52:
3. «Դէպի Կախաղան», էջ 31-32:
4. «Բանտային Յուշեր», Արտաշէս Սոլխանեան, Երեւան, 2002:
5. «Երիտասարդ Հայաստան», 1919 Փետրուար 8:
6. «Հաճընի Ընդհանուր Պատմութիւն», Յ. Պ. Պօղոսեան, Լոս Անճելըս, 1942, էջ 585-587:

# Massis Weekly

Volume 31, No. 22 — Saturday, JUNE 18, 2011


## Schiff and Dold Introduce Bipartisan Resolution Recognizing the Armenian Genocide

### Congressmen Urge Turkey to Safeguard Christian Heritage and Return Confiscated Church Properties

WASHINGTON, D.C. -- Rep. Adam Schiff (D-CA) has introduced a bipartisan House Resolution with Rep. Robert Dold (R-IL) recognizing and commemorating the Armenian Genocide in the House of Representatives. The resolution calls on the President and the U.S. Government to properly recognize and commemorate the atrocities that occurred in Armenia beginning in 1915, and which resulted in the death of 1.5 million Armenian men, women and children, as genocide.

"The facts of history are clear, well documented and non-negotiable – 1.5 million Armenians were deliberately murdered in the first genocide of the 20th century," Rep. Schiff said. "If we are to prevent future atrocities, we must condemn genocide whenever and wherever it occurs. It has never served our national interest to be complicit in another nation's campaign of genocide denial, and it never will. While there are still some survivors left, we have a compelling, urgent and moral obligation to speak plainly about the past."

"The United States has a duty to remember those who have no voice," Rep. Dold said. "Ninety-six years ago 1.5 million people were killed simply because they were Armenian. I've personally heard stories from Armenian-Americans in my district who lost loved ones during the Armenian genocide. This appalling tragedy should not be ignored; rather, as a nation that fights for justice it is only fitting that the United States honestly recognize the Armenian Genocide and the victims so that together we can help prevent future genocides."

Bolstering his efforts to achieve justice and human rights in the region, Rep. Schiff has also joined in co-sponsoring a second resolution introduced today by Reps. Ed Royce and Howard Berman, calling on the government of Turkey to end religious discrimination, to cease all restrictions on gatherings for religious prayer and education, and to return stolen church property.

"By expropriating church properties, harassing worshippers, and refusing to grant full legal status to members of the Christian faith, the Republic of Turkey is violating its obligation to uphold basic freedoms that are the foundation of justice and peace worldwide," Rep. Schiff said.

The Republic of Turkey is a signatory to the Universal Declaration of Human Rights, which requires "freedom of thought, conscience and religion." While Turkey considers itself a secular democracy, the U.S. Commission on International Religious Freedom has identified the Republic as one of the world's leading violators of religious freedom.

"Christians constitute less than 1 percent of Turkey's population, placing them in an especially vulnerable position," Rep. Schiff said. "This resolution will help to promote religious equality by shining a light on the unacceptable violations and intolerance of religious freedom in Turkey."

## Armenia, Azerbaijan Report Significant Progress in Karabakh Peace Process



**Edward Nalbandian and Elmar Mammadyarov in Moscow**

MOSCOW -- Armenia and Azerbaijan reported significant progress towards the resolution of the Nagorno-Karabakh conflict following a meeting of their foreign ministers held in Moscow on Saturday.

"Following the discussions, the sides managed to bring their positions closer on a number of issues of the Basic Principles of the Karabakh settlement. The draft of the given document will be presented at the regular trilateral summit in late June," the Armenian Foreign Ministry said following the June 11 meeting in Moscow of Minister Edward Nalbandian with his Azerbaijani counterpart Elmar Mammadyarov, hosted by Russia's chief diplomat Sergei Lavrov.

The Azerbaijani Embassy in Russia issued a virtually identical statement cited by Azerbaijani news agencies. Neither side specified the issues that were reportedly agreed upon by Nalbandian and Mammadyarov.

The two ministers met in Moscow just days after U.S., Russian and French diplomats co-chairing the OSCE Minsk Group ended yet another tour of the conflict zone. The co-chairs' talks in Baku, Stepanakert and Yerevan in turn followed a joint statement on the Karabakh dispute issued by the U.S., Russian and French presidents.

**Continued on page 3**

## Opposition Activist Sarkis Hatspanian Released from Jail

YEREVAN -- Sarkis Hatspanian, an opposition activist and veteran of the Nagorno-Karabakh War, has been released from Vardashen penitentiary

Hatspanian, a French citizen of Armenian descent, criticized the opposition Armenian National Congress (HAK) and claimed that he is facing deportation from Armenia after leaving the Vartashen prison in Yerevan.

Hatspanian was arrested in November 2008 after alleging, in an newspaper interview, a planned attempt on the life of President Serzh Sarkisian. He implicitly claimed that the murder plot was hatched by Sarkisian's predecessor, Robert Kocharian.

Hatspanian was later convicted of "false denunciation" and sentenced to three and a half years in prison. He and rejected the charge as politically motivated.

"My release is also Serzh Sarkisian's release because that person is held hostage by Robert Kocharian in connection with my case," he said.



**Sarkis Hatspanian**

A native of Turkey, Hatspanian moved to Armenia from France in 1990 and took part in the Karabakh liberation war.

Hatspanian exposed his disappointment with the HAK leadership as he was greeted outside the Vartashen prison by his wife, children and a handful of friends chanting "Sarkis!" Senior HAK representatives were con-

**Continued on page 3**

## Erdogan's Ruling Justice and Development Party Wins 3rd Term in Turkey

ANKARA -- Recep Tayyip Erdogan has been cast in the dual role of consensus builder and Turkey's most successful modern prime minister after his ruling Justice and Development Party (AKP) won a third consecutive election landslide with nearly 50 percent of the vote.

The resounding victory margin saw the socially conservative AKP increase its vote share from its 2007 poll win by more than three points to 49.9 percent.

But rather than being more powerful than ever, the result leaves Erdogan short of the two-thirds parliamentary majority needed to unilaterally reshape Turkey's constitution, which was written after a military coup in 1980.

With 326 out of the national assembly's 550 seats — four fewer than it gained in 2007 — the AKP is also five short of what it would need to call a referendum for a new constitution.

The prime minister is widely believed to have been planning to create a presidential system in which he would be elected president, cementing his already formidable power.



**Erdogan celebrating his victory**

The main opposition party, the avowedly secular Republican People's

**Continued on page 4**

**Turkish-Armenian Normalization Seen Unlikely After Elections**
**See page 2**

# Turkish-Armenian Normalization Seen Unlikely After Elections

Prime Minister Recep Tayyip Erdogan is unlikely to kick-start Turkey's ill-fated rapprochement with Armenia even after his Justice and Development Party (AKP) won yet another general election, Armenian political analysts said on Monday.

They predicted that the Turkish government will continue to link the full normalization of Turkish-Armenian relations with a resolution of the Nagorno-Karabakh conflict acceptable to Azerbaijan.

Armenia and Turkey were due to establish diplomatic relations and reopen their border in accordance with two Western-backed protocols signed in October 2009. Ankara has since repeatedly stated that the Turkish parliament controlled by the AKP will not ratify them until there is decisive progress in international efforts to settle the Karabakh dispute.

Yerevan has rejected this precondition, accusing the Turks of acting against the letter and the spirit of the agreements. President Serzh Sarkisian and other Armenian leaders have also threatened to formally annul them.

Artak Shakarian, a Yerevan-based Turkey expert, suggested that while the Erdogan government might attempt to revive normalization process its chances of success will be slim. He argued that Turkey's leading opposition parties, which have been critical of the government's Armenian policy, have increased their presence in parliament despite the AKP's landslide victory.

"According to some sources, secret Turkish-Armenian negotiations are continuing, they are preparing ground to revive the protocols," Shakarian told RFE/RL's Armenian service. "But it must be pointed out that the AKP will have fewer seats in the new Turkish parliament. So Erdogan will again have to negotiate with opposition parties or at least independent Kurdish deputies."

"There is a view that Erdogan could take an interesting step and ratify one of the two protocols, which is weaker and easier to sell to Azerbaijan. Namely, the protocol on the establishment of diplomatic relations [with Armenia,]" he said.

Ruben Melkonian, a Turkish studies professor at Yerevan State University, was more pessimistic. He said that Erdogan's chief priority now is to enact a new Turkish constitution favorable to the AKP and that he will have to court the opposition for that purpose.

"I think that with Turkey entering another electoral phase ... it is difficult to expect it to make active efforts to normalize Turkish-Armenian relations," Melkonian told RFE/RL's Armenian service. Protocol ratification will become a real possibility only in case of "unexpected geopolitical developments" in the region, he said.

# Catholicos Karekin II Visits Armenian-Populated Javakhk



His Holiness Karekin II, the Supreme Patriarch and Catholicos of All Armenians, on Monday arrived in Javakhk as part of his six-day pontifical visit to Georgia.

Karekin II, who was accompanied by a Georgian delegation headed by Patriarch Illia II, became the first Catholicos since Khrimian Hayrik to visit the mostly Armenian-populated region.

Upon arriving in Javakhk, Karekin II was greeted by people of Akhaltskha in Queen Tamara Square, where both religious leaders addressed the crowd.

The two church leaders then made their way to the St. Gregory the Illuminator Armenian Church in Akhaltskha. There to greet them were local community leaders and young Armenians dressed in folk costumes who offered the traditional welcome of "bread and salt".

A liturgy was officiated by the Catholicos at the church, where Ilia II also offered his blessings.

Catholicos Karekin II then addressed the assembled crowd, saying he was pleased to see that Javakhk Armenians continued to follow the path of their ancestors and remain faithful to the Armenian Church.

The Armenian Church pontiff urged the crowd to boldly face the challenges confronting them while at the same time promising that the Church would do all it could to provide religious and educational guidance.

The delegation then headed to Hovannes Tumanyan Armenian School for a tour of the facilities.

A reception, organized by local officials, was held later in the evening.

# "Armenian Architects of Istanbul" Exhibition Opens in Yerevan




YEREVAN -- "Armenian Architects of Istanbul in the Era of Westernization" is a unique exhibition that will opens in Yerevan on Tuesday, June 14 at the National Museum – Institute of Architecture of Armenia.

Curated by Hasan Kuruyazici, the exhibition presents the role of forgotten Armenian architects in the process of forging the urban landscape of Istanbul.

The exhibition is the brainchild of the International Hrant Dink Foundation, in collaboration with HAYCAR Association and Istanbul 2010 European Capital of Culture Agency.

Visitors will be able to explore the life stories of more than 40 Armenian architects who lived between late 19th and early 20th centuries. The history, architectural drawings and documents about the ancient versions of 100 buildings that were designed by these architects will also be displayed at the exhibition via photographs and two short films.

The photographs of buildings, listed by Hasan Kuruyazici after his long trips through the streets of Kurtulus-Tatavla, Pangalti, Taksim, Cihangir, Tarlabasi, Tünel, Galata, Eminönü and Mahmutpasa, show us the contribution of Armenian architects in the westernization process of Istanbul.

Armenian architects played a significant role in the shaping up of the architectural silhouette of Istanbul by blending their knowledge based on tradition with Western architecture, which gradually brought the European style to Istanbul.

Designed by Erkal Yavi, the exhibition was previously held at Istanbul Modern Arts Museum, the Istanbul Bahceshir University and the Modern Arts Centre of Ankara Cankaya Municipality.

The exhibition will travel to Gyumri in September and Vanadzor in October. A book that features articles on the architects and architecture of the period together with the photographs of buildings has been published in Armenian-English and will be available at the exhibition.

The exhibition will be on view from June 14 – August 31at the National Museum – Institute of Architecture of Armenia, Republic Square Government Bldg. #3, 1st Floor, Yerevan. (+374 10) 524630

# Armenian Military 'Interested' In Russian Rocket Systems

MOSCOW -- Armenia has indicated its desire to acquire Russian rocket artillery systems that have a firing range of up to 90 kilometers, according to a senior Russian defense industry executive.

Nikolay Dimidyuk of the state-run Rosoboronexport company was quoted this week by the Moscow-based magazine "Voenno-Promyshlenny Kurier" as saying that Armenian officials showed an interest in the BM-30 Smerch (Tornado) multiple launch rocket systems during a recent international arms exhibition in Minsk.

Dimidyuk said that they as well as military officials from Kazakhstan held "interesting negotiations" with Rosoboronexport representatives in the Belarusian capital. "These were not mere courtesy visits, we discussed concrete issues," he said.

"We have not cooperated so closely with members states of the Collective Security Treaty Organization (CSTO) before," added the Russian official.

The Armenian Defense Ministry declined to confirm or deny this information. "Armenia's armed forces are constantly supplied with new and modern weaponry," ministry spokesman Davit Karapetian told RFE/RL's Armenian service. "It is not expedient to divulge details of our arms purchases."

A Defense Ministry source, who asked not to be identified, said in that context that the Armenian army already possesses Smerch systems.

Developed in the early 1980s, Smerch is arguably the most powerful multiple launch rocket system in the world. It can fire twelve 300-milimeter rockets in a single salvo that lasts for less than a minute.

The truck-mounted systems are currently estimated to cost $12 million each. It is not clear whether Armenia can acquire them at a knockdown price or even free of charge thanks to its membership in the CSTO or a Russian-Armenian defense agreement signed last August. The agreement commits Moscow to supplying the Armenian military with "special military hardware."

# The Armenian Connections in Asian




Raffles hotel, Singapore

**By Andrew Sheng**
**The Star, Malaysia**

As he traces the Armenian exploits in Asia, Andrew Sheng feels welcoming talents from small countries and giving them space to weave their webs can impact a host greatly.

What is the connection between Hong Kong, Yangon, Singapore, Penang, Surabaya, Calcutta and Shell Oil? Answer: The Armenian connection.

In fact, there are Armenian Streets in Singapore, Penang, New Delhi, Kolkata, Chennai (Madras) and Dhakka (Bangladesh). Armenian Street in Penang is today also called the street of harmony, because there are Muslim mosques, Chinese temples and Indian temples all in the same vicinity. An odd fact of history is that three Armenian churches have been built on No. 2, Armenian Street in Calcutta, Dacca and Madras. Is that a coincidence?

My thought for today was inspired by my good friend Bernard Chan's reference to Hong Kong street names, particularly Chater Road. Having worked in Chater House, I had not realized that Sir Catchick Paul Chater was born of Armenian parents in Calcutta in 1846 and became a successful businessman in Hong Kong, having co-founded Hongkong Land with the Keswicks and also a steward at the Hong Kong Jockey Club.

Armenians are probably the largest diaspora in the world in relative terms, as there are 11 million Armenians with 3 million living in Armenia, compared with 13 million Jewish population worldwide, of which 5.7 million reside in Israel.

Armenians in the Far East came via India, mostly as merchants, the most famous being Thomas Cana, a rich merchant arriving in Kerala in 780 AD. The earliest reference to an Armenian in the Far East is the gravestone of Jacob Shameer in Malacca, born in New Julfa, Isfahan, Persia who died on Jan 3, 1746.

In the 17th and 18th century, Armenians were already important traders of Indian goods for the Russian and Italian markets. Based from their foothold of Surat in India, they began the China trade, noting in 1783 that they lost lots of money in a ship from China because of the Anglo-French war.

In 1797, there is a letter describing Armenian trading from Madras to Penang, but sailing to Malacca, where they were attacked by three French frigates and lost all their possessions. But they lived to trade another day.

There is no doubt that Armenian entrepreneurs played an important mercantile role in British colonial history in the Far East. Singapore was founded by Sir Thomas Raffles in 1819. By 1835, the small Armenian community in Singapore had grown prosperous enough to build the Armenian Church of Saint Gregory, the second Christian church to be built in Singapore.

Anyone who has travelled in the Far East would have stayed in the chain of hotels that the Armenian Sarkies brothers (Martin, Arshak, Aviet and Tigran) founded in the key commercial cities the Eastern & Oriental Hotel in Penang (1885), the Strand Hotel in Yangon (1896), the Raffles Hotel in Singapore (1899) and the Majapahit Hotel in Surabaya (1910). At one time, the Sarkies family also owned the Adelphi Hotel in Singapore.



Sir Catchick Paul Chater

In addition to the church and Raffles Hotel, the Armenian contribution to Singapore included the founding of the newspaper, Straits Times by Catchick Moses in 1845 and the orchid Vanda Miss Joaquim, named after Agnes Joaquim, which is today the national flower of Singapore.

The Royal Dutch Shell plc, today the second largest energy company in the world, was created in 1907 from the merger of the Royal Dutch Petroleum Company (1890) and the British Shell Transport and Trading Company, founded by the Samuel brothers in 1897. From its earliest days, the history of oil was dominated by global giants.

Shell was formed mainly in the face of competition from the rise of the Rockefeller owned Standard Oil, which was broken up in 1911 and its successors became today's ExxonMobil, Chevron, Amoco and ConocoPhillips. Royal Dutch Shell made the first oil discovery in East Sumatra where production began in 1885.

Few people realised that it was the Armenian oil trader Calouste Sarkis Gulbenkian (1869-1955) who arranged the merger between the two companies. During his time, he was probably one of the wealthiest men in the world, starting in the Russian oil industry and being one of the first to explore oil in Iraq, then part of the Ottoman empire, through the consortium Turkish Petroleum Company.

Even though he was reputedly offered sole ownership of the Iraqi oil concession, he believed in partnership with those European companies which had the ability and capacity to develop the oil fields. He was famous for being Mr 5%, retaining 5% of all his deals, which included the Shell merger.

Most people remember him for the Museum Gulbenkian in Lisbon, which houses his wonderful collection of art. The Museum is a treasure house full of choice pieces from the whole range of art from Mesopotamia, Eastern Islamic and a stunning collection of Lalique crystal pieces.

Fans of modern Lalique should go to Lisbon just to see what was possible when the artist Rene Lalique (1860-1945) was at the height of his creative powers. There is a whole room in the Gulbenkian museum dedicated to his glass and jewelry pieces that are a must to visit when you go to Lisbon.




Chater Road, Hong Kong

When you realise that such a small community of immigrants from a small country in West Asia can make such a footprint in history in the rest of Asia, you begin to understand the importance and opportunities of globalisation.

Globalisation is not about quantity, but the quality of interconnection between different parts of the world. Small communities of traders have made possible the trading of goods and services around the world, even in the days when communication was difficult. Indeed, their foresight and ability to see opportunities and to create partnerships and mergers of new enterprise in new fields is their hallmark of success.

These communities thrived on knowledge, research and innovation.

The footprints of Armenian traders and investors, past and present, suggest to us that talented people from small countries have a lot to offer the rest of the world. It is no wonder that cities that welcomed and allowed these communities to flourish became themselves the centres of trading and commerce in Asia, especially Hong Kong and Singapore.

**Andrew Sheng is author of the book, From Asian to Global Financial Crisis.**

## Armenia, Azerbaijan Report Significant Progress

Continued from page 1

The three leaders urged their Armenian and Azerbaijani counterparts to finalize the basic principles, drafted by the three mediating powers, at their next meeting. It is due to be hosted by Russian President Dmitry Medvedev in Kazan, Russia on June 25. The international negotiators also called upon the parties "to avoid any provocative actions or statements that might undermine the negotiating process during this critical period."

Earlier, in May, the leaders of the three mediating powers issued a joint statement from the G8 summit in France urging the presidents of Armenia and Azerbaijan "to demonstrate their political will by finalizing the Basic Principles of settlement during their upcoming summit in June."

The Armenian-Azerbaijani summit is due to be hosted by Russian President Dmitry Medvedev in Kazan, Russia, on June 25.

## Sarkis Hatspanian Released from Jail

Continued from page 1

spicuously absent.

Asked to comment on the HAK-government dialogue, the oppositionist said, "Doesn't this [absence] say it all? It answers your question, doesn't it?"

"Both parties to the dialogue are not here right now," he told RFE/RL's Armenian service. "I wonder where those people are. Has any of them knocked on my apartment door and inquired about my kids in the last three years?

"I'm going to put these questions to those who are absent from this place now. They haven't bothered to say 'welcome back.' This shows the difference between their and my moral values."

Hatspanian also said that his chief objective now is to avoid deportation from the country, which was threatened by the authorities following the March 2008 unrest in Yerevan. "In the next few days Serzh Sarkisian will demonstrate whether he really wants Diaspora Armenians to live in Armenia," he said.

# ARPA Institute Presents an Illustrated Lecture/Seminar on "In Search of Armenian Cilicia" by Prof. Richard Hovannisian

After traveling through much of historic Western Armenia four years ago, Richard Hovannisian, AEF Professor of Modern Armenian History, UCLA, journeyed to Caesarea and Cilicia two years later, this time as historian-guide of a tour organized by NAASR. Beginning with the rock-hewn Orthodox cave churches of Cappadocia, the group traveled to Caesarea/Gesaria, Talas, Evereg-Fenese, Chomakhlu, and over the Taurus Mountains to Hadjin, Sis, Adana, Tarsus, Mersin, Selefke, Dortyol, Antioch, Musa Dagh, Killis, Aintab, Zeitun, and Marash. Scenes from these former vibrant centers of Armenian life will be shown and discussed by Professor Hovannisian at Merdinian school Auditorium: 13330 Riverside Dr. Sherman Oaks, CA 91403, on Thursday, June 23, 2011 @ 7:30PM.



**Prof. Richard Hovannisian**

Richard Hovannisian is the Professor of Armenian and Near Eastern History and Holder of the Armenian Educational Foundation Chair in Modern Armenian History at the University of California, Los Angeles (UCLA). He was born and raised in Tulare, California. He received his B.A. and M.A. in history from the University of California, Berkeley and Ph.D. in history from UCLA. A member of the UCLA faculty since 1962, he has organized both the undergraduate and graduate programs in Armenian history and has guided many students to the M.A. and Ph.D. degrees in Armenian History.

Dr. Hovannisian served as the Associate Director of UCLA's Center for Near Eastern Studies from 1978 to 1995. He is the first Holder of the AEF Chair since 1986. From 1965 to 1969 he was also Associate Professor of History at Mount Saint Mary's College in Los Angeles, and has served as a distinguished visiting professor at the University of California, Berkeley; California State University, Fresno; Florida Atlantic University; and Clark University. Professor Hovannisian is a Guggenheim Fellow and has received many honors for his scholarship, civic activities, and advancement of Armenian studies. He is a founder and six-time president of the Society for Armenian Studies and serves on the editorial boards of five journals and on the boards of directors of ten scholarly and civic organizations. He has given hundreds of lectures and participated in numerous international forums and in the media on Armenian issues.

Since the 1970's, Dr. Hovannisian has focused on remembrance and denial of the Armenian Genocide, about which he has spoken in 35 countries, more than 150 colleges and universities, and more than 1000 public lectures and forums on six continents. He has served as a consultant to the California State Board of Education, authoring the chapter on the Armenian Genocide in the State's Social Studies Model Curriculum on Human Rights and Genocide. Dr. Hovannisian has also served as a consultant to the Facing History and Ourselves Organization, assisted in the preparation of its resource book on the Armenian Genocide, and introduced the subject in numerous Facing History teacher-training institutes and summer workshops.

Dr. Hovannisian is the author of the four-volume history The Republic of Armenia and its forerunner, Armenia on the Road to Independence. He has edited and contributed to more than twenty other books.

# COAF to Host Summer Soiree at The Standard Hotel in New York

NEW YORK -- The Children of Armenia Fund (COAF) is pleased to announce Summer Soiree, a fundraising and awareness-raising cocktail party benefiting COAF's education programs in rural Armenia. This event will be hosted by Michael Aram, Khajak Keledjian and Andrea Martin and will take place at The Standard, New York's Highline Room + Terrace on Wednesday, June 22nd from 7:00 pm to 10:00 pm. Tickets are $150 each if purchased before June 15th, cocktail attire is suggested.

Tickets for the event can be purchased by visiting COAF's website, http://www.coafkids.org/, calling 212-994-8234 or mailing a check to COAF at 162 Fifth Avenue, Suite 900, New York, NY 10010. 100% of the net proceeds from the event will benefit children and youth in rural Armenia.

The Children of Armenia Fund (COAF) is a non-profit organization, founded in 2000 with headquarters in New York City and extensive on the ground operations (with a staff of 20 professionals) in Armenia since 2004. COAF works to secure a future for children in Armenia's impoverished rural villages through improved education, health care and community life and economic conditions.

The key programs that make up COAF's holistic approach are in the fields of Education, Health, Child & Family Services.

# AMAA Spring Concert Delights Audience in New York City



**The young performers**

One of the most eagerly anticipated events sponsored by the Armenian Missionary Association of America (AMAA) each year is the Spring Concert held at the Armenian Evangelical Church of New York. Benefitting the AMAA's Summer Camps in Armenia and Karabagh, the Concert was held on May 15 and featured a varied program of classical and Armenian music.

AMAA Board member Peter Kougasian, Esq. gave the opening remarks. Lucy Janjigian, Board member and National Chair of the AMAA Summer Camp and Christmas Committee, brought greetings. Levon Filian, Executive Director of the AMAA, welcomed everyone and thanked the Armenian Evangelical Church of New York for hosting the event.

The young performers included Natalie Zabel Aroyan, an Armenian-Australian soprano, who was awarded first place in the Opera Foundation New York competition; violinist Nazig Tchakarian, an international soloist who made her Carnegie Hall debut in May, 2008; violist Aleksandr Nazaryan, a graduate of the Julliard School of Music; cellist Benjamin Larsen, an international performer; and pianist Hayk Arsenyan, a native Armenian who is currently on the faculty of New York University's Tisch School of the Arts.

The afternoon's program combined classical and Armenian repertoire. The Concert began with Dvorak's Piano Quartet #1 (opus 23 in D major). The piece proved to be a perfect vehicle to display the precision and artistic nuance of the ensemble. Next were two Chopin piano etudes: opus 10, number 6, a meditative piece that has been described as "full of stifled sorrow," and opus 10, number 5, also called the "black key etude" because the right-hand part is played entirely on the black keys. Mr. Arsenyan executed both etudes with technical excellence and artistic soulfulness. Ms. Aroyan displayed her vocal gifts with moving interpretations of pieces by Massenet and Catalani. Mr. Arsenyan then displayed his gift of interpretation for contemporary music by performing the modern, polyphonic "Suite for Piano" by Alan Hovhaness.

In closing, Summer Camp and Christmas Committee Chair Elbiz Baghdikian expressed the mood perfectly by saying that the Concert, like the closing songs themselves, was "about our faith and giving thanks, and about us not knowing about our world, and about our need to love each other. This really spoke about why we are here today – reaching out to each other as good Christians and as human beings."

# Erdogan's Ruling Justice and Development Party

**Continued from page 1**

Party, raised its showing to 26 percent — its best result in 30 years — under a new leader, Kemal Kilicdaroglu.

The right-wing Nationalist Action Party (MHP) received 13 percent of the votes.

The pro-Kurdish Peace and Democracy Party (BDP) also succeeded in winning 36 seats by fielding its candidates as independents — a move aimed at overcoming Turkey's parliamentary-threshold rule that prevents any party with less than 10 percent of the national vote gaining seats in the national assembly.

Turnout among Turkey's 52 million registered voters was about 86 percent.

Two historians, who staunch deniers of the Armenian Genocide, gained seats in the Turkish parliament.

One of them is a candidate from ruling Justice and Development Party Seyit Sertcelik, an author of a book about Genocide denial. He is the only Turkish historian who masters Armenian.

Another historian who entered the parliament and is famous for his anti-Armenian stance, Yusuf Halacoglu was nominated by Nationalist Movement Party.

Halacoglu, former head of Turkish Historical Society, recently claimed he was fired at the request of Armenia and U.S.

No Armenian candidate was nominated by Turkish parties.

news am

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱԿԱՆԱՏԵՍ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՈՐՊԷՍ ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔ՝ ԵՐԵՔ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Վերժինէ Սվազլեան. Հայոց ցեղասպանութիւն. Ականատես վերապրողների վկայութիւններ, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., 2011, 880 էջ:

Verjiné Svazlian. The Armenian Genocide: Testimonies of the Eyewitness Survivors. Yerevan: “Gitoutyoun” Publishing House of NAS RA, 2011, 850 p.

Verjiné Svazlian. Ermeni Soykirimi: Hayatta Kalan Görgü Taniklarinin Anlattiklari. Istanbul: “Belge” Uluslararasi Yayincilik, 2011, 846 p.



***ԱՐՄԷՆ ՄԱՐՈՒՔԵԱՆ***
***Պատմական գիտութիւնների թեկնածու, դոցենտ***
***ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի աւագ գիտաշխատող***

*Թերեւս սխալուած չենք լինի, եթէ ասենք, որ Հայոց ցեղասպանութեան ականատես-վկայ վերապրողների յուշերի ու վկայութիւնների հաւաքագրումը Վերժինէ Սվազլեանի հաւատամքն է: Սկսած 1955 թուականից տասնամեակների ընթացքում տիկին Սվազլեանը Հայաստանում եւ Սփիւռքի տարբեր համայնքներում (Յունաստան, Ֆրանսա, Իտալիա, Գերմանիա, ԱՄՆ, Գանատա, Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, Թուրքիա) զբաղուել է Հայոց ցեղասպանութեան վերապրողների յուշերի ու վկայութիւնների հաւաքման՝ գրառման, ձայնագրման, տեսագրման եւ ուսումնասիրման աշխատանքով: Նա նոյնիսկ միջազգային գիտաժողովներին մասնակցելու կարճատեւ ժամանակը ծառայեցրել է այդ նպատակին:*

*ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի, ինչպէս նաեւ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի համատեղ հրատարակութեամբ լոյս է տեսել բանասիրական գիտութիւնների դոկտոր Վերժինէ Սվազլեանի «Հայոց ցեղասպանութիւն. Ականատես վերապրողների վկայութիւններ» 700 միաւոր պատմափաստագրական սկզբնաղբիւրային նիւթ պարունակող ստուարածաւալ աշխատութիւնը՝ հայերէն, անգլերէն եւ թրքերէն: Պէտք է նշել, որ մինչ այդ, 2000 թ. արդէն իսկ լոյս էր տեսել հեղինակի նոյն խորագրով հայերէն ժողովածուն, որը պարունակում էր 600 միաւոր ականատես վերապրողների վկայութիւններ: Անցած տասնամեակը հեղինակը ծառայեցրել է այդ յիշողութիւնները լրացնելով եւ աւելացնելով նոր գրառած եւս 100 միաւոր նիւթերով: Վ. Սվազլեանի երեք լեզուներով հրատարակուած այս վերջին ստուարածաւալ աշխատութիւնը, ժողովրդական վկայութիւնների տեղավայրային տարածուածութեամբ, իր ինքնատիպ բնոյթով, որակական ու քանակական յատկանիշներով հայ իրականութեան մէջ եզակի երեւոյթ է:*

*Անշուշտ հեղինակի համար բոլորովին էլ դիւրին չի եղել յայտնաբերել եւ, ամենակարեւորը, խօսեցնել այդ մարդկանց, որոնք փաստօրէն անցել են դժոխքի միջով ու ի հեճուկս ամէն ինչի ողջ են մնացել: Հայոց ցեղասպանութեան վերապրողների համար տառապանքները պատմելը նշանակում էր վերյիշել բոլոր սարսափներն ու կրկին վերապրել այդ ամէնը, ենթարկուելով հոգեկան ապրումների ու սթրեսի: Սակայն Վ. Սվազլեանին, այնուամենայնիւ, յաջողուել է հիմնաւորել գործի կարեւորութիւնը եւ գտնել այնպիսի հնարքներ ու համոզիչ փաստարկներ, որպէսզի հայ ժողովրդի դէմ կատարուած այդ ծանր յանցագործութեան այլեւս անգտանելի դարձած անգին վկաները տեղի տան ու սկսեն պատմել եղելութիւնը: Վ. Սվազլեանի վկայութեամբ, վերապրողները նոյնպէս քաջ գիտակցում էին իրենց խօսքերի ու ցուցմունք-վկայութիւնների կարեւորութիւնը, ուստի եւ յուզմունքով համաձայնւում էին պատմել իրենց ու իրենց հարազատների գլխով անցած դաժանութիւններն ու տառապանքները: Հեղինակն ընդգծում է, որ վերապրողները բարոյական պատասխանատուութիւն եւ պարտքի բարձր գիտակցութիւն են զգացել իրենց պատմածի նկատմամբ. նրանցից շատերը իրենց յիշողութիւնները հաղորդելուց առաջ խաչակնքուել են կամ՝ երդուել, ճիշտ այնպէս, ինչպէս ամէն մի վկայ դատարանում երդւում է՝ ասել միայն ճշմարտութիւնը:*

*Աշխատութիւնն աչքի է ընկնում իր կուռ կառուցուածքով եւ գիտատեղեկատուական հարուստ տուեալներով:*

*Ներածութիւնում հեղինակը հիմնաւորում է աշխատանքի կարեւորութիւնը, ներկայացնում նպատակը եւ նիւթերի ընդգրկման վայրերը:*

*Հատորը բաժանուած է երկու բաժինների, որոնցից առաջինը՝ «Պատմաբանագիտական ուսումնասիրութիւն», հեղինակի գիտական ուսումնասիրութիւնն է, որով նա գիտական վերլուծութեան է ենթարկում հաւաքուած հսկայական փաստավաւերագրական նիւթը: Այս բաժինը բաղկացած է երկու ընդարձակ ենթաբաժիններից՝ «Ականատես-վկայ վերապրողների հաղորդած պատմական վկայութիւնների ժանրային եւ տիպաբանական առանձնայատկութիւնները» եւ «Հայոց ցեղասպանութեան ընթացքը ըստ ականատես վերապրողների վկայութիւնների», որոնցում լուսաբանւում են ականատես-վերապրողների յուշերի ու վկայութիւնների ժանրային տեսակները եւ ընդգծւում դրանց առանձնայատկութիւնները: Չափազանց կարեւոր պէտք է համարել հեղինակի կողմից ականատես-վերապրողների յուշերի եւ վկայութիւնների համադրումը Հայոց ցեղասպանութեան ընթացքի հետ, քանզի նման համադրութիւնը թոյլ է տալիս Մեծ եղեռնի ընթացքը եւ առանձին դէպքերի իրողութիւնը հիմնաւորել նաեւ ժողովրդական բանաւոր վկայութիւններով:*

*Աշխատութեան երկրորդ՝ «Պատմական սկզբնաղբիւրներ» բաժինն իրենից ներկայացնում է ականատես-վերապրողների յուշերն ու վկայութիւնները (700 միաւոր), որոնք ըստ տեղավայրերի եւ տարիքային առանձնայատկութիւնների խմբաւորուած են «Պատմական յուշ-վկայութիւններ» (315 միաւոր), «Պատմական զրոյց-վկայութիւններ» (70 միաւոր) եւ «Պատմական երգ-վկայութիւններ» (315 միաւոր) ծաւալուն ենթաբաժիններում:*

*Ականատես-վկաների պատմած յուշ-վկայութիւններն ընդգրկում են տարբեր թեմաներ: Ընթերցողը կարող է պատկերացում կազմել հայկական բնաշխարհի գեղեցկութեան, հայերի նահապետական առօրեայ կենցաղի ու սովորոյթների, ինչպէս նաեւ՝ բնօրրանում նրանց կեանքի պայմանների մասին: Յուշ-վկայութիւնները տեղեկութիւններ են պարունակում նաեւ համիդեան կոտորածների, երիտթուրքերի կառավարութեան պարագլուխների (Թալեաթ, Էնվեր, Ջեմալ, Նազըմ, Բեհաեդդին Շաքիր եւ այլք) հայերի հանդէպ գործադրած դաժանութիւնների (հարկահաւաք, զօրահաւաք, զինահաւաք, ողջակէզ, ջարդ, կոտորած եւ այլն), դէպի Միջագետքի անապատների համակենտրոնացման վայրեր (Տէր էլ Զօր, Ռաս ու Այն, Ռաքքա, Մեսքենէ, Սուրուճ եւ այլուր) հայերի բռնի տեղահանութիւնների, նրանց կրած անասելի տառապանքների (քայլք ուժասպառուելու աստիճան, ծարաւ, քաղց, համաճարակ, մահուան սարսափ եւ այլն), ինչպէս նաեւ արեւմտահայերի մղած ինքնապաշտպանական մարտերի (Վանի հերոսամարտ, Շատախի, Շապին-Գարահիսարի, Սասունի գոյամարտեր, իսկ աւելի ուշ՝ Այնթապի – Հաճընի հերոսամարտեր եւ այլն) մասին:*

*Պէտք է նշել, որ հեղինակը չի բաւարարուել միայն ականատես-վկաների յուշերն ու վկայութիւնները հաւաքագրելով ու համակարգելով, այլեւ վերլուծել եւ ուսումնասիրել է, դրանք համեմատելով յայտնի պատմական իրադարձութիւնների հետ, եւ եկել է այն եզրակացութեան, որ դրանք «դոյզն ինչ կասկածի տեղիք չեն տալիս» (էջ 16): Դեռ աւելին՝ յուշ-վկայութիւններում եւ զրոյց-վկայութիւններում յիշատակւում են նաեւ նախկինում անյայտ հերոս հայորդիներ, որոնք պայքարել են ընդդէմ բռնութեան, նահատակուել, նաեւ՝ դիմակայել ու վերապրել: Յուշ-վկայութիւններով եւ զրոյց-վկայութիւններով կարելի է ոչ միայն վերականգնել Հայոց ցեղասպանութեան ժամանակագրական ողջ ընթացքը եւ վերահաստատել դրանց եղելութիւնը, այլեւ՝ բացայայտել նոր մանրամասներ ու փաստեր, կապուած այս կամ այն իրադարձութեան հետ:*

*Առանձնապէս ուշադրութեան է արժանի «Պատմական երգ-վկայութիւնների» ենթաբաժինը, որն իր հերթին, ելնելով թեմատիկ բազմազանութիւնից, հեղինակը խմբաւորել է հետեւեալ կերպ. ա. Զօրահաւաքի, զինահաւաքի եւ բանտարկեալի երգեր, բ. Տեղահանութեան եւ կոտորածի երգեր, գ. Որդեկորոյս մայրերի, որբի եւ որբանոցի երգեր, դ. Հայրենասիրական եւ հերոսամարտերի երգեր, ե. Բռնագաւթուած Հայրենիքի եւ պահանջատիրութեան երգեր, զ. Պատմական երգերի նոտագրութիւններ: Յատկանշական է, որ վերապրողների հաղորդած նոյնիսկ հայերէն եւ յատկապէս թրքալեզու երգերում մեղադրանք է հնչում դահիճների դէմ եւ խօսւում է ոչ միայն տառապանքի ու ցաւի, այլեւ՝ հերոսական դիմադրութեան ու, որն ամենակարեւորն է, պահանջատիրութեան մասին:*

*Ուշադրութեան է արժանի այն հանգամանքը, որ աշխատութիւնն օժտուած է արժէքաւոր գիտական տեղեկատուութեամբ: Աշխատութիւնն ունի դժուար հասկանալի եւ օտարամոյծ բառերի Բառարան, պատմական դէպքերի ու դէմքերի մասին մանրակրկիտ*

*Շար.ը էջ 18*

# Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵԼԻՔ ԹԱՆԳԵԱՆ
## Ծննդեան 140 ամեակի առթիւ

***ՎԱՀԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ***

*Բազմավաստակ առաջնորդ Ատրպատականի թեմի:*

*Բարձրահասակ, թիկնեղ, իր աչքերի յատուկ արտայայտութիւնով, խօսքը կտրուկ եւ ազդեցիկ, լաւատեղեակ հայ ժողովրդի եւ միջազգային պատմութեան եւ գրականութեան: Սրանք էին ահա առաւելութիւնները Մելիք Թանգեան Սրբազանի, որն 36 տարի որպէս քաջ հովիւ, անբասիր հոգեւորական, եղաւ Ատրպատականի Հայոց Առաջնորդը: Քաջաբար պաշտպանեց հայ ժողովրդին:*

*Ներսէս Արք. Մելիք Թանգեան ծնուել էր 1866 թուի Մարտ 16ին, Զանգեզուրի Բռնակոթ գիւղում: Աւազանի անունով եղել է Նիկողայոս: Նախնական կրթութիւնը ստացել է գիւղում, ապա Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանում: 1896 թուին մեկնել է Պետերբուրգ, ընդունուել է համալսարան եւ աւարտել է համալսարանի Իրաւաբանական ֆակիւլտէն: Նրա նախնական ասպարէզը եղել է կրթական գործը:*

*Մելիք Թանգեանը Պետերբուրգից վերադառնալով, իրեն նուիրել է հայ նոր սերունդի կրթութեան եւ դաստիարակչական գործին, ծանօթացնելով հայոց լեզուն, պատմութիւնը եւ մշակոյթը:*

*Եղել է ուսուցիչ իր հայրենի գիւղում, Շուշի քաղաքի թեմական դպրոցում եւ Պաքու քաղաքի հայկական դպրոցում, մինչեւ ցարական կառավարութեան կողմից հայկական դպրոցների փակուելը: Մելիք Թանգեանը հրաժարուելով աշխարհիկ կեանքից, 1899 թուին, Էջմիածնում, Խրիմեան Հայրիկի օրօք ձեռնադրւում է աբեղայ եւ նշանակւում է Տաթեւի պատմական վանքի վանահայր եւ Զանգեզուրի առաջնորդի փոխանորդ: 1905 թուի հայ-թաթարական ընդհանրումների ժամանակ, ռուս կառավարութիւնը ստիպում է Խրիմեան Հայրիկին՝ Ներսէս Աբեղային իր ազգայնական գործունէութեանց համար ետ կանչել եւ սաստել նրան: Խրիմեան Հայրիկը, ստիպուած, կանչում եւ նշանակում է Ս. Էջմիածնի դիւանապետի պաշտօնին: Ներսէս Աբեղան չի դադարում իր ազգային գործունէութիւնից, որով բողոքում էր ցարական Ռուսաստանի դէմ:*

*Կառավարութիւնը 1907 թուին նրան աքսորում է Ղրիմի Սուրբ Խաչ վանքը: Մելիք Թանգեանը իր կրօնական աստիճանները ստանալով 1912 թուին, որպէս եպիսկոպոս, յետոյ արքեպիսկոպոս, նշանակւում է Ատրպատականի թեմի առաջնորդ, ուր 36 տարի վարում է իր պաշտօնը նուիրումով եւ միշտ կարեկից լինելով ժողովրդին:*

*Սրբազան Հայրը ոչ միայն սիրուել է եւ յարգուել է հայ ժողովրդի կողմից, այլ սիրուած է եղել պարսիկ ժողովրդից, մանաւանդ պետական շրջանակներում: Ունեցել է մեծ հեղինակութիւն պետական բարձր խաւի մօտ: Իրանի վերջին Ղաջար թագաւոր՝ Ահմադ Շահից ստացել է «Շիր օ Խիշիդ» մետալը: Եղել է հայ ժողովրդի պատգամաւորների գլխաւորողը, որ 23 Ապրիլ 1926 թուին ներկայացել են Ռեզա Շահին, շնորհաւորելու համար նրա թագադրութիւնը եւ յանձնելու թագաւորին Իրանահայութեան կողմից պատրաստուած նուէրը: Սրբազան Հայրը եղել է ընթերցողը զանազան հայ եւ օտար լեզուներով տպուած գրքերի եւ թերթերի: Կապ է ունեցել հայերէն թերթերի հետ: Գրել է բազում յօդուածներ:*

*Որպէս իրաւագէտ, հրատարակել է «Հայոց Եկեղեցու Իրաւունքները» գիրքը երկու հատորով, նաեւ գլխաւորել է Իրանահայերի ժառանգական եւ ընտանեկան իրաւունքների կանոնադրութեան կազմելուն, որ ներկայացուել է Իրանական արդարադատութեան մինիստրութեան, որն հաստատուել է 1933 թուին Իրանական պարլամենտի կողմից եւ գործադրուել է Իրանական դատարաններում Իրանահայերի նկատմամբ: Այս յօդուածի հիման վրայ, հայերի ամուսնութեան, ապահարզանի եւ կրօնական բոլոր ծիսակատարութիւնները եւ խնդիրները, ինչպէս ժառանգական իրաւունքների տնօրինութիւնը պատկանում էր հայ իրաւասու մարմիններին:*

*Սրբազան Մելիք Թանգեանը միշտ վերահասու է եղել թեմի հայկական դպրոցներին: Գիւղական շրջաններում հիմնել է դպրոցներ, տեղի պայմանների համեմատ, որ գիւղացի երեխաները գոնէ գրագէտ լինեն: Սրբազանի առաջնորդական շրջանը Ատրպատականում եղել է հայ ժողովրդի համար դժուար եւ ճակատագրական:*

*Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին, թուրք բանակը 1915 թուականին մտնում է Իրան, Ուրմիայի, Սալմաստի, Խոյի, ինչպէս նաեւ Թաւրիզի հայերի մէկ մասը, տաճիկների կոտորածներից խուսափելու համար, դժուարին պայմաններով հասնում է Իրանական Ջուլֆա, Ռուսաց հողը անցնելու համար: Այդ օրերին, Մելիք Թանգեանը հասնում է Ջուլֆա, կապւում է ռուսական բարձր պաշտօնէութեան հետ եւ ռուսների թոյլտուութիւնը ստանալով, հայ փախստականներին իրաւունք է ստանում տեղաւորել Թիֆլիս եւ ռուսական զանազան քաղաքներում եւ աւաններում:*

*1918 թուին, տաճկական բանակը Նուրի փաշայի հրամանատարութեամբ մտնում է Թաւրիզ: Սրբազան Հայրը Թաւրիզաբնակ Տիգրան խան Գորոյեանի օգնութեամբ, որ Ֆրանմասոն էր եւ աստիճանով բարձր, քան ֆրամասոն Էհսան փաշան, Թաւրիզահայութիւնը ազատւում է թալանից եւ կոտորածից: Ի հարկէ տաճիկները շատ շուտ նահանջեցին Թաւրիզից, ուրիշ ճակատում պարտութիւն կրելու պատճառով: Այդ դէպքերին աւելացան Երեւանից մազապուրծ ազատուած հայերը, որոնք Թուրքիայից իրենց հասցնում էին Սալմաստ, Ուրմի եւ Թաւրիզ, ապաւինելով Մելիք Թանգեանին, որն կարգադրում էր նրանց Իրան մնալու եւ գործի անցնելու խնդիրը: Սրանով չի վերջանում Մելիք Թանգեանի ծառայութիւնը: Հայաստանի Առաջին հանրապետութիւնը տապալւում է: Պետութիւնը անցնում է Սովետների ձեռքը 2 Դեկտեմբեր 1920 թուին: Մօտ 14,000 գաղթականներ ապաւինում են Թաւրիզ, որոնց մէջ կային մեծ թւով մտաւորականներ եւ դաշնակցական գործիչներ: Մելիք Թանգեանը սկսում է տեղաւորել նրանց հայերի տներում: Կարգադրում է պետութեան հետ նրանց մնալու խնդիրը: Աշխատում է Թաւրիզում եւ ուրիշ քաղաքներում գործ հայթայթել նրանց համար: Մի քանի ամսից յետոյ, Զանգեզուրը այլեւս չի կարողանում դիմադրել Կարմիր բանակայիններին: Սպարապետ Նժդեհը Թաւրիզի մօտ գտնուող Մուժամբար գիւղը մնալուց յետոյ, գալիս է Թաւրիզ: Այս եւս մեծ դժուարութիւն էր Սրբազանի համար, քանի որ Նժդեհին պահում էր թագնուած, որովհետեւ Սովետները հետապնդում էին նրան:*

*Աստիճանաբար Թաւրիզը խաղաղ է մնում մի քանի տարի: Թաւրիզահայերը իրենց երախտիքն են արտայայտում Մելիք Թանգեանին: 12 Յունիս 1926 թուին, Թաւրիզում տօնում են սրբազան Հօր ծննդեան 60-ամեակը եւ ազգային գործունէութեան 40-ամեակը մեծ շուքով: Այդ տօնակատարութիւնը լինում է Իրանի ուրիշ քաղաքներում եւս: Սովետական Հայաստանի գործակալները հետապնդում են Մելիք Թանգեանին: Աշխատում են տանել Էջմիածին եւ դադրեցնել նրա հայրենասիրական եւ ազգային գործունէութիւնը:*

*Այդ չյաջողուեց հայ ժողովրդի արթուն կեցուածքի շնորհիւ: 1945 թուի Յունիսին, Մելիք Թանգեանը հրաւիրւում է Թեհրան, օծելու համար Սուրբ Աստուածածին եկեղեցին, որ կառուցել էր ազգային բարերար՝ Ռոման Իսայեանը: Օծման արարողութեան ներկայ էին երջանկայիշատակ Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանը, Կիւրեղ Պատրիարք Իսրայէլեանը, Մամբրէ Արք. Սիրունեանը եւ սփիւռքից եկած բարձրաստիճան հոգեւորականներ, որոնք պիտի մեկնէին Ս. Էջմիածին, ներկայ գտնուելու Գէորգ 6րդ Չորեքճեան Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման, Յունիս 29, 1945 թ.: Սրբազան Մելիք Թանգեանը չգնաց Ամենայն Հայոց Կաթողիկոս օծման արարողութեան ներկայ գտնուելու, նկատի առնելով Հայաստանի պետութեան կեցուածքը: 1941 թուին Կարմիր բանակը մտաւ Իրան, կազմուեցին կոմիւնիստական խմբակներ, ինչպէս նաեւ ձախակողմեան հայկական խմբակցութիւնները, Թուդէ եւ Դեմոկրատ անուան տակ: Սրբազան Մելիք Թանգեանը որոշ ճնշումների ենթարկուեց:*

*1945-1946 թուին կազմուեց Իրանի Ատրպէյճանի ինքնակոչ կառավարութիւնը Փիշեվարու դեմոկրատ-կոմունիստ կուսակցութեան կողմից: Այդ կառավարութիւնը մէկ տարուց աւելի կեանք չունեցաւ: Իրանի կառավարութիւնը զօրքով, միջազգային ճնշումի տակ, կրկին գրաւեց Ատրպատականը: Պետական զօրքը եւ վարիչները Թաւրիզը գրաւելուց յետոյ, չափազանց յարգալիր վերաբերմունք ունեցան Սրբազանի նկատմամբ:*

*28 Սեպտեմբեր 1948 թուականին երբ վախճանուեց Սրբազան Մելիք Թանգեանը, կազմակերպուեց աննախընթաց յուղարկաւորութիւն թաղում թէ ազգային եւ թէ պետական գծով: Թաղման արարողութեան, բացի հայ հոծ բազմութեան, մասնակցում էին Թաւրիզի հայ եւ պարսիկ ողջ հասարակութիւնը: Ատրպատականի ընդհանուր զօրահրամանատար մարաջախտ Շահբախտին իր զինուորական շքախմբով, պետական վարիչներ, բանակի փողերախումբը եւ դիւանագիտական ներկայացուցիչներ:*

*Տ. Ներսէս Արքեպիսկոպոս Մելիք Թանգեանի համար գրուած են բազմաթիւ յօդուածներ: Գրուած է «Յուշամատեան, Ներսէս Մելիք Թանգեան Արքեպիսկոպոս» գիրքը, մեծ ծաւալով, Իրանահայ մտաւորական Արսէն Մամեանի միջոցով, որով յիշատակուած է մեր ազգայինների տպաւորութիւնները եւ հանդիպումները Սրբազանի հետ, որ շատ օգտակար է Մելիք Թանգեան Սրբազանին ճանաչելու համար:*


Թէքէեան Մշակութային Միութեան

**ԱՐՇԱԿ ՏԻԳՐԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ**

**2011-2012** Կրթաշրջանի

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Թ.Մ.Մ. Արշակ Տիգրանեան Վարժարանի 2011-2012 կրթաշրջանի արձանագրութիւնները բացուած են:

8 Գալուստ Կիւլպէնկեան Նախամանկապարտէզ (3, 4 տարեկան)

8 Նուպար եւ Տիգրանուհի Միսի-Գէորգեան Մանկապարտէզ (5 տարեկան)

8 Նախակրթարան, Միջնակարգ եւ Բարձրագոյն դասարաններ

8 Համալսարաններու պատրաստող կրթական ծրագիր

8 2010-2011 կրթաշրջանի 16 շրջանաւարտներէն 1 աշակերտ ընդունուած է USC, 3 աշակերտ՝ UCLA, 5 աշակերտ՝ UC Irvine, 3 աշակերտ՝ Cal Poly եւ բոլորն ալ CSUN եւ/կամ CSULA.

8 Ապահով եւ ընտանեկան մաքուր միջավայր

ՆՈՐ ԵՒ ԱՐԺԱՆԱՒՈՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

**$2,000 ԿՐԹԱՆՊԱՍՏ**

Յաւելեալ մանրամասնութիւններու եւ ժամադրութեան համար հեռաձայնել վարժարանի գրասենեակը – (323) 461-4377

Թ.Մ.Մ. Արշակ Տիգրանեան Վարժարանի
յաւելեալ ծանօթութիւններու համար
այցելել վարժարանի կայքէջը – www.dickranianschool.org

ՀԱԼԷՊԱՀԱՅ ԿԵԱՆՔ

# «ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻ ՏԱՐԻ»

***ԱՆԻ ՄԱՐՍԷԼԵԱՆ***

*«Հայ Մանուկը եւ հայեցի Դաստիարակութիւնը» հայ մանուկները հայ ժողովուրդի հոգեհատորներն են, հայ ժողովուրդի ապագան կերտող յոյսն ու ապաւէնն են: Անոնք իրենց անմեղութեամբ կը գերեն մեր հոգիները եւ կ'իմաստաւորեն մեր գոյութիւնը այս աշխարհի վրայ:*

*Մեծի Տանն Կիլիկիոյ հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս 2011 տարին հռչակեց «Հայ Մանուկի Տարի» սոյն նախաձեռնութիւնը խթանեց սփիւռքի բոլոր գաղութները ծրագրելու, մշակելու նախագծեր զանազան ձեռնարկներ, խորհրդակցական երեկոներու եւ հարցազրոյցներու ստեղծելու համար դաստիարակչական ուժեղ համակարգ, որ կը նպաստէ հայ մանուկի կազմաւորման կառոյցին:*

*Հայ մանուկի դաստիարակչական գործընթացին անտարբեր չմնաց հալէպահայ գաղութը յատկապէս երիտասարդ ու զարգացած տարրը, Հալէպի Հայ Համալսարաններու յարաբերական յանձնախումբը (Հ.Բ.Ը.Մ.)ի շէնքի «Անժէլ Քավաֆեան» սրահին մէջ, հովանաւորութեամբ Բերիոյ Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Շահան Եպս. Սարգիսեանի եւ ներկայութեամբ հայ դաստիարակներու (ծնողք, ուսուցիչ, կղերական, հոգեբան) կազմակերպեցին խորհրդակցական գրոյց մը՝*

*«Մանուկը ներկայ ընկերութեան կեանքին մէջ», խորագրով:*

*Հանդիսավար օր. Անի Թաշճեան իր բացման խօսքին մէջ ներկայացուց օրուան խորագիրը ու հայ մանուկի դաստիարակութեան անհրաժեշտութիւնը համաշխարհային հոսանքին դէմ պայքարելու, ապա հրաւիրեց բանախօս գրուցակիցները՝ հոգեբան օր. Անժէլլա Սանճեանը, երկարամեայ տարիներու մանկավարժ մանկապարտէզպանուհի՝ Տիկ. Այտա Մինասեանը եւ Արժ. Տէր Զարեհ Քհնյ. Շաքարեանը:*

*Օր. Անժէլլա Սանճեան իր մասնագիտութեան ընդմէջէն անդրադարձաւ թէ մանուկի դաստիարակութիւնը սկիզբ կ'առնէ մօր արգանդէն եւ զուգահեռ կ'ընթանայ մանուկի աճումին հետ: Ծնողքդպրոց համագործակցելով հարկ է կատարեն ճարտարապետի դեր, կերտելու հայ մանուկի ընկերասիրութեան ազգասիրութեան եւ հայրենասիրութեան հիմքերու վրայ: Ապա խօսք առաւ Տիկ. Այտա Մինասեանը պատասխանելով հայ երիտասարդութիւնը հետաքրքրող հարցերուն, որոնցմէ մին էր «ինչպէ՞ս պէտք է դաստիարակել այսօրուան մանուկը դառնալու ապագայի գիտակից մարդն ու յանձնառու հայրը: Տիկ. Այտա բացայայտեց թէ այսօրուան ընկերութեան պահանջքներն ու պայմանները շատ աւելի տարբեր են քան ինչ որ էին անկէ տարիներ առաջ, սերունդները շատ արագ կը փոխուին դաստիարակութիւնն ալ այլ գիտութիւններու նման ենթակայ է փոփոխութեան, ճարտարապետութեան յառաջացումով համացանցի եւ համակարգիչի մուտքով, հեռատեսիլի եւ հաղորդակցական միջոցներու ներգործումով մարդիկ անդադար խարխաբումի մէջ են ըմբռնելու շրջապատի սրընթաց յառաջխաղացումը, հետեւաբար այս պայմաններէն ելլելով դաստիարակութեան նպատակը պէտք է ըլլայ կեանքի արուեստը սորվեցնել մանուկին նոյնիսկ չափահասին: Ան օժտուած պէտք է ըլլայ ինքնավստահութեան համարձակութեամբ եւ պատասխանատուութեան գիտակցութեամբ:*

*Տիկ. Այտա կոչ ուղղեց բոլոր հայ կրթական մշակներուն որ գիտակից ըլլան իրենց կոչումին գիտնան սորվեցնելու գաղտնիքը, ըլլան համբերատար, արդարամիտ, որդեգրել խաղը որպէս ուսումնական միջոց, իսկ բարձր կարգերու մէջ մղել աշակերտը մտածելու, պրպտելու եւ որոնելու հաւատալով՝ հայ մանուկին ուժին ու կարողութեան ինչպէս նաեւ կապել հայ մանուկն ու պատանին իր հայրենի հողին սերմանելով անոր մէջ ազգասիրութիւնն ու հայրենասիրութիւնը:*

*Դաստիարակչական համակարգը ամբողջացնելու նպատակաւ խօսք առաւ Արժ. Տ. Զարեհ Քհնյ. Շաքարեան: Անդրադառնալով հայ մանուկի կրօնաբարոյական դաստիարակութեան անհրաժեշտութեան, մէջբերեց Արամ Վեհափառ Հայրապետի մտածումը թէ «Անհատի մը կեանքին մէջ մանկութիւնը՝ ճակատագրական հանգրուան մըն է»:*

*Տէր Հայրը լուսարձակի տակ առնելով օրուան նիւթը ներկայացուց մանուկը Աստուածաշունչին ու եկեղեցւոյ կեանքին մէջ. «Կրթէ մանուկը իր ճամբան սկսած ատեն, որպէսզի իր ծերութեան ատեն չխոտորի»: Ապա շարունակեց ըսելով մանուկին հոգեւոր աճումը կը սկսի տունէն: Աստուած կազմեց ընտանիքը որպէսզի ըլլայ այն հաստատութիւնը որ պիտի մարզէ երեխաները քալելու շիտակ ճամբուն մէջ: Աստուածաշունչը ծնողներուն կու տայ կրթութեան եւ հոգեւոր դաստիարակութեան պարտականութիւն, որպէսզի զաւակները դաստիարակուին զԱստուած սիրելով եւ Աստուծոյ ծառայելով: Աւարտին Տէր Հայրը պատասխանեց տրուած հարցերուն:*

*Ձեռնարկի տեւողութեան մերթ ընդ մերթ ցուցադրուեցաւ նախապէս նկարահանուած զանազան կրթօճախներու՝ մանուկներու դպրոցական կեանքէն դրուագներ, ինչպէս նաեւ ուսուցչուհիներու հետ ունեցած հանդիպումներ՝ որոնք իրենց տարիներու փորձառութենէն մեկնած պատասխանած էին «Ի՞նչ է տարբերութիւնը հին եւ նոր սերունդներու միջեւ դաստիարակչական գետնի վրայ» հարցին, ուսուցչուհիներու պատասխանները հետեւեալն էին.*

*Տիկ. Ռիթա Կաղեան Տիքպիքեան «Սահակեան Վարժարան»*

*Նախկին սերունդ ըսելով պիտի անդրադառնամ 10 տարի առաջուայ սերունդին որ աւելի զուսպ էր իր յարաբերական կեանքին մէջ ու աւելի ամօթխած ուսուցչուհիներու հետ վարուելակերպին մէջ, Նոր սերունդը աւելի համարձակ է, գիտակցելով պատժամիջոցներու նուազումին, աւելի անկարգապահ է անընդհատ կը վստահի ծնողքին եւ անձնական ուսուցչուհիներուն, ազատ ժամերը կը նախընտրէ անցնելը համացանցի դիմաց որուն հետեւանքով կը տուժէ դասերը:*

*Տիկ. Քնարիկ Գալայճեան Ղազարեան «Հայկազեան դպրոցի մանկապարտէզպանուհի»*

*Նոր Սերունդին քով կը պակսի պատասխանատուութեան գիտակցութիւնը, վստահած է ծնողքին եւ ուսուցիչին, աշխատանքը չսիրելու պատճառաւ չի համագործակցիր ուսուցիչին հետ, ուսուցիչը տալիք շատ ունի, սակայն ժամանակամիջոցը կարճ է հետեւաբար ծնողքը պէտք է հետապնդէ պզտիկը ուղղէ ու ինքնավստահութիւն ներշնչէ անոր մէջ որպէսզի ինքնուրոյն կատարէ իրեն վստահուած տնային ու դպրոցական պարտականութիւնները:*

*Տիկ. Շողեր Ճելլատեան Տամատեան «Ջաւարեան Վարժարան»*

*Նոր սերունդը կը պահանջէ արդիական եւ ժամանակակից դաստիարակչական միջոցառումներ, մենք ուսուցչուհիներս պարտինք հետեւիլ այս դարու նորութիւններուն եւ կիրարկենք զանոնք մեր դպրոցներէն ներս, որպէսզի դպրոցը դառնայ հայ մանուկին համար հաճելի վայր մը, ուր մեծ հաճոյքով եւ ուրախութեամբ կը ստանայ իր ուսումը, այսպիսով ձերբազատուած կ'ըլլանք այն գաղափարէն թէ հին սերունդի դաստիարակութիւնը աւելի հեշտ էր քան նորը:*

*Օր. Մայտա Գապագեան «Կրթասիրաց Վարժարան»*

*34-ամեայ տարիներու փորձառութենէն վերջ նկատելի է ինձ համար հին եւ նոր սերունդի միջեւ եղած տարբերութիւնը: Նոր սերունդը աւելի անհոգ է եւ անպատասխանատու: Անոր առաջնահերթ նախասիրութիւնն է արդիական խաղերը, ուսումը կը դասէ երկրորդ կամ երրորդ անհրաժեշտութիւն իր կեանքին մէջ:*

*Օր. Մանուշակ Այվազեան «Ղ. Նաճարեան Գ. Կիւլպէնկեան ճեմարան»*

*«Շատ հսկայ տարբերութիւն չեմ տեսներ հին եւ նոր սերունդի միջեւ, ինծի համար նոր սերունդ կամ հին սերունդ չկայ, կայ համարձակ եւ ոչ համարձակ սերունդ: Այսօրուան սերունդը զբաղումի շատ միջոցներով օժտուած է, հետեւաբար ուսուցիչը պէտք է քայլ պահէ իր հետ, զբաղեցնելով զինք իր նախասիրած եւ նախընտրած խաղերով եւ իրագործելով ուսուցման արդիականացած ծրագիրներ: Ուսուցիչը պէտք է ըլլայ մայր, դերասան, ուսուցիչ եւ խաղընկեր պատանին պէտք է գիտնայ տարբերութիւնը ազատութեան եւ անկրթութեան պէտք է գիտակցի թէ ազատութիւնը վերջ կը գտնէ հոն ուր որ կը սկսի ուրիշինը:*

*Օր. Անի Մարսէլեան «Կիլիկեան Ճեմարան»*

*Անկասկած որ տարբերութիւն կայ հին եւ նոր սերունդի միջեւ: Հին սերունդը ջարդէն ճողոպրած մեր նախահայերու զաւակներն ու թոռներն էին, անոնք տեղեակ էին իրենց ծնողներու ցաւալի անցեալէն հետեւաբար կառչած մնացին այն բոլոր առիթներուն որ ընծայուեցաւ իրենց գիտակցելով որ ուսումը միակ միջոցն էր վերակերտելն հայ ժողովուրդին խորտակուած ապագան: Նոր սերունդը դժբախտաբար թէ բարեբախտաբար այս բոլորէն տեղեակ չէ արդիականացած եւ շլացուցիչ խաղամիջոցները գերիշխող եղած են իրենց կեանքին մէջ հակառակ անոր որ ժամանակաշրջան մը վերջ կը գիտակցին թէ սխալ ընթացքին մէջ էին եւ կը զղջան: Մեր պարտականութիւնն է որպէս ծնողք, տնօրէնութիւն, ուսուցիչ ուղղել նոր սերունդը ուսման ճանապարհին եւ դաստիարակել զանոնք հայեցի դաստիարակութեամբ, որպէսզի ապագային հաշուետու չըլլանք մեզի վստահուած հայորդիներուն:*

*Այս շինիչ պատասխաններն ու լուսաբանութիւնները ամբողջացուցին օրուայ նիւթին տեսլականը:*

*Գերշ. Սրբազան հայրը գնահատեց ձեռնարկը յաջողցնող եւ մտայղացումը ունեցող գիտակից հայ համալսարանականներու յանձնախումբը՝ եզրափակեց երեկոն «Պահպանիչ» աղօթքով:*

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**
**«Մասիս» Շաբաթաթերթին**
**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**
**massis2@earthlink.net**

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ**

---

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 for USA**
*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**
*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**
**Name: ------------------------------------------**
**Address: ----------------------------------------**
**City: --------- State:--------- Zip Code:------**
**Country: -------------**
**Tel :----------------------- Fax : -------------------------**

# ԾՆՈՂՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԾ 10 ՀԻՄՆԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ

*Մենք բոլորս ալ կը սիրենք մեր զաւակները, սակայն այսօր, աշխատող ծնողներու ժամանակաշրջանին, ընդհանրապէս կը մոռնանք նկատի առնելու կարեւոր քանի մը կէտեր: Հետեւեալ տողերուն մէջ կը ներկայացնենք 10 հիմնական սխալներ, զորս այսօրուան ծնողները գիտակցաբար թէ անգիտակցաբար կը գործեն:*

*1) Պզտիկները շփացնել.*

*Կասկած չկայ, որ ծնողներ կը սիրեն իրենց երեխաները եւ կ’ուզեն, որ անոնք ունենան այն բոլոր բաները, զորս իրենք իրենց հերթին չեն ունեցած: Սակայն այս արարքը իր գինը ունի:*

*Տասնեակ հազարաւոր լաւ միտումներով մղուած ծնողներ ի վերջոյ հասած են իրենց զաւակները աւրելու աստիճան շփացնելու աստիճանին,, այնքան մը որ պզտիկները ուրախ չէին իրենց բոլոր ունեցածներով: Այս վերաբերմունքը պատճառ կը դառնայ, որ երեխաները բնաւ գոհացում չզգան եւ միշտ աւելին պահանջեն: Պզտիկները շատ անգամներ յաւելեալ խաղալիք մը չէ որ կ’ուզեն, այլ իրենց ծնողներուն հետ անցընելու յաւելեալ ժամեր: Այս ձեւով պէտք է մտածել՝ ինչպէ՞ս անոնք պիտի կարենան կեանքի մէջ յուսախաբութեան պատրաստ ըլլալ կամ սորվին շնորհակալ ըլլալ:*

*2) Անատակ կարգապահութիւն.*

*Երբ ծնողք շատ ծոյլ են իրենց երեխաները ատակ կերպով դաստիարակելու մէջ, անոնք իրենց ստեղծած պզտիկ սատանաները փոխանցած կ’ըլլան ազգականներու, դասընկերներու, ուսուցիչներու եւ ընդհանրապէս շրջապատին: Ճիշդ չէ թոյլ տալ, որ պզտիկները անկարգապահ կերպով վարուին ձեր տան մէջ, որովհետեւ անոնք ճիշդ նոյն ձեւով պիտի վարուին ուրիշներուն տան մէջ: Ընդհակառակը, անոնք նոյնիսկ պէտք է սորված ըլլան աւելի քաղաքավար եւ կիրթ ձեւով վարուիլ՝ իրենց տունէն դուրս: Եթէ պզտիկին ծնողքը չդաստիարակէ զինք, ուրիշ մէկը պիտի փորձէ զայն կատարել, ինչ որ հաւանութիւն պիտի չգտնէ անոնց մօտ:*

*3) Ձախողիլ դպրոցական կեանքին մէջ մասնակցելու.*

*Դպրոցը այն վայրն է, ուր երեխաները, տունէն ետք, ամէնէն երկար ժամանակը կ’անցընեն: Դպրոցը նաեւ այն վայրն է, որ մեծ պատասխանատուութիւն կը կրէ պզտիկներուն կեանքը կոփելու: Արդ, ինչպէ՞ս կրնայ ըլլալ, որ չուզես մասնակցիլ հոն կատարուած աշխատանքներուն: Տարբերութիւն չ’ընէր եթէ այդ դուն ըլլաս կամ ամուսինդ, ընտանիքդ պէտք է ներկայութիւն ունենայ դպրոցին մէջ: Գործդ պատճառաբանութիւն մի բռներ, ի պահանջեալ հարկին արձակուրդ առ: Շուտով պիտի նկատես, որ հոն տրամադրած ժամանակդ լաւապէս օգտագործուած ժամանակ մըն է: Երեխաներուդ ուսուցիչին հետ պէտք է հաղորդակցութիւն մը ստեղծես: Ուսուցիչին համար ալ կարեւոր է տեսնել, որ դուն հետաքրքրուած ես զաւակիդ յառաջընթացով, եւ փոխադարձաբար, ուսուցիչն ալ իր կարգին կրնայ քեզի զգուշացնել զաւակիդ հետ առնչուած որեւէ փոփոխութեան մասին: Հարկ եղած պարագային, ուսուցիչը կրնայ շատ մեծ եւ ազդու դեր խաղալ անոր հետ:*

*4) Միջակութեան ջատագովը ըլլալ.*

*Մինչ մենք բոլորս ալ կը քաջալերենք մեր պզտիկները՝ լաւը կատարելու եւ իրենց ինքնագնահատումը կերտելու, կայ կէտ մը, որ շատ հեռու կը տանի այս պարագային: Պզտիկի մը ինքնագնահատումը կերտելը շատ լաւ բան է, սակայն միջին չափի կատարելագործութիւններու համար հսկայական խրախճանքներ սարքելը անոնց տեսակէտը կը շեղէ իսկական կատարելագործութիւններէն:*

*5) Պզտիկներուն բաւարար պատասխանատուութիւն չտալ.*

*Զաւակներդ պէտք չէ վարձատրութիւն ակնկալեն տան մէջ իրենց կատարած գործերուն համար: Վարձատրական նուէր մը կարելի է նկատի առնել, եթէ յաւելեալ աշխատանք մը ամբողջացնէ: Անոնք պէտք է իրենց բաժինը ստանձնեն որպէս ընտանիքի անդամ: Եթէ անոնք մեծնան առանց բաւարար պատասխանատուութիւն շալկելու, ինչպէ՞ս պիտի ակնկալենք, որ կեանքի մէջ անոնք համալսարանի կամ ասպարէզի մարզերէն ներս յաջողին: Երբ երեխաներդ որոշ տարիքի մը հասնին, ըրէ այնպէս, որ անոնք տան պարտականութիւններէդ մաս մը վերցնեն: Մինչ բոլորս ալ համաձայն ենք, որ մեր զաւակները մեր գերիները չեն, բայց միաժամանակ անոնք յարատեւ արձակուրդի մէջ եղող պանդոկի մէջ բնակողներ ալ չեն:*

*6) Լաւ կողակից չըլլալ.*

*Որպէս ամոլ ինչպէս իրար հետ կը վարուիք շատ կարեւոր է զաւակներուդ՝ յետագային իրենց ծաւալելիք յարաբերութիւններուն գծով, մանաւանդ որպէս չափահաս անձեր: Եթէ կողակիցիդ հետ լաւ ձեւով չես վարուիր կամ իւրաքանչիւր պզտիկ վիճաբանութեան կը պոռչտաք իրար երեսին, դուք ձեր զաւակներուն սորվեցուցաք կ’ըլլաք նոյն ձեւով վերաբերիլ: Պզտիկները կը սորվին ձեզի դիտելով աւելի քան ձեզի մտիկ ընելով:*

*Եթէ կողակիցիդ հետ սիրով եւ յարգանքով վարուիս, երեխաներուդ ցոյց տուած պիտի ըլլաս ընտանիքին արժէքը: Անոնք այսպիսով պիտի զգան, թէ իրենց տունն ու ընտանիքը ապահով վայրն է այս դառն աշխարհին մէջ:*

*7) Անիրատես ակնկալութիւններ սահմանել.*

*Պզտիկներու հետ գործելու ընթացքին անհրաժեշտ է, որ*

*տրամաբանական ակնկալութիւններ դնես իրենց համար, մանաւանդ եթէ անոնց տարիքը շատ պզտիկ է: Եթէ կ’ուզես հաճելի ընթրիքի մը ներկայ գտնուիլ եւ կ’ակնկալես որ 2 տարեկան երեխադ պզտիկ իշխանի մը պէս նստի հոն, դուն շատ մեծ յուսախաբութեան մը առջեւ կը դնես ինքզինքդ: Եւ եթէ, օրինակի համար, կը փափաքիս զաւակդ մարզիկ մը ըլլայ, մինչ ինք հակում ունի սրինգ նուագելու, դուն պէտք է ակնկալութիւններդ վերատեսութեան ենթարկես: Անիրատես ակնկալութիւններ մի ունենար զաւակներուդ նկատմամբ. միշտ պէտք է նկատի առնել անոնց ուրախ պահող ակնկալութիւնները:*

*8) Պզտիկներուն չսորվեցնել*

*Շար.ը էջ 19*

# ՁԱԽԼԻԿՆԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՈՒԿ ԵՆ ԱՄԷՆ ԻՆՉԻ ՄԷՋ

*Նախապէս, ձախլիկ ըլլալը թերութիւն կը համարէին: Ձախլիկ պզտիկները ստիպողաբար աջլիկ կը դարձնէին, որպէսզի երեխային որեւէ միջավայրի մէջ արատաւորի աչքով չնայէին եւ ան ալ այդ հարցով բարդոյթներ չունենար: Սակայն ժամանակակից գիտութիւնը ապացուցեց, որ ձախլիկութիւնը բոլորովին ալ թերութիւն չէ, այլ ապրելակերպ մըն է: Անիկա ոչ սովորոյթ է, ոչ հիւանդութիւն, ոչ ալ մանկավարժական դաստիարակութեան վրիպում եւ չի կրնար սպառնալ անհատին յարմարուէտութեան դէմ: Օրինակ, ձախլիկ երեխան աջ ձեռքի սորվեցնելը կրնայ ջղայնութիւն յառաջացնել անոնց մօտ: Շատ հազուադէպ կը պատահի, որ այս բռնութիւնը դրական արդիւնք տայ. ի վերջոյ, ձախլիկ պզտիկը կը սկսի տիրապետել երկու ձեռքերուն:*

*Ձախլիկներուն ձախ ձեռքի գերադասութիւնը կապուած է ուղեղին հետ, անոնց ուղեղին ձախ կիսագունդը աւելի զարգացած է, ուստի ապացուցուած է, որ ձախլիկները հարկադրաբար աջլիկ դարձնելու պարագային, կը տուժէ ուղեղին աջ կիսագունդը, որ պատասխանատու է զգայարաններու եւ այս պատճառով կրնայ բացասական բազմաթիւ երեւոյթներ ի յայտ գալ, ինչպէս հոգեկան անկայունութիւն, ֆիզիքական զարգացման թուլացում, անփութութիւն, դանդաղկոտութիւն, ախորժակի բացակայութիւն, հոտառութեան սրութիւն եւ տրամադրութեան կտրուկ փոփոխութիւններ:*

*Ձախլիկութիւնը կրնայ յառաջանալ թէ՛ ժառանգութեան հետեւանքով եւ թէ ներարգանդային զարգացման ընթացքին: Երեխաներուն մօտ ձեռքերէն մէկուն առաւելութիւնը կը ձեւաւորուի հիմնականին մէջ անոր 4 տարեկանին: Եթէ այդ տարիքին, երեխային մօտ ձախլիկութիւնը առկայ է եւ ազգականներուն մէջ այս երեւոյթը կայ նոյնպէս, ապա կարելի չէ պայքարիլ անոր համար, մանաւանդ որ գիտնականները յայտնաբերած են, որ ձախլիկներու մօտ նոյնիսկ DNA-ի բոլորակները ձախէն աջ շրջան կ’ընեն եւ ոչ թէ աջէն ձախ, ինչպէս որ է աշխարհի բնակչութեան մեծամասնութեան մօտ:*

*Ժամանակակից գիտնականները ընդհանրապէս եկած են այն եզրակացութեան, որ ձախլիկները առանձնայատուկ են ամէն ինչի մէջ: Անոնց մօտ զգացումի անհաւասարակշռութիւնը, ցասումը, վախը, տրամադրութեան կտրուկ անկումը, խղճահարութիւնը, դիւրազգացութիւնը, զգայունութիւնը եւ անհանդստութեան կամ տագնապի նշանները կը գերակշռեն: Անոնց խօսքը յուզականութեամբ օժտուած եւ շարժումներով հարուստ է, սակայն անոնք դժուարութիւն կ’ունենան գրելու եւ կարդալու: Անոնք անմիջական են, կամակոր, լացկան, իրենց ցանկութիւնները իրականացնելու հարցով հաստատուն են:*

*Ձախլիկներուն հետ մէկ գործէն միւսին անցնումը հեշտութեամբ չի կատարուիր: Անոնք յատկապէս կը դժուարանան արագ գործողութիւններ կատարելու երկու ձեռքերով միաժամանակ, ինչպէս օրինակի համար պարային շարժում կամ մարմնամարզութիւն:*

*Ձախլիկներուն անյարմարաւէտութիւնը յատկապէս նկատելի է դպրոցի նախակրթարանի դասարաններուն մէջ: Անոնց մեծ մասին համար դժուարութիւններ կը յառաջանայ որոշ հմտութիւններու մէջ, ինչպէս գիրը, հաշիւը եւ ընթերցանութիւնը: Անոնք դժուարութեամբ կը յիշեն այբուբենի տառերու յաջորդականութիւնը: Սակայն այս երեւոյթը երբեք չի նշանակեր, թէ անոնք նուազ ընդունակ են: Պարզապէս հարցը այն է, որ կեանքի տարբեր բնագաւառներու մէջ ձախլիկներու յարմարեցումը սովորաբար աւելի դժուար կ’ընթանայ, որովհետեւ անոնք կ’ապրին աջլիկներու համար նախատեսուած աշխարհին մէջ, ուր գրեթէ ամէն ինչ յարմարցուած է աջլիկներու գործունէութեան համար, սկսելով այնպիսի պարզ գործիքներէ, ինչպէս մկրատը, արդուկը, եւայլն: Հակառակ անոր, որ ձախլիկ երեխաներուն մօտ ստեղծագործական տաղանդով օժտուած եւ ոչ-չափանիշային մտածողութիւն ունեցող անհատականութիւնները կը գերակշռեն: Անոնց շարքին յաճախ կարելի է հանդիպիլ գրականագէտներու, լրագրողներու, արուեստի գործիչներու եւ կազմակերպիչներու: Հանրաճանաչ մարդոց մէջ ձախլիկ եղած են Լէօնարտօ Տավինչին, Փապլօ Փիքասոն,*

*Չարլի Չափլինը, Փոլ ՄըՔարթնին, Ֆրանց Քաֆքան, Ֆիտէլ Գասթրօն, Միացեալ Նահանգներու նախագահներուն մէկ մասը եւ ուրիշներ:*

*Վիճակագրական տուեալներով, աշխարհի բնակչութեան մօտ 10 առ հարիւրը, այսինքն՝ 500 միլիոնէն աւելի, ձախլիկ են:*

*Անոնք նոյնիսկ իրենց միջազգային օրը ունին, այդ կը զուգադիպի 13 Օգոստոսին: Օրուան նշման նպատակն է միջազգային հանրութեան ուշադրութիւնը գրաւել ձախլիկներու խնդիրներուն վրայ, յատկապէս արդիւնաբերական սարքաւորումներ արտադրողներու իրազեկ պահել ձախլիկներուն դիմաց գտնուող դժուարութիւններուն մասին: Օրինակ, աջլիկ մեծամասնութեան համար նախագծուած եւ արտադրուած սարքաւորումն երէն օգտուելով, ձախլիկները ստիպուած են կատարել իրենց համար անբնական շարժումներ, որուն պատճառով անոնք ակամայ կ’ենթարկուին ջիղերու եւ մկանային չափազանց լարուածութեան, որուն հետեւանքով, ինչպէս պարզուած է 1991 թուականին Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ կատարուած հետազօտութեան արդիւնքով, արտադրական մահացու դէպքերը աւելի յաճախ կը պատահին ձախլիկներուն մօտ: Ձախլիկներու միջազգային օրուան նշումը իր արդիւնքը տուած է. տարբեր երկիրներու մէջ արդէն ստեղծուած են ընկերութիւններ, որոնք կը զբաղին ձախլիկներու համար յատուկ նախատեսուած իրերու եւ սարքերու արտադրութեամբ:*

*Ի դէպ, ձախլիկութիւնը տղամարդոց մօտ աւելի պատահական է քան կիներուն: Նշենք, որ ձախլիկներ կան նաեւ կենդանիներու մօտ:*

## ՀԱՒԿԻԹԻՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ

1) Հաւկիթը օգտակար է աչքերուն: Ուսումնասիրութեան մը համաձայն, օրական մէկ հատ հաւկիթ ուտելը կրնայ արգիլել դնդերային անկումը, շնորհիւ կարգ մը նիւթերու, ինչպէս լիւթէյին եւ զէքսանթին, որոնք ուրիշ աղբիւրներէ աւելի հաւկիթին միջոցով կը հասնին մեր մարմնին:

2) Այլ ուսումնասիրութեան մը մէջ ի յայտ եկած է, թէ հաւկիթ ուտող անձերուն մօտ cataract-ի յառաջացման հաւանականութիւնը կը նուազի, դարձեալ լիւթէյին եւ զէքսանթին նիւթերուն շնորհիւ:

3) Մէկ հաւկիթը կը պարունակէ 6 կրամ բարձրորակ փրոթէյին եւ 9 տեսակ անհրաժեշտ ամինօ-թթուներ:

4) Ըստ Հարվըրտ համալսարանի առողջապահական բաժնին, յստակ կապ գոյութիւն չունի հաւկիթի սպառման եւ սրտի հիւանդութիւններու միջեւ: Իրականութեան մէջ, հաւկիթի օրինաւոր սպառումը կրնայ արգիլել արեան մակարդումը եւ սրտի տագնապները:

5) Հաւկիթը լաւ աղբիւր է Գոլինի: Մէկ հաւկիթի դեղնուցը մօտաւորապէս 300 միլիկրամ Գոլին կը պարունակէ: Այս նիւթը կարեւոր է ուղեղային, ջղային եւ սիրտ-անօթային համակարգը կանոնաւորելու գծով:

6) Հաւկիթը կը պարունակէ ճարպին լաւ տեսակը: Մէկ հաւկիթը կը պարունակէ 5 կրամ ճարպ եւ միայն 1.5 կրամ վնասակար ճարպ:

7) Նոր ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, հակառակ նախկին համոզումներու, թէ հաւկիթի չափաւոր սպառումը ժխտական ազդեցութիւն չունի քոլեսթրոլին վրայ:

8) Հաւկիթը այն ուտելիքներէն մէկն է, որ բնականաբար D կենսանիւթ կը պարունակէ:

9) Ուսումնասիրութիւններէն մէկուն մէջ ի յայտ եկած է, թէ շաբաթական 6 հաւկիթ ուտող կիներուն մօտ կուրծքի քաղցկեղի վտանգը 44 առ հարիւր նուազած է:

10) Հաւկիթը առողջ մազ եւ եղունգ կը շնորհէ, որովհետեւ մի քանի տեսակ կենսանիւթեր եւ հանքային նիւթեր կը պարունակէ: Շատ անձեր կը զգան, թէ իրենց մազերը շուտ սկսած են երկննալ՝ իրենց սննդականոնին մէջ հաւկիթ աւելցնելէ ետք, մանաւանդ եթէ անոնք նախապէս B12 կենսանիւթ պարունակող ուտելիքներ չէին ուտեր:

## ԲԱՆՋԱՐԵՂԷՆՆԵՐ
## ՕԳՏԱԿԱՐ ՍՏԵՊՂԻՆԸ

Ստեպղինը բանջարեղենների մէջ յատուկ տեղ է գրաւում: Այն իր բաղադրութեան մէջ պարունակում է մեծ քանակութեամբ կարոտին, որն էլ մեր օրգանիզմում վերափոխակերպւում է վիտամին A-ի: Վերջինս էլ մեր օրգանիզմին անհրաժեշտ է նորմալ նիւթափոխանակութեան համար: Այն լաւացնում է եւ «սրում» տեսողութիւնը, օժանդակում է մտքի եւ ֆիզիքական զարգացմանը, բարենպաստ է ազդում մաշկի վրայ, բարձրացնում է իմունիտետը: Եւ ամենակարեւորը՝ իջեցնում է ուռուցքային հիւանդութիւններով հիւանդանալու հաւանականութիւնը:

Կարոտինի քանակը ստեպղինի մէջ 100 անգամ շատ է, քան գետնախնձորի, սպիտակագլուխ կաղամբի, ճակնդեղի, բողկի եւ դդմիկի մէջ: Կարոտինի քանակութեամբ ստեպղինի հետ կարող է «մրցել» միայն կարմիր քաղցր պղպեղը: Ստեպղինի հետ զուգընթաց, կարոտին են պարունակում նաեւ լոլիկը, դդումը, սամիթը, թրթնջուկը, կանաչ սոխը, ազատքեղը , սպանախը: Քանի որ գարնանը՝ վերը նշուած բանջարեղէնները շատ քիչ են, ապա ամէն օր պէտք է օգտագործել ստեպղին:

Քերած ստեպղինից մեր օրգանիզմը իւրացնում է կարոտինի 20%-ը, իսկ խոշոր կտրտած ստեպղինից՝ 5%-ը: Այնպէս որ, աւելի լաւ է ստեպղին քերել մանր անցքեր ունեցող քերիչով: Եթէ քերած ստեպղինը օգտագործենք բուսական կամ կենդանական ճարպի հետ, ինչպէս նաեւ թթուասէրի, ապա օրգանիզմը կ՚իւրացնի կարոտինի մօտ 50%-ը:

Ստեպղինը քերելուց յետոյ անմիջապէս պէտք է օգտագործել, քանի որ կարոտինը անկայուն է լոյսի եւ թթուածնի ազդեցութեանը:

Ստեպղինի արմատապտուղի ստորին մասում կարոտինի քանակը 2-3 անգամ քիչ է, քան միջին եւ գագաթնային մասում: Ստեպղինի միջուկում 2-3 անգամ կարոտինը քիչ է, քան արտաքին շերտերում: Բաց գոյնի ստեպղինը աւելի քիչ կարոտին է պարունակում, քան վառ գոյն ունեցողները: Բացի այդ, այն արմատապտուղները, որոնց ծայրերը սուր են, աւելի քիչ են պարունակում կարոտին, քան կլոր ծայր ունեցողները:

Ծնեբեկի օգտակարութիւնը

Ծնեբեկը իջեցնում է արեան ճնշումը, կարգաւորում սրտի աշխատանքը, դրական է ազդում օրգանիզմի բոլոր օրգան-համակարգերի վրայ:

Ունի որոշակի հանգստացնող յատկութիւն, հակաբորբոքային է: Ծնեբեկը լաւացնում է օրգանիզմի նիւթափոխանակութիւնը եւ արեան կազմը: Շատ օգտակար է լեարդի եւ երիկամների համար: Առանձնապէս համեղ են եւ օգտակար ծնեբեկի երիտասարդ ընձիւղները: Դրանք իրենց կազմի մէջ ունեն վիտամին C, B1, B2, PP եւ կարոտին, հանքային նիւթեր՝ կալիում եւ ծծումբ, ամինաթթուներ՝ ասպարգին, սապոնին եւ բազմաթիւ այլ՝ օրգանիզմի համար օգտակար նիւթեր:

Երիտասարդ ընձիւղների օգտագործումը բարերար է ազդում նեարդային համակարգի վրայ: Սակայն այն մարդիկ, որոնք տառապում են երիկամի հիւանդութիւններով, մեծ քանակութեամբ ծնեբեկ ուտել չի թոյլատրւում:

Ծնեբեկը պէտք է մաքրել սուր դանակով եւ զգոյշ լինել, որպէսզի գլխիկները չվնասուեն: 10-12 հատ ընձիւղիկները պէտք է կապել եւ ստորին մասից հաւասար կտրել: Պէտք է եփել աղաջրի մէջ՝ 15-20 րոպէ, ուժեղ կրակի վրայ:

## ԱՄԱՌՆԱՅԻՆ ՍՆՆԴԱՌՈՒԹԻՒՆ

Ամրան եղանակին որո՞նք են առողջապահական սննդառութեան սկզբունքները եւ ինչպէ՞ս կարելի է չգիրնալ այս եղանակին, երբ ընկերային առիթներու հրաւէրները կը բազմանան եւ ճաշասեղանի շուրջ ընտանեկան երկարատեւ հանդիպումները կը շատնան: Արդարեւ, հետեւեալ տողերուն մէջ կը գտնենք այս առնչութեամբ որոշ ցուցմունքներ եւ բացատրութիւններ:

Կարգ մը մարդոց մօտ այս եղանակին քիչ մը վախ կը նկատենք. անոնք կը սարսափին այդ պատճառով գիրնալէ, նկատի առնելով, որ օդի փոփոխութիւնը ընդհանրապէս կը մղէ սննդառական տարբեր սովորութիւններ որդեգրելու, ըստ եղանակին պահանջներուն: Շատերու սիրտը վախ կը մտնէ այս եղանակին ընթացքին, ըլլան անոնք պատանի աղջիկներ, կիներ եւ նոյնիսկ տղամարդիկ երբեմն: Այս բոլորին համար կը ներկայացնենք մէկ խտացեալ եւ փորձուած խրատ մը՝ կարգ մը յաւելեալ քիլոկրամներէ ձերբազատուեցէ՛ք նախքան ամրան եղանակը մտնելը, որպէսզի կարենաք վայելել այս արեւաշատ եղանակը եւ անոր գեղեցիկ բնութիւնը:

Այս խրատը ընդհանրապէս ի գործ կը դրուի այն անհատներուն կողմէ, որոնք ընկերային աշխոյժ կեանք մը կը վայելեն:

Գործնականապէս, կարելի է մէկ կամ երկու ամիս սննդականոնի հետեւիլ, միաժամանակ դիմելով մարզանքի տարբեր աշխատանքներու: Հոս պահանջուածը միայն կշիռքի վրայ քիլոկրամներ կորսնցնելը չէ, որովհետեւ այս պարագային այդ կորսնցուցած ծանրութիւնը կրնայ վերադառնալ ճաշի որեւէ հրաւէրի մը ընդառաջելով, այլ պահանջուածը չափի փոքրացումն է (պէտք է լաթերը սկսին լայննալու անհատին վրայ), որ կ՚ապացուցէ մարմնէն ճարպերու նուազումը:

Բնականաբար, պէտք է բոլորին յիշեցնել օրական դրութեամբ ջուրի բաւարար քանակ սպառելու կարեւորութիւնը, նկատի առնելով այս եղանակին ընթացքին շատ քրտնելու հաւանականութիւնը: Մանաւանդ կ՚ուզենք ուշադրութիւնը գրաւել ծխողներուն եւ անոնց՝ որոնք պտուղի փոխարէն կը դիմեն անուշեղէններ ուտելու, որովհետեւ նկատելի է, որ այս երկու խմբակներուն մօտ թերացում կայ հեղուկներու սպառման առընչութեամբ: Ուրիշ զգուշացում մըն ալ հարկ է կատարել կըշիռքով մոլի դարձած անձերուն. չըլլա՛յ թէ ջուր խմելէ դադրիք եթէ ձեր ծանրութիւնը քիչ մը աւելնայ, խորհելով որ ջուրն է այդ երեւոյթին պատասխանատուն, որովհետեւ այս տեղեկութիւնը բոլորովին անհիմն է:

Օրական նուազագոյնը 1.5 լիթր ջուրի կարիքը կայ, որպէսզի այս տաք եղանակին հեռու պահենք չորութեան վտանգները:

Իսկ մարզանք կատարելու պարագային, ջուրի սպառման քանակը որոշ չափով պէտք է աւելնայ:

Գալով պտուղի հիւթերուն, անոնք հարուստ են C կենսանիւթով, որ աշխուժութիւն կու տայ մարմնին: Անոնք հարուստ են նաեւ անթի-օքսիտանթներով, որոնք բջիջները կը մղեն վերանորոգման: Սակայն պէտք է ուշադիր ըլլալ նաեւ պտուղի հիւթի սպառման գծով, որովհետեւ անոնք փոր կ՚ուռեցնեն:

Եթէ հեղուկի մեր առօրեայ պահանջքը նուազագոյնը 1.5 լիթր է, ապա կարելի է օրական երկու գաւաթ պտուղի հիւթ խմել (գաւաթը= 240 միլիլիթր), սակայն պայմանով, որ անոր ունեցած ջերմուժի քանակը հաշուել ջերմուժի օրական արտօնուած քանակի հաշիւին հետ: Հոս շատ կարեւոր կէտ մը պէտք է նկատի առնել, այն ալ շաքարին քանակն է, որ այս պարագային պտուղին մէջ գտնուող բնական ֆրուքթոզն է: Այս շաքարին սպառումը կը կրկնապատկէ զայն սպառելու մեր փափաքը եւ անոր հանդէպ մեր ունեցած անհրաժեշտութիւնը: Այս նիւթը շուտով կը բարձրացնէ արեան մէջ ինսուլինի մակարդակը, ինչ որ կը մղէ զայն սպառելու ախորժակին յաւելեալ կերպով թափ տալու: Այս պարագային իտէալ լուծումը կրնայ ըլլալ ջուր խմելը եւ զայն նախընտրելը (պտուղի հիւթ խմելէ առաջ), որովհետեւ այդ մէկը տարրական եւ կենսական է մորթին, երիկամունքներուն եւ մարմնի բոլոր օրկաններուն համար:

Միշտ պէտք է յիշել, որ շաքարով հարուստ տեսականիները չափաւոր քանակութեամբ պէտք է գործածել, ամառ թէ ձմեռ, վայելչակազմութիւնը պահելու համար: Հոս յանձնարարելի են հետեւեալ ըմպելիները.

ԱՄՐԱՆ

- Սառած թէյը, որուն օգուտներուն մասին ժողովուրդին գիտակցութիւնը օր ըստ օրէ կը զարգանայ:
- Թարմ պտուղի հիւթը, իր բոլոր տեսականիներով:
- cranberry-ի հիւթը մանաւանդ, որովհետեւ ան ուրիշներուն նման շաքարի ամբարումը չի քաջալերեր, ինչպէս նաեւ շատ օգտակար կը համարուի մէզի առանցքներուն կապակցութեամբ:

ՁՄՐԱՆ

Խոտերով պատրաստուած տաք ըմպելիները, ինչպէս ծաղիկներու խառնուրդը, կանաչ թէյը (բացասական ազդեցութիւն չ՚ունենար երիկամունքներու պաշտօնին վրայ) եւ սեւ թէյը:

## ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄՆԻՆ ՄԷՋ ԿԱՅ ՄՕՏ 500 ՏԵՍԱԿԻ ՄԱՆՐԷ

Պարզուած է, որ մարդու մարմինը գրեթէ ամբողջութեամբ կազմուած է միկրօօրկանիզմներէ: Սակայն պէտք չէ վախնալ, կը գրէ «Daily Mail»ը. այդ էակները կեանքի օտարածին տարրեր չեն: Թրիլիոնաւոր մանրէներու համար մարդու օրկանիզմը կարծես հարազատ տուն ըլլայ:

Ըստ էութեան՝ միայն մեր տասը տոկոսն է մարդկային, մնացածը՝ մանրէներ են, կը հաւաստիացնէ Իրլանտայի Կորկ ուսումնարանէն Ռոյ Տ. Սլիթըր:

Գիտնականի փոխանցած տուեալներով՝ մարդու մարմնին մէջ կայ մօտ 500 տեսակի մանրէ, որոնց բազմացումով հասուն մարդու օրկանիզմին մէջ միաբջիջ օրկանիզմներու թիւը կը կազմէ մօտ 100 թրիլիոն. օրինակ միայն աղիքներու մէջ կ՚ապրի մօտ երկու քիլոկրամ մանրէ:

Սլիթըրի խօսքերով՝ մանրէները ոչ միայն մեր անբաժանելի մասն են, այլ նաեւ՝ մեր անփոխարինելի օգնականները՝ նպաստելով մեր դիմադրողական համակարգի ամրապնդման, մարսողութեան ու կենսանիւթերու արտադրութեան:

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱԿԱՆԱՏԵՍ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Շարունակուածէջ 13–էն*

*Ծանօթագրութիւններ, ինչը զգալիօրէն կը հեշտացնի հետազօտողների գործը:*

*Փաստագրում բաժնում յատուկ աղիւսակով տրուած է ականատես վերապրողների եւ նրանց հաղորդած վկայութիւնների բնոյթը (ձեռագիր, ձայնագրութիւն, տեսագրութիւն), արխիւային ֆոնդի թիւը, բնագրի լեզուն, վերապրողի անուն-ազգանունը, ծննդեան վայրը (նիւթի հայրենիքը), նիւթի գրանցման վայրը եւ տարեթիւը: Աշխատութիւնը նմանատիպ գործերից չահեկանօրէն տարբերւում է նրանով, որ Անձնանունների ու Տեղանունների ցուցիչներից զատ, իբրեւ նորոյթ կիրառուել է նաեւ բնագրերի Թեմատիկ վերլուծութիւնը, որը տեսանելի ու մատչելի ձեւով հնարաւորութիւն կ՚ընձեռի մասնագէտներին հանրագիտարանի նման խորանալ սկզբնաղբիւրներում առկայ բազմաբնոյթ թեմաներին (օրինակ՝ բնօրրանի նկարագրութիւն, կենցաղ, տեղահանութիւն, բռնագաղթ, ողջակէզ, կոտորած, առեւանգում, թլփատում, իսլամացում, երիտթուրքական դաժանութիւնների աներեւակայելի բազմապիսի ձեւեր, մեծ տէրութիւնների խարդաւանքներ եւ այլն):*

*Աշխատութեան վերջում ներկայացուած են Հայոց ցեղասպանութեան ականատես-վերապրողների եւ նրանց յաջորդ սերունդների Լուսանկարները (288 միաւոր), ըստ իրենց ծննդեան տարեթուերի եւ վայրերի:*

*Աշխատութիւնն ունի վեց լեզուներով Ամփոփումներ (անգլերէն, ֆրանսերէն, գերմաներէն, թրքերէն, ռուսերէն եւ հայերէն), ինչը օտարալեզու ընթերցողներին հնարաւորութիւն կը տայ ծանօթանալ ու պատկերացում կազմել աշխատանքի կարեւորագոյն հիմնադրոյթների մասին:*

*Այս մեծածաւալ աշխատութեան անգլերէնի թարգմանիչներն են՝ Տիգրան Ծուլիկեանը եւ Անահիտ Պողիկեան-Դարբինեանը, իսկ թրքերէնինը՝ Տիգրան Տէր Ողորմիաճեանը – Պետրոս Ջաւիկեանը:*

*Հայերէն եւ անգլերէն հատորների վերջում տեղադրուած է «Սվազլեան գերդաստանի հաւատամքը» վաւերագրական տեսաֆիլմը, որը նուիրուած է 20-րդ դարի ընթացքում Սվազլեան գերդաստանի իրարյաջորդ երեք սերունդների ազգանպաստ եւ հայրենանպաստ գործունէութեանը՝ ընդգրկելով հայ ժողովրդի համար բախտորոշ մի ժամանակաշրջան: Ֆիլմում օգտագործուած են արխիւային բացառիկ արժէք ներկայացնող տեսանիւթեր եւ Հայոց ցեղասպանութեան ականատեսների կենդանի վկայութիւններ: Ֆիլմի կուռ եւ բովանդակալից սցենարի հեղինակն ու ռեժիսորն է ճանաչուած լրագրող, բազմամեայ վաստակի տէր Լաուրա Մինասեանը: Ֆիլմի երաժշտական ձեւաւորողը Կարէն Խառատեանն է: Կարդում է Հայաստանի վաստակաւոր արտիստ Սարգիս Նաճարեանը:*

*Կարեւոր ենք համարում նշել այն հանգամանքը, որ ինքը՝ հեղինակը, հակուած չէ սեփական աշխատանքը գնահատելու իբրեւ լոկ փաստագրական աշխատութիւն, այլ ընգծում է մասնաւորապէս աշխատանքի գործնական-կիրառական ուղղուածութիւնը: Գրքի գիտական ուսումնասիրութեան բաժնում, ներկայացնելով աշխատանքի նպատակը, Վ. Սվազլեանը գրում է. «Ինչպէս ամէն մի յանցագործութիւն բացայայտելիս որոշիչ են վկաների ցուցմունքները, նոյնպէս եւ այս պարագայում պէտք է հենուել նաեւ ականատես վերապրողների վկայութիւնների վրայ, որոնցից իւրաքանչիւրը իրաւաբանական տեսակէտից ապացուցողական նշանակութիւն ունի Հայ Դատի արդարացի լուծման եւ Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործում» (էջ 7): Այսպիսով հեղինակը միանգամայն իրաւացիօրէն Հայոց ցեղասպանութեան ականատես վերապրողներին համարում է այդ յանցագործութեան վկաներ, որոնց հաղորդած ցուցմունք-վկայութիւնները տուեալ պարագայում չափազանց կարեւոր են: Եւ քանի որ ցեղասպանութիւնը միջազգային իրաւունքի տեսակէտից համարւում է մարդկութեան դէմ կատարուած յանցագործութիւն, ապա պէտք է համաձայնուենք հեղինակի այն կարծիքի հետ, որ տուեալ քաղաքական զանգուածային ոճիրի պարագայում իբրեւ վկայ հանդէս է գալիս հենց ինքը՝ տուժող հայ ժողովուրդն, ի դէմս այն ականատես վերապրողների, որոնք իրենց ցուցմունք-վկայութիւններով յստակ մեղադրանք են առաջադրում յանցագործ պետութեանը՝ Օսմանեան կայսրութեան իրաւայաջորդը հանդիսացող Թուրքիայի հանրապետութեանը:*

*Ինքնին հասկանալի է, որ ցուցմունք-վկայութիւն տուողները բաւականին տարեց մարդիկ էին եւ նրանցից շատերն արդէն չկան, հետեւաբար անհնար է չգերագնահատել Վերժինէ Սվազլեանի կատարած անչափ կարեւոր ու շնորհակալ գործը: Հեղինակը փրկել ու յաջորդ սերունդներին փոխանցել, ինչպէս նաեւ տարբեր լեզուներով աշխարհին է ներկայացրել ականատես վերապրողների այս յոյժ կարեւոր ցուցմունք-վկայութիւնները, որով սոյն աշխատութիւնը, յիրաւի, կարելի է համարել Հայոց ցեղասպանութեան միջազգային քրէական գործի այն հատորներից մէկը, որը մի օր կը ներկայացուի միջազգային դատարան եւ կարեւոր հիմք կը դառնայ Հայոց պահանջատիրական դատի արդարացի լուծման համար:*

**ՔԱՋ ՆԱԶԱՐ ՈՒԴԻԴ ԵԹԵՐ ՇՕ**
**Ամէն Կիրակի երեկոյեան**
**ժամը 10:00-ից 12:30**
**Կլէնտէյլի**
**380-րդ կայանից**

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104



## ՄԱՀԱԶԴ



*ԱԶՆԻՒ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ*
*Ծնած Ամման, Յորդանան 1933 – 2011 Լոս Անճելըս*

*Զաւակները՝*
*Տէր եւ տիկ. Գէորգ եւ Ատրինէ Գրիգորեան*
*Տէր եւ տիկ. Գրիգոր եւ Սենեժանա Գրիգորեան եւ զաւակունք*
*Տարօն, Գրիգոր եւ Սրպա Գրիգորեաններ*
*Քոյրերը՝*
*Տէր եւ տիկ. Պարգեւ եւ Ազատուհի Յակոբեան, Լոս Անճելըս*
*Տէր եւ տիկ. Յակոբ եւ Էլիզ Մէնէշեան, Ամման*
*Տիկ Օվսաննա Պետրոսեան, Երուսաղէմ*
*Զարմիկները՝*
*Արտա Յակոբեան, Յակոբ Յակոբեան եւ Սիլվա Յակոբեան եւ զաւակունք*
*Տէր եւ տիկ. Գէորգ եւ Մարա Պալըգեան*
*Պրն. Պարգեւ Պալըգեան*
*Տէր եւ տիկ. Անդրանիկ եւ Սոնա Մէնէշեան եւ զաւակունք*
*Տէր եւ տիկ. Մանուէլ եւ Լենա Մէնէշեան եւ զաւակունք, Ամման*
*Յարութ Մէնէշեան, Երուսաղէմ*
*Տէր եւ տիկ. Սարգիս եւ Լուսին Գարատանեան, Հալէպ*
*Տէր եւ տիկ. Վազգէն եւ Սոնա Մէնէշեան, Ամման*
*Օրդ. Մարալ Մէնէշեան, Ամման*
*Տէր եւ տիկ. Գէորգ եւ Վարդուհի Գրիգորեան, Պէյրութ*
*Տէր եւ տիկ. Սարգիս եւ Զարիկ Գրիգորեան, Պէյրութ*
*Տիկ. Մարուժան Սերբեգեան եւ զաւակունք, Պէյրութ*
*Տիկ. Սիրվարդ Պայրամեան եւ զաւակունք, Պէյրութ*
*Տէր եւ տիկ. Յարութիւն եւ Կրէթա Գրիգորեան եւ զաւակունք, Պէյրութ*
*Տիկ. Վիքթորիա Գրիգորեան եւ զաւակունք*
*Տէր եւ տիկ. Սարգիս եւ Սիւզի Գրիգորեան եւ զաւակունք, Մոնթրէալ*
*Տիկ. Աննա Հէքիմեան եւ զաւակունք, Լոս Անճելըս*
*Տիկ. Հայկուհի Մելքոնեան եւ զաւակունք, Լոս Անճելըս*
*եւ համայն հարազատներն ու ազգականները*

*կը գուժեն մահը իրենց սիրեցեալ մօր, քրոջ, մեծ մօր, զոքանչ մօր եւ հարազատին մահը, որ տեղի ունեցաւ Երկուշաբթի Յունիս 13, 2011–ին, Լոս Անճելըսի մէջ:*

*Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Յունիսի 18–ին, 2011, առաւօտեան ժամը 10–ին, Սրբ. Պետրոս Եկեղեցւոյ մէջ, Վէն Նայզ, Քալիֆորնիա, իսկ թաղման արարողութիւնը, Ֆորեսթ Լօն, Պըրպէնք:*

*Արարողութիւնէն ետք հոգեճաշ պիտի սպասարկուի Րընէսանս ճաշարանին մէջ,* RENAISSANCE RESTAURANT 1236 S. Central Ave. Glendale, CA 91204

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԱԶՆԻՒ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ մահուան տխուր առթիւ «Մասիս» Շաբաթաթերթի վարչութիւնը խորին ցաւակցութիւններ կը յայտնէ հանգուցեալի զաւակներուն եւ համայն հարազատներուն ի մասնաւորի Տէր եւ տիկ. Գէորգ Գրիգորեանին եւ Տէր եւ տիկ. Գրիգոր Գրիգորեանին:*


## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
**(818) 246-0125**

| | |
|---|---|
| Վարձման գներն են՝ | |
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |


## ԾՆՈՂՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԾ 10 ՀԻՄՆԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ

*Շարունակուած էջ 16–էն*

*իրենք իրենց հոգ տանիլ.*

*Բազմաթիւ ծնողներ հակում ունին գոհացնելու պզտիկին իւրաքանչիւր պէտքը, այսպիսով յապաւելով չափահաս դառնալէ ետք աշխատանքի կարեւորութեան եւ անկախ դառնալու արժէքը գիտնալը: Այսօրուան պզտիկները կ'ակնկալեն, որ ամէն ինչ կատարուած եւ պատրաստ ըլլայ իրենց համար: Աշխատանք մը անձամբ կատարելը սորվեցնելը չի նշանակեր, թէ դուն նուազ կը սիրես իրենց, այլ կը նշանակէ թէ շատ կը սիրես իրենց:*

*9) Կերպարներ մի պարտադրեր պզտիկներուդ.*

*Թոյլ տուր որ երեխաները երեխայ ըլլան, իրենց մանկութիւնը ապրին: Ծնողներ պէտք չէ իրենց կերպարները կամ չափահասներու չափանիշեր պարտադրեն իրենց զաւակներուն: Քու ցանկութիւններդ զաւակներուդ սորվեցնելը շատ լաւ բան է, բայց թոյլ տուր, որ անոնք մեծնան եւ ըլլան այն ինչ որ իրե՛նք կը փափաքին:*

*10) Հետեւող եւ հետապնդող չըլլալ.*

*Երբ պզտիկներուդ ըսես, թէ դրացիներուն դուռին պատին եթէ գծեն պիտի պատժես իրենց, նախընտրելի է հետեւող ըլլաս այս հարցին: Դժբախտաբար, պատիժներու կամ խոստումներու հարցը հետապնդելը կեանքդ քիչ մը կը դժուարացնէ, բայց վստահութիւն կերտելը ամէնէն կարեւոր բաժինն է այս հարցին: Եթէ խօսքիդ մէջ անկեղծ չես եւ զանոնք գործի չես վերածեր, պզտիկներդ քու բոլոր ըսածներդ պարզապէս խօսք պիտի համարեն: Հոն է, որ իսկական խնդիրին կը հանդիպիս, եւ ի վերջոյ պզտիկներդ կը սկսին չի վստահիլ իրենց ծնողքին խօսքերուն:*

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

*Մեր աշխատակիցներէն կը խնդրուի նկատի առնել հետեւեալ կէտերը.*

*Մեզ առաքուած յօդուածները եւ թղթակցութիւնները գրել թուղթի մէկ էջին վրայ եւ հնարաւորութեան պարագային մեքենագրուած:*

*Խմբագրութիւնը իրեն կը վերապահէ նիւթերու կրճատումները եւ մասնակի ոճային փոփոխութիւնները:*

*Մեզ առաքուող գրութիւնները պիտի համընկնեն մեր տեսակէտներու եւ թերթիս ուղղութեան հետ:*

*Յօդուածագիրները պարտաւորութիւն ունին նշելու իրենց հասցէն եւ հեռախօսի համարները, այլապէս գրութիւնները նկատի չեն առնուիր:*

*Յօդուածները եւ թղթակցութիւնները խմբագրութեանս հասցնել իւրաքանչիւր շաբաթուայ Երկուշաբթի օրը:*

*«Մասիս»*


## ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**
**1060 N. ALLEN AVE. PASADENA**

**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԵՌԱՁԱՅՆԵԼ**
**(626) 797-7680**

**REQUEST FOR PROPOSALS (RFP# 7551) DISPOSITION PROJECT BASED VOUCHER ("PBV") PROGRAM**

**The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified developers, including HACLA's subsidiary, for the Project-Based Voucher (PBV) Program. Through this RFP, the Authority will make available up to a maximum of 455 PBVs for projects which directly assign them to existing housing developments principally to serve low-income elderly and/or disabled occupants. Copies of the RFP may be obtained beginning May 23, 2011 online at www.hacla.org/ps. Proposals will be accepted at 2600 Wilshire Blvd., #3100, Los Angeles, CA 90057, until 2:00 P.M., June 24, 2011.**

6/2, 6/9/11
CNS-2105555#
MASSIS WEEKLY

**INVITATION FOR BIDS (IFB) NO. 1708 THE ABATEMENT, DEMOLITION AND DISPOSAL OF SEVEN (7) ABANDONED BUILDING STRUCTURES AT 9901 S. ALAMEDA STREET LOS ANGELES, CA 90002**

**The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for The Abatement, Demolition and Disposal of Seven (7) Abandoned Building Structures at 9901 S. Alameda Street. Los Angeles, CA 90002. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/cgs Bids will be accepted at 2600 Wilshire Blvd, #3100, Los Angeles, CA 90057, until 2:00 p.m. (local time), July 1, 2011.**

6/9, 6/16/11
CNS-2111422#
MASSIS WEEKLY


Everyday Low Prices!
MISSION Wine & Spirits
Southern California's Premier Wine & Spirits Superstore
3 LOCATIONS TO SERVE YOU
GLENDALE
825 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91202
(818) 242-0683 • Mon-Sat. 9AM-8PM • Sunday 10AM - 4PM
PASADENA
1785 E Washington Blvd., Pasadena, CA 91104
(626) 794-7026 • Mon-Sat. 9AM - 8PM
SHERMAN OAKS
13654 Burbank Blvd., Sherman Oaks, CA 91401
(818) 785-6529 • Mon-Sat. 9AM - 8PM
GREY GOOSE VODKA ALL FLAVORS $21.99
ARARAT 3 YR ARMENIAN BRANDY $12.99
BELUGA NOBLE RUSSIAN VODKA $22.99
Dewar's "White Label" 1.75L $24.99
roberto cavalli VODKA 1.75L $49.99
CÎROC VODKA ALL FLAVORS $17.99
BACARDI LIGHT OR GOLD $8.99
PUTINKA LIMITED EDITION $22.99
JOHNNIE WALKER BLUE LABEL $119.99
CHIVAS REGAL 12 BLENDED SCOTCH WHISKY $15.99
SKYY VODKA ALL FLAVORS $8.99
STOLICHNAYA RUSSIAN VODKA 1.75L $18.99
TEQUILA CAZADORES BLANCO OR REPOSADO $19.99
Ketel One VODKA $16.99
Hennessy COGNAC VS $19.99
TEQUILA Don Julio 1942 $79.99
Tsar Alexander I VSOP COGNAC $19.99
TEQUILA PATRÓN SILVER $31.99
El Massaya ARAK $20.99
NOY 7 YR ARMENIAN BRANDY $19.99
*This ad expires on 06/18/11 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice.
• Ad prices may remain in effect longer than the time period indicated • All items are 750ml in size unless specified.